

Արքուր Արմին  
(Արքուր Բաբայան)

# ԱՌԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԻՄԱԳՐՈՒՅԹՆԵՐ

(ԻՆՉՊԻՍԻ՝ ՀԱՅՐԵՆԻՔ Է ՑԱՆԿԱՆՈՒՄ ՈՒՆԵՆԱԼ  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ)



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Երևան – 2021թ.

ՀՏԴ 321.01:351:338

ԳՄԴ 66.033.1+65.05

Ա 868

## Հեղինակ՝ Արթուր Արմին (Արթուր Բաբայան)

Տնտեսագիտական մասով խմբագիր՝ Թաթուլ Մանասերյան

Խմբագիրներ՝ Հրաչիկ Հակոբջանյան, Արամ Գաբրիելյան

Արթուր Արմին

Ա 868 ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱՐՈՒՅԹՆԵՐ

(ԻՆՉՊԻՍԻ՝ ՀԱՅՐԵՆԻՔ Է ՑԱՆԿԱՆՈՒՄ ՈՒՆԵՆԱԼ ԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ)

/ Արթուր Արմին.- Եր.: Հեղ. երատ., 12/2021.- 118 էջ:

Գրքում սահմանված են ինքնիշխան ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կառուցելու այն հիմնադրույթներն ու դրանց բացատրությունները, որոնց հիմքով, իրականում, իշխանությունը կարող է պատկանել ժողովրդին:

Գիրքը նախատեսված է թե՛ քաղաքական մտավորականության,  
թե՛ լայն հասարակության համար:

ՀՏԴ 321.01:351:338

ԳՄԴ 66.033.1+65.05

ISBN 978-9939-0-3877-3

© Բաբայան Արթուր, 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ	5
Ազգային պետության չորս անբեկանելի սկզբունքները	9
<b>ԳԼՈՒԽ Ա</b>	
Ազգային գաղափարախոսություն, մշակույթ և դաստիարակություն	15
<b>ԳԼՈՒԽ Բ</b>	
Հայաստան-Սփյուռք	23
<b>ԳԼՈՒԽ Գ</b>	
Ազգային պետություն և տնտեսական կացութաձևներ	31
Ազգային կորպորատիվիզմ	42
Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ	46
Հանրային-մասնավոր՝ խառն համարված ձեռնարկություններ	51
Համապետական գյուղկոռոպերացիա	55
Փոքր և միջին բիզնես	60
Ազգային պետություն և խոշոր կապիտալ	61
Ազգային զարգացման համահայկական բանկ	65
<b>ԳԼՈՒԽ Դ</b>	
ԱՇԽԱՐՀԱՋՈՂ՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ հայեցակարգ	71
<b>ԳԼՈՒԽ Ե</b>	
ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կառուցվածք. իշխանության հինգ թևերը	79
Օրենսդիր իշխանություն	91
Գործադիր իշխանություն և կառուցվածք	99
Դատական համակարգ և կառուցվածք	100
Կենտրոնական բանկ	101
Չորրորդ իշխանություն	102
<b>ԳԼՈՒԽ Զ</b>	
ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ և միջազգային իրավունք	105
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՆՈՒԹՅՈՒՆ շարժման մասին	109

## ՆԱԽԱԲԱՆ



- Ինչպիսի՞ հայրենիք կունենանք վաղը:
- Ինչպիսին, որ կառուցվում է այսօր  
մեր մտքի և հոգու մեջ:

**Գարեգին Նժդեհ**



**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ** կարգախոսը կամ **ազգային ուժեր** եզրույթը վերջին տարիներին շատերն են օգտագործում՝ այն շփոթելով հայրենասիրության հետ, որը գաղափարական ազգայնականի համար պետք է լինի լոկ անհրաժեշտ նախապայման: Թե այդ անվանումների տակ ի՞նչ են հասկանում կամ արդյո՞ք նման անվանումներն օգտագործողներն ազգայինի գաղափարակիրներ են, և կամ մեզ համար ինչպիսի՞ն պետք է լինի այդ նորը՝ **ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**. շատերի համար հստակ չէ, քանի որ մեր հայ տեսաբանների կողմից ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ անհրաժեշտ հիմնադրույթները սահմանված չեն եղել: Ցավոք, հայ մտավորականությունը ՀՀ անկախության 30 տարիների ընթացքում նաև չի ներկայացրել ամենակարևոր հիմնարար հարցադրում՝ **ԻՆՉՈՒՄԻ՞ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ՑԱՆԿԱՆՈՒՄ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ**: Ինչպիսի՞ համակարգված պետական կառույց է անհրաժեշտ, որտեղ թե՛ անհատ քաղաքացին, թե՛ երկրի ողջ բնակչությունն իրեն զգա հարմարավետ՝ կարողանա ազատ ու լիարժեք ինքնարտահայտվել ու արարել, ինքն իրեն իր երկրի տե՛ ըր համարել:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ հայեցակարգն ունի գաղափարական, տնտեսական, իրավական ու համակարգային հստակ չափորոշիչներ և հնարավոր չէ անտեսելով այդ հիմնադրույթային հրամայականները՝ այս կամ այն քաղաքականությունն ընդունել որպես ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կառուցելու հայեցակարգ կամ ցանկություն: Ազգային գաղափարաբանությամբ ազգային պետությունը նախ պետք է ունենա համապատասխան տնտեսական կացութաձև և ազգային ժողովրդավարությանը համապատասխանող կառավարման ինստիտուցիոնալ համակարգ, որոնց դեպքում լիարժեքորեն արտահայտվում է ԱԶԳԻ հավաքական կամքը:

Թեև ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ լինի դա թեոկրատական, ավտորիտար, բռնապետական կամ ժողովրդավարական, համարվում է ազգի կամ ժողովրդի քաղաքակրթական կազմակերպվածության բարձրագույն ձևը, սակայն ՊԵՏՈՒԹՅԱՆ ճշգրիտ սահ-

մանման վերաբերյալ ակադեմիական կոնսենսուս (համաձայնություն) չկա<sup>1</sup>: Ամենատարածված սահմանումը, որը պատկանում է Մաք Վեբերին, հետևյալն է՝ «*ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ որոշակի տարածում պարտադիր կենտրոնացված կառավարությամբ քաղաքական կազմակերպություն է, որն այդ տարածում հաստատում է լեզիտիմ ուժի օգտագործման մենաշնորհը»<sup>2</sup>: Հստ ՊԵՏՈՒԹՅԱՆ մեկ այլ ընդունված սահմանման, որը տրվել է պետությունների իրավունքների և պարտականությունների Մոնտեվիդյոյի 1933 թվականի կոնվենցիայում՝ «*Պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ պետք է ունենա հետևյալ որակավորումները՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն»<sup>3</sup>: Մասնագիտական գրականության մեջ նաև առանձնացվում է պետության հետևյալ սահմանումը՝ «*Պետությունը հասարակության քաղաքական իշխանության հատուկ կազմակերպություն է, որն իր տրամադրության տակ ունի հարկադրանքի հատուկ գործիք և արտահայտում է իշխող դասակարգի կամ ամբողջ ժողովրդի կամքն ու հետաքրքրությունները»<sup>4</sup>:***

Իրականության մեջ, հաճախ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կոչվող կառավարման գործիքն ի վերջո դառնում է վարչական և ֆինանսաքաղաքական ԷԼԻՏԱՅԻ ազդեցության լծակը կամ սեփականությունը, քանի որ երկրի հիմնական հարստությունների բնական պաշարների և ռազմավարական բացառիկ նշանակության միավորների սեփականության հիմքով է որոշվում, թե ըստ երթյան պետության կառավարման գործիքն ում է պատկանում: Մեր համոզմամբ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ պետք է լինի ՀԱՆՐԱՅԻՆ պետություն, և ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ մեջ ԱԶԳԸ (ժողովուրդը)<sup>5</sup>

<sup>1</sup> Cudworth et al., 2007: p. 1. *The concept of statehood and the European Union - GUPEA.*

<sup>2</sup> Max Weber, *Economy and Society*. 2008: p. 54, Archived 15 May 2016 at the Wayback Machine.

<sup>3</sup> Article 1 of the Montevideo Convention. Montevideo convention on the rights and duties of states, <http://www.taiwandoctrines.org/montevideo01.html>, (23.06.2016).

<sup>4</sup> Общая теория права и государства: Учебник. Под ред. Лазарева В. В. - М., 1994. — С.23.

<sup>5</sup> **ԺՈՂՈՎՈՒՐԴ** - Որոշակի տարածում գտնվող այն հասարակությունը կամ հավաքականությունը, որն ունի տնտեսական և հասարակական կյանքի ժամանակավոր ընդհանուրություն, ինչպես նաև լեզվական իմացության ընդհանրություն, կոչվում է ԺՈՂՈՎՈՒՐԴ (Ա. Արմին, «Արևի լեռան տիեզերական գաղափարանությունը», 2011թ., էջ 46):

**ԱԶԳ** - Բնության մեջ կայացած այն հավաքականությունը, որն ունի ընդհանուր պատմություն, գենոտիպի ընդհանրություն, և որպես էրնու պատմական որոշակի ժամանակահատվածում ու որոշակի տարածում լիարժեք ձևավորել է իր լեզուն, մշակույթը, իր հոգեբանական առանձնահատկությունները որպես ընդհանրական տիպական նկարագիր ու օժուված է իր տեսակի ինքնության գիտակցությամբ, կոչվում է՝ ԱՇԳ (Ա. Արմին, նույն

պետք է հանդես գա ոչ թե որպես ՕԲՅԵԿՏ և ձևականորեն՝ արդեն ընդունված ընտրական համակարգով՝ 5 տարին մեկ իր «մասնակցի» իշխանության ձևավորման գործնթացին ու դա համարվի ժողովրդավարություն, այլ լինի ՍՈՒԲՅԵԿՏ՝ երկրի հիմնական հարստությունների սեփականատերը, ինչպես նաև իշխանության թե՛ ձևավորողը, թե՛ մասնակիցն ու վերահսկողը: Ահա միայն նման տնտեսաքաղաքական համակարգի ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ է հնարավոր հաստատելիրական ժողովրդավարություն, որտեղ նաև մասնավոր սեկտորը պետք է լինի լիարժեք պաշտպանված և ունենա իր անհրաժեշտ և ուրույն դերակատարությունը:

Ազգային պետության գաղափարախոսությամբ՝ ազգային պետության մեջ ամենամեծ արժեքը պետք է լինի հայ մարդը և էթնոսի վերարտադրությունն ապահովող ընտանիքը, նրա անվտանգությունն ու բարեկեցությունը, էթնոսի ինքատիալ մշակույթի և լեզվի զարգացումն ու գոյապահպանությունը:

Ազգային պետության մեջ, որպես առանցքային սկզբունք, պետք է գործի ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ է ԺՈՂՈՎՐԴԻՆ հայեցակարգը, որը նախ և առաջ նշանակում է՝ ա) քաղաքացիական հարթակը պետք է ստանձնի պետության ներքին ու արտաքին քաղաքականության պատվիրատուի դերը, իսկ պետությունը՝ կատարո՞ղի դերը, բ) հո՞ղ, օ՞ղ, ջո՞ւրը, բնական պաշարները և երկրի ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորները պետք է լինեն ազգային սեփականություն:

Մարդը լինելով բնության՝ իր միջավայրի անքակտելի մասը, իր գոյատևման և կենսագործունեության համար ունի իր միջավայրի բնական ռեսուրսների օգտագործման անհրաժեշտությունն ու իրավունքը:

«Քաղաքացիական սեփականությունը որպես իդեալական բաժնեմաս, իր բնույթից ելնելով, չի կարող առանձնացվել ու դուրս բերվել բոլոր քաղաքացիների ընդհանուր համատեղ սեփականությունից ու որևէ գործարքի առարկա լինել: Այն կրում է անձնավորված, սակայն անօտարելի բնույթ և պատկանում է քաղաքացուն իր ծննդյան օրվանից մինչև մահ» (ՈԴ ԳԱ ակադեմիկոս Վլադիկ Ներեսյանց):

Հաշվի առնելով նշված այս հիմնարար սկզբունքները՝ մենք կարող ենք կյանքի կոչել ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ հետևյալ սահմանումը:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ որոշակի սահմանագծված տարածքի վրա էթնիկ ընդհանուրությամբ ստեղծված հասարակական-քաղաքական կառույց է, որն ապահովում է տվյալ երկրի բնական ռեսուրսների և երկրի ռազմավարական բացառիկ տեսակի ինքնության գիտակցությամբ, կոչվում է՝ ԱՇԳ (Ա. Արմին, նույն


նշանակության տնտեսական միավորների նկատմամբ իր քաղաքացիների հավասարաշափ և անօտարելի սեփականության իրավունքն ու շահույթը, իրականացնում է հասարակության բոլոր անդամների իրավունքների ու պարտավորությունների հավասարությունը, և հասարակությունը կազմող սոցիալական բոլոր դասերի ու խավերի շահերի պաշտպանությունն իրականացնելով՝ երաշխավորում է նրանց ինստիտուցիոնալ ներկայացչությունը պետության քաղաքականության մշակման ատյաններում՝ հաստատելով նրանց կողմից սահմանած իրավական կանոնակարգը և հարկադրանք կիրառելու օրինական իրավունքը:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ վերևում բերված սահմանումն իրենում ներառում է՝ թե՛ մարդու և հասարակության անօտարելի իրավունքն իր միջավայրի՝ բնական ռեսուրսների և պետության ռազմավարական բացառիկ նշանակության միավորների նկատմամբ՝ բացառելով դրանց նկատմամբ կլանային որևէ համակարգի հրարավորություն, թե՛ գործիական՝ առանցքային է դարձնում ազգային պետության սուվերենության և իրական ժողովրդավարության սկզբունքները:


Սույն գրքում ներկայացված ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ հիմնադրույթները Հայաստանի Հանրապետության քաղաքացու շահերի և իրավունքների մասին են, որոնք հնարավոր է իրականացնել միայն համակարգային փոփոխությունների հիմքով: Եվ գաղափարական, իրավական ու տնտեսաքաղաքական համակարգային փոփոխություններն այն անհրաժեշտ պայմաններն են, որոնց իրականացումով է հնարավոր կառուցել մեր ժողովրդի ապագայի հավաքական բաղդանքը: Ուստի համաշխարհային փորձից ու հազարամյակների մեր պատմական անցյալի ձեռքբերումներից լավագույնը վերցնելով՝ պետք էր նաև մտածել ստեղծել նորը՝ **տղնտեսական կացութաձևի և կառավարման կառուցվածքի ինքնատիպ ու առաջնային այն համակարգը**, որը Հայաստանի Հանրապետությունը կարող է վերակերտել որպես հզոր, ազգային-ժողովրդավարական և աշխարհաքաղաքական նոր մարտահրավերներին պատրաստ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

Ինչո՞ւ միայն ՀԻՄԱԿԴՐՈՒՅԹՆԵՐ. սույն գրքի նպատակը՝ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կառուցելու ուղեցույցային հիմնադրույթների ներկայացումն է:

## ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ԱՆԲԵԿԱՆԵԼԻ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԸ



**Ազգային գաղափարախոսությունը**  
**մեկ ազգի գերապատվության քարոզը չէ մյուսների**  
**նկատմամբ, այլ բնության օրինաչափությամբ՝**  
**ազգային տեսակների բազմազանության,**  
**նրանց գոյապահպանման ու զարգացման**  
**գաղափարաբանությունն է, քանի որ**  
**համամարդկային քաղաքակրթությունը ձևավորվում է**  
**ազգային տեսակների ինքնատիպ հոգևոր-մշակութային**  
**ներդրումներով:**



**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ որոշակի սահմանագծված տարածքի վրա էթնիկ ընդիմանությամբ ստեղծված հասարակական-քաղաքական կառույց է, որն ապահովում է տվյալ երկրի բնական ռեսուրսների և երկրի ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորների նկատմամբ իր քաղաքացիների հավասարաշափ և անօտարելի սեփականության իրավունքն ու շահույթը, իրականացնում է հասարակության բոլոր անդամների իրավունքների ու պարտավորությունների հավասարությունը, և հասարակությունը կազմող սոցիալական բոլոր դասերի ու խավերի շահերի պաշտպանությունն իրականացնելով՝ երաշխավորում է նրանց ինստիտուցիոնալ ներկայացչությունը պետության քաղաքականության մշակման ատյաններում՝ հաստատելով նրանց կողմից սահմանած իրավական կանոնակարգը և հարկադրանք կիրառելու օրինական իրավունքը:**

#### **ՄԿՋԲՈՒՆՔ ԱՌԱՋԻՆ**

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ համար անհրաժեշտ է, որ պետության պաշտոնական գաղափարախոսությունը լինի ազգային գաղափարաբանությունը:**

Ազգային պետության մեջ ամենամեծ արժեքը պետք է լինի հայ մարդը և էթնոսի վերաբերությունն ապահովող ընտանիքը, նրա անվտանգությունն ու բարեկեցությունը, էթնոսի ինքատիպ մշակույթի և լեզվի զարգացումն ու գոյապահպանությունը:

Ազգային գաղափարախոսությունը մեկ ազգի գերապատվության քարոզը չէ մյուսների նկատմամբ, այլ բնության օրինաչափությամբ՝ ազգային տեսակների բազմազանության, նրանց գոյապահպանման ու զարգացման գաղափարաբանությունն է, քանի որ համամարդկային քաղաքակրթությունը ձևավորվում է ազգային տեսակների ինքնատիպ հոգևոր-մշակութային ներդրումներով:

Առանց ազգային գաղափարախոսության չի կարող լինել ազգային պետություն: Որևէ քաղաքական ուժ չի կարող ինքն իրեն հորջոշել ԱԶԳԱՅԻՆ՝ առանց ազգային գաղափարաբանության, որտեղ առանցքային է Նժդեհի ուսմունքը:

#### **ՄԿՋԲՈՒՆՔ ԵՐԿՐՈՐԴ**

**— ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ունենալու համար անհրաժեշտ է իրականացնել ազգային ինքնության գիտակցությամբ ու ազգային արժեքներ կրող նոր սերնդի դաստիարակություն: Առանց ազգային դաստիարակություն ու հոգեկերտվածք ունեցող հասարակության, ազգային պետություն չի կարող կայանալ: Այսինքն, ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ հիմնական հենարան-առանցքը ազգային արժեքներ կրող ու ազգային գաղափարաբանության կարևորությունը գիտակցող հայ մարդն է:**

«ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԱՀԱՌ ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԽԱ-  
ՐԻՍԽԸ» (Գարեգին Նժեկի):

#### ՄԿՋԲՈՒՆՔ ԵՐՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ հայեցակարգը ԲԱՑԱՌՈՒՄ է որևէ օտար պետու-  
թյան կամ որևէ արտաքին ուժերի ՎԱՍԱԼԸ լինելու կամ որևէ դաշնակցի վրա  
ՀՈՒՅՍ դնելու տարբերակը:

Այն հասարակությունը, որը տառապում է հույսն օտարի վրա դնելու վտան-  
գավոր ախտով՝ բարձիթողի դաստիարակությամբ ծովլ ու ստրկամիտ է և չունի  
հավաքական պետականամետ հոգեկերտվածք ու մտածողություն:

Միջազգային քաղաքականության մեջ չկա՞ն բարեկամներ, կան միայն շահեր:

Նժեկիան՝ «Միայն վճռական միայնակը կարող է ունենալ դաշնակիցներ» հա-  
յեցակարգը պետք է առանցքային լինի ազգային պետության գաղափարաբանու-  
թյան մեջ: Դետք է վե՛րջ տրվի մեր հասարակության հոգեբանության մեջ արմա-  
տացած և Հայաստանի համար հազարամյակներով տարված «Արևմո՞ւտք, թե՞ Արե-  
վելք» կործանիչ քաղաքականությանը:

#### ՄԿՋԲՈՒՆՔ ՉՈՐՐՈՐԴ

Ազգային պետության մեջ, որպես սահմանադրական առանցքային սկզբունք,  
պետք է իրականում գործի ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻՆ  
հայեցակարգը, որը նախ և առաջ նշանակում է՝


ա) քաղաքացիական հարթակը պետք է լինի պետության ներքին և արտաքին  
քաղաքականության պատվիրատուն, իսկ պետությունը՝ կատարուղը,

բ) իր դր, օ՛դր, ջո՛ւրը, բնական պաշարները և երկրի ռազմավարական բացառիկ  
նշանակության տնտեսական միավորները պետք է լինեն ազգային սեփականու-  
թյուն: Իսկ եթե դրանք օտարերկրյա ընկերությունների կամ նրանց ազդեցության  
տակ գտնվող տեղական վարչաօլիգարխիկ կամ մենաշնորհային սեփա-  
կանությունն են, ապա այդ երկիրը ոչ միայն չի կարող համարվել ազգային  
պետություն, այլև չի կարող համարվել ինքնիշխան (սուվերեն) պետություն:

Ազգային պետություն կառուցելու համար անհրաժեշտ է տնտեսական նոր կա-  
ցութածեփ հաստատում, որտեղ ազգային շահը պետք է լինի գերակա՛, իսկ ազգային  
սեփականությունն ԱՆՕՏԱՐԵԼԻ՛:

## ԳԼՈՒԽ Ա


**ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԻՇՅՈՒՆ,  
ՄԾԱԿՈՒՅԹ ԵՎ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**



**Ազգերի ճակատագիրն առավելապես կախված է  
իրենց դաստիարակությունից, որը կրթում է նրա  
ներքին ուժը՝ կատարելագործում ցեղը:**

**Գ. Նժեհ**

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ հիմնական հենարան-առանցքը  
ազգային արժեքներ կրող ու ազգային գաղափարաբանության  
կարևորությունը  
գիտակցող հայ յ մարդն է,  
հասարակության հավաքական գիտակցության  
ազգակենտրոնությունն ու պետականամետության  
կարևորության գիտակցությունն է:**



**Հասարակության անդամների մեծամասնության համար ընդհանուր դարձած  
հավատամքը, զգացմունքները, բարոյահոգեսոր չափանիշները, լեզուն և լեզվամտա-  
ծողությունը ձևավորում են այդ հասարակության ՀԱՎԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹ-  
ՅՈՒՆԸ:**

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ հնարավոր է կառուցել, եթե այդ պետությունում ապրող  
բնակչության ճնշող մեծամասնությունն ունի մեկ ազգային պատկանելություն, և հա-  
սարակության հավաքական գիտակցությունն ազգակենտրոն է և պետականամետ:**

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայացման համար անհրաժեշտ է ազգային գաղափա-  
րախոսություն: Ազգային գաղափարախոսությունը հասարակության ներքին նկա-  
րագրից բխող նրա ընդհանրական բարոյահոգեսոր արժեհամակարգն է, այդ հասա-  
րակության դեպի ապագա ուղղված հայացքը, որը ներառում է ազգի անցյալն ու ներ-  
կան միավորող ազգային պատմական մշակույթը: Այսինքն, ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹ-  
ՅԱՆ հիմնական հենարան-առանցքը՝ ազգային արժեքներ կրող ու ազգային գա-  
ղափարաբանության կարևորությունը գիտակցող հայ յ մարդն է: Եվ, առանց ազ-  
գային դաստիարակություն ու հոգեկերտվածք ունեցող հասարակության, ազգա-  
յին պետություն չի կարող կայանալ: Ազգերի ճակատագիրը առավելապես կախ-  
ված է իրենց դաստիարակությունից, որը կրթում է նրա ներքին ուժը՝ կատարելա-  
գործում ցեղը (Գ. Նժեհ, ԵՐԿԵՐ, Երևան 2002թ., էջ 355):**

**Համաշխարհային պատմությունը կարելի է դիտարկել նաև որպես ազգերի  
գոյապայքարի պատմություն, և այդ գոյապայքարում կարևոր է ազգային հավաքա-  
կանության ինքնության գիտակցությունն ու կազմակերպվածությունը: Ազգային  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ նույնպես՝ որպես էթնոսի կողմից ստեղծված հասարակական-  
քաղաքական կազմակերպություն և կառավարման կենտրոնացված համակարգ,  
ցուցում է տվյալ կառուցի և հասարակության գորեղությունն այդ գոյապայքարի  
պատմական քառութիներում: Եվ զորեւ է այն ազգային հասարակությունը, որն  
ունի իր ինքնության գիտակցությունը, որտեղ յուրաքանչյուր անհատ հպարտ է իր  
ազգային պատկանելությամբ:**

**Ազգային գաղափարախոսությունն առանց ազգային արժեքային համակարգի՝  
լեզվի, ազգային մշակույթի, պատմության, ընտանեկան արժեքների և հասարակու-  
թյան հազարամյակներով ձևավորված ներքին հարաբերությունների ինքնատիպ  
բովանդակության՝ անհմաստ բառակապակցություն է: Նույնիսկ ըստ կոսմոպոլիտ**

<sup>6</sup> Դ. Է. Դուրկհեիմ (David Émile Durkheim) ձևակերպումը մասնակիորեն համընկնում է  
մեր հավելումներով խմբագրված և վերևում բերված «Հասարակության հավաքական գի-  
տակցություն» սահմանման՝ ձևակերպման հետ. “The totality of beliefs and sentiments com-  
mon to the average members of a society forms a determinate system with a life of its own. It can  
be termed the collective or common consciousness.” Տե՛ս՝ Kenneth D. Allan, “Explorations in  
Classical Sociological Theory: Seeing the Social World”, 2005, p. 108.

մարքսիստ Անտոնիո Գրամչի «Հեգեմոնիայի տեսության», *հասարակության հենապունք՝ ազգային պատմական հավաքական մշակույթն է*, որը ձևավորվում է դարերի ընթացքում<sup>7</sup>: Եվ որևէ հասարակության նկատմամբ հնարավոր է գերիշխանություն հաստատել ոչ թե զինվորական ուժի շնորհիվ, այլ տնտեսական, քաղաքական և հատկապես նոր մշակութային հեգեմոնիա պարտադրելու միջոցով<sup>8</sup>: Ըստ Գրամչի տեսության, որպեսզի հասարակությանը պարտադրվի մատերիալիզմը որպես նոր «ժողովրդական կրոն», անհրաժեշտ է աստիճանաբար՝ սերունդների դաստիարակությամբ վերափոխել հասարակության գիտակցությունը<sup>9</sup>: Այսինքն, եթե մեկ-երկու սերունդների դաստիարակության գործնթացն արհամարվում և բարձիթողի վիճակում գտնվելով այդ հասարակության գիտակցության մեջ մերժվում է նրա անցյալը և սկսում ներմուծվել՝ շրջանառության մեջ դրվել, օտարածին ու այլասերող գաղափարներ ու սովորույթներ, ապա տեղի է ունենում այդ հասարակության կազմաքանդման ու դեգրադացիայի պրոցես: *Որևէ սպանդ կամ եղեռն չեն կարող սպանել ԱԶԳԸ: Չուլվող ազգերն իրենց ներքին կենտրոնից՝ էռությունից փախչող ազգերն են, իրենց կենտրոնից բխում առնող ձայնի նկատմամբ իլացած ազգերն են (Թորգոն Սարայդարյան, «Հինավորց իմաստության հիմերը», ԱՄՆ, 1994թ., էջ 72-75):*

ՀՀ անկախության շուրջ երեսուն տարիների ընթացքում բոլոր իշխանությունների կողմից արհամարված են եել թե՝ ազգային գաղափարախոսությունը, թե՝ ազգային մշակույթն ու արժեհամակարգը: Եվ եթե ՀՀ կառավարությունները չեն կարևորում ազգային ՄՇԱԿՈՒՅԹԻ առանցքայնությունն ու նրա զարգացման համար չունեն մշակված ռազմավարություն, որն ազգային գաղափարաբանության էռությունն է (այսօր վերացված է նույնիսկ մշակույթի ինքնուրույն նախարարությունը), եթե ՀՀ բնակչությունից եռակի անգամ մեծ ՍՓՅՈՒՌՔ ունեցող ազգի համար, որի գերինդիրը ազգային-մշակույթի պահպանության շնորհիվ չուծանալն է, իսկ ՀՀ-ում չկա թե՝ սփյուրի կազմակերպման համար պետական-ծրագրային մուտքեցում, թե՝ նույնիսկ համապատասխան նախարարություն, ապա հարց է առաջանում՝ հանուն ինչ՝ է ՀՀ պետականության գոյատևումն ու պայքարը:

Եթե մենք չենք ուզում վերջնականապես կանգնել փաստի առջև՝ ունենալ գաղափարազուրկ, բարոյական, գեղագիտական, հասարակական իդեալների նըկատմար անտարբեր ու նյութական արժեքներին գերի սպառողական հասարակություն, ապա պետք է պետական լծակների միջոցով անցնել հասարակության ազգային դաստիարակույթան գործին:

<sup>7</sup> Antonio Gramsci, "Prison Notebooks", 1992, NY, Edited by J.A. Buttigieg, V. II, pp. 27, 29, 33, 35, 36, 38.

<sup>8</sup> Նույն աղյուր, էջ 40, 41, 42, 51, 55:

<sup>9</sup> Նույն աղյուր, էջ 223, 225:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ հիմնական հենարան-առանցքը՝ ազգային արժեքներ կրող ու ազգային գաղափարաբանության կարևորությունը գիտակցող հայ մարդն է, հասարակության հավաքական գիտակցության ազգակենտրոնությունն ու պետանականամետության կարևորության գիտակցությունն է:

Սույն գլխում ներկայացված են ազգային գաղափարախոսության, մշակույթի և դաստիարակության հետ առնչվող այն գործիքային հիմնադրույթները, որոնք անհրաժեշտ են ազգային պետություն կառուցելու համար:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 1-ին

Անհրաժեշտ է ազգային գաղափարաբանությամբ վերակերտել հայ ժողովրդի հավաքական գիտակցությունն ու հոգեբանությունը: Հայաստանի Հանրապետությունում և ՍՓՅՈՒՌՔ անհրաժեշտ է հայ մարդու, հատկապես հայ նոր մտավորական դասի ձևավորում, նոր սերնդի ազգային ինքնության դաստիարակում և ինքնաճանաշողություն: Անհրաժեշտ է ազգային գաղափարաբանությունը որպես «Հայրենապահատություն» առարկա ներդնել ՀՀ դպրոցներում՝ որտեղ առանցքային պետք է լինի Գարեգին Նժդեհի ուսմունքը:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 2-րդ

Լեզուն ազգային տեսակի բնավորությունը և ազգային տեսակի բովանդակությունն է: Լեզուն՝ ազգի հոգու տունն է:

Հայոց լեզուն, պատմությունը և մշակույթը ՀՀ Սահմանադրությամբ պետք է ստանան ազգային անվտանգության բարձրագույն կարգավիճակ:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 3-րդ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ազգի անցյալն ու ներկան միավորող մայրենի լեզուն և ազգային պատմական մշակույթն է:

Հայաստանի Հանրապետությունում և ՍՓՅՈՒՌՔ պետք է հաստատել միասնական ուղղագրություն:

Հայաստանի Հանրապետության և Սփյուրքի հայկական դպրոցներում անհրաժեշտ է գրաբարի ուսուցում:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 4-րդ

Ազգային հոգևոր դաստիարակության լավագույն միջոցն ազգագրական անադարտ երգն է, որը լավագույնս է ձևավորում երեխայի հոգեկերտվածքը:

— Սանկապարտեգներում և դպրոցներում պետք է ներդնել հայ անադարտ մե-

ղեղու՝ երգի պարտադիր ուսուցում. շարականների, ազգագրական երգերի մեղեղիներով հայ երեխաների հոգեկերտում:

— Հայկական ազգագրական պարի ուսուցումը թե՛ հանրային, թե՛ մասնավոր դպրոցներում պետք է դարձնել պարտադիր:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 5-ՐԴ

Լեզվի պետական վերահսկող կոմիտեի վերականգնում՝ լայն լիազորություններով և իրավունքներով:

Այն բիզնես միավորները, հատկապես հասարակական օբյեկտները, որոնք կփոխեն իրենց օտար անվանումները և կվերանվանվեն հայկական անուններով, նրանց հինգ տարի պետության կողմից կնձեռնվի 2%-ով քիչ հարկվելու հնարավորություն, իսկ սույն օրենքը շահարկողները կպատժվեն խստագույն կերպով:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 6-ՐԴ

Այն մշակութային բիզնես միավորները, որոնց գործունեությունն ուղղված է ազգագրական մշակույթի զարգացմանը, տարածմանը և կրթելուն, իրենց գործունեության առաջին հինգ տարիների ընթացքում ազատվում են պետական հարկերից:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 7-ՐԴ

Հայաստանի Հանրապետությունը պետք է սատարի և պարտադրի որպեսզի ժամանակակից քաղաքաշինությունը շարունակի զարգանալ հայ ավանդական ճարտարապետական մոտեցումների արդիականացման ուղիով՝ Ա. Թամանյանի, Ռ. Խորայելյանի և այլոց ստեղծած ճարտարապետական դպրոցների հիմքով:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 8-ՐԴ

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԵՏՔ Է Բացառվի կրոնական տարբերություններով կամ ուղություններով պայմանավորված խորական բաժանարարությունը:** **ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՍՔ՝** ազգային պատկանելությունը որոշվում է օբյեկտիվ հատկանիշներով՝ կենսաբանական ծագում, լեզու, մշակույթ, պատմություն, և համարվում է ազգային հասարակությունը միավորող գլխավոր գործոնը:

Բնության մեջ առավել հիմնարար և երկարակյաց են արդեն կայացած ազգային հասարակությունները և, ի տարբերություն կրոնական, սոցիալական, տնտեսական և զաղափարական ընդհանուրություններով ժամանակավոր հավաքականությունների, եթնիկ տեսակների հիմքով հավաքականությունների ձևավորումները պայմանավորված են բնության օրինաչափություններով:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 9-ՐԴ

Ազգային Օպերայի և բալետի ամենամյա ծրագրային ցանկում պետք է գերակշռություն տալ ազգային օպերայի և բալետի ներկայացումների քանակը: Անհրաժեշտ է պետական սատարման քաղաքականությամբ զարգացնել ազգային օպերային արվեստը (*Ազգային թեմաներով վերջին հայկական օպերան գրվել է 1940 թվականին, իսկ օպերա-բալետը՝ 1970 թվականին*):

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 10-ՐԴ

Երիտասարդ սերնդի հոգևոր և մտավոր դաստիարակության նպատակով Հայաստանի Հանրապետությունը պետք է ստեղծի դրագոցականների համար արոնեմենտային համակարգ: Դպրոցականները պետք է հոգեպես կրթվեն, հաճախեն օպերա և բալետ, թատերական ներկայացումներ, այցելեն թանգարաններ ու պատկերասրահներ, ճանաչեն ու դաստիարակվեն հայ և համաշխարհային դասական երաժշտության և թատրերագրության ձեռքբերումներով:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 11-ՐԴ

Ազգային զաղափարաբանության կրողը նաև լավագույնս պետք է հասկանա իր երկրում (և առհասարակ) ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման կարևորությունը, նրանց իրավունքները, խնդիրները և սատարի այդ փոքրամասնություններին:

Հայաստանի Հանրապետությունը ազգային փոքրամասնություններին պետք է ընձեռնի քաղաքական և կրթամշակութային արտոնություններ՝

Ա) երկրի քաղաքական կյանքին լիարժեք մասնակցելու համար վարչական և ֆինանսական աջակցություն,

Բ) պետական աջակցություն և ֆինանսական սատարում՝ նրանց մայրենի լեզվի և մշակույթի զարգացման համար:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 12-ՐԴ

Հայաստանի Հանրապետությունում գործող հեռուստատեսային ընկերությունների համար պետք է սահմանել պարտադրի պայման-օրենք՝ ամենօրյա հեռարձակող եթերային ծրագրերի մի մասը նվիրել հայոց անցյալի հերոսական էջերին, ազգային արվեստին ու մշակույթին, ազգային մեծերի կյանքի պատմությունների ծանոթացմանն ու քարոզմանը:

### **ՀԻՄՆԱՐՈՒՅԹ 13-րդ**

Հասարակության կրթության ու դաստիարակության համար նաև անհրաժեշտ են մեր օրերում ապրող անձ-խորհրդանիշներ՝ հասարակության համար օրինակ ծառայող կերպարներ: Նրանք պետք է լինեն պետանակերտման մեջ մեծ ներդրում ունեցած, հայ մշակույթի, գիտության, բիզնեսի և զինվորական ասպարեզներում մեծ հաջողությունների հասած գործիչներ: Նրանք՝ հասարակության և պետության կողմից հարգված այդ 40 նվիրյալ խորհրդանիշները, պետության աջակցության շնորհիվ չպետք է ունենան սոցիալական ապահովության խնդիրներ, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ, հատկապես երիտասարդ սերունդը, ձգտի ու ցանկանա իր կյանքը դասավորել ու ապրել նրանց նման: Նրանք պետք է ձևավորեն ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ իմաստուն ծերակույտը՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ, որը պետական բացառիկ կարևորության օրենքների և որոշումների վրա կունենա թե՝ դրանք հաստատելու, թե՝ արգելք դնելու իրավունք: Նրանց ընտրությունը (անժամկետ՝ ցմահ) պետք է լինի հասարակության հանրային կարծիքի հիմքով և մտավորականների արհեստավարժ միություններից առաջադրվելու և ընտրվելու ձևաչափով (ՀՀ Գիտությունների Ակադեմիա, ՀՀ Ճարտարապետների միություն, ՀՀ նկարիչների միություն, ՀՀ գրողների միություն և այլն):

### **ՀԻՄՆԱՐՈՒՅԹ 14-րդ**

Հասարակության մեջ պետք է սերմանվի զինվորի նկատմամբ պաշտանմունք և հարգանք: Հայրենիքի համար մարտնչած զինվորը կամ կամավորականը պետք է լինի պետության բացառիկ հոգատարության և ուշադրության կենտրոնում և ունենա օրենքով սահմանված արտոնություններ:

### **ՀԻՄՆԱՐՈՒՅԹ 15-րդ**

#### **(ՀԱՍԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐ)**

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայացման համար ազգային խորհրդանիշների, ազգային տոների և ազգային արժեքների գնահատման կարևորությունն անհրաժեշտություն են:

Ազգային տոները, եթե դրանք դառնում են պետության կողմից հաստատված համազգային կարևորության միջոցառումներ ու պատշաճ մակարդակով նշվում են պետության ու հասարակության կողմից, հասարակության մոտ ստեղծում են հոգևոր միասնության զգացողություն ու կոփում են հասարակության ինքնության հավաքական գիտակցությունը:

— Անհրաժեշտ է ստեղծել հայոց պետականության խորհրդանիշ ԴՐՈՇԻ տոն, և պետության կողմից հաստատված ու կազմակերպված այդ տոնը պետք է դառնա

հայոց պետականության խորհրդանիշի տոն, որի անցկացման ժամանակ հայոց բազմահազարամյա պատմության ընթացքում հայ էթնոսի կողմից ձևավորած բոլոր պետական միավորների ԴՐՈՇՆԵՌԸ պետք է ծածանվեն ու դառնան պետականության խորհրդանիշ արտահայտող: Հասարակության հավաքական գիտակցությունը պետք է ընկալի պետականության բացառիկ կարևորությունը:

— Անհրաժեշտ է, որ քաղաքներում՝ մարդաշատ ու սիրված վայրերում, տեղադրվեն ՀՀ անկախության տարիներին տեղի ունեցած հերոսական դրվագների և հերոսների արձաններ և հուշակոթողներ: Մեր ժամանակի հերոսների նկատմամբ պետք է հասարակության մեջ սերմանել ակնածանքի զգացողություն: Երիտասարդությունը պետք է ընկալի, որ հասարակությունն իր հերոսներին չի մոռանում:

— Հայաստանի Հանրապետությունը պետք է հաստատի ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ տոնը որպես համահայկական ազգային տոն, և ամեն տարի կազմակերպի այն պատշաճ մակարդակով:

— Անհրաժեշտ է ՀՀ պետության կողմից հաստատել ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՏՈՆ և ամեն տարի նշել այդ տոնը՝ մեծարելով մեր բազմահազարամյա պատմության ընթացքում հերոսացած նվիրյալներին ու մեր ժամանակի հերոսներին:

— Անհրաժեշտ է, որ հայկական մի շարք սրբավայրերում (Մեծ Եղեռնի հուշարձան, Եռալուր, Մայր Հայաստանի հուշարձան և այլն) հաստատվի խորհրդական զինվորական պահակախումբ և ծիսակարգ:

— Պատմամշակութային հնավայրերում նշանակել պահակակետեր, դրանք պահպանելու և անխարար վիճակում հաջորդ սերունդներին փոխանցելու համար:

— Հայաստանի Հանրապետությունը պետք է հաստատի «ՀԱՅԿՅԱՆ ՆԵՏ» անվանումով ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ շքեղ ու ծիսական անցկացում յուրաքանչյուր քառամյակ, որին պետք է մասնակցեն Հայաստանի Հանրապետության և ՍՓՅՈՒՌՔԻ բոլոր երկների հայ մարզիկները: Անհրաժեշտ է վերականգնել ազգային ավանդական սպորտային խաղերի մոռացության մատնված տեսակները՝ «Լախտի», «Կոխ», «Չլիկ-դաստա», «Բերդ», «Ազատագրում» և այլն:

— Ազգագրական բոլոր ծիսական տոները (ՎԱՐԴԱՎԱՌ, ՏՐՆԴԵԶ, ԶԱՏԻԿ, ՆԱՎԱՍԱՐԴ և այլն), պետք է դառնան ազգային-պետական տոներ, և պետությունը պետք է կազմակերպի դրանց համազգային շքեղ անցկացումն ազգագրական երգ ու պարի, խաղերի, տոնավաճառների ուղեկցությամբ: Այս տոները պետք է ներկայացվեն որպես ազգագրական, այլ ոչ թե կրոնական կամ եկեղեցիական տոներ:

— ՀՀ պետությունը հայ մեծանուն երախտավորների՝ Նժեկի, Անդրանիկի, Թումանյանի, Կոմիտասի, Վարուժանի, Չարենցի, Սևակի, Արամ Խաչատրյանի և այլոց հոբելյանական տարեդարձերի նշումը պետք է կազմակերպի ամեն տարի՝ պատշաճ մակարդակով:

## **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 16-ՐԴ**

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ մեջ Հայոց Մեծ Եղեռնի Սգո օրը՝ Ապրիլի 24-ը, պետք  
է հայտարարել ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՕՐ:

## **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 17-ՐԴ**

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ պետք է ունենա ԳԵՐՆՊԱՏԱԿ:

Մեր դեպքում այդ ազգային գերնպատակը, որը պետք է լինի նաև ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՅԱՆ գերնպատակ, հետևյալն է՝


*Հայությունը պիտի ամբողջականանա ի՞ր հայկական ինքության հիմքով՝ ի՞ր ամբողջականացված բնօրրան-հայրենիքում:*

*Միջազգային իրավունքի հիմքով կորսված հայրենիքի նկատմամբ հայությունն ունի իր բնօրրանը եւս վերադանելու բոլոր իրավունքները (Վ. Վիլսոնի իրավաբար վճիռ, հյուսիսում՝ Քուր-Արարայան գետերի սահմանագծով՝ Արցախի և պատմական Ուտիքի ներառմամբ):*

Հայոց պատմության բոլոր քառութիներում, նույնիսկ ՀԽՍՀ-ի տարիներին, երբ հայությունը չուներ անկախ պետականություն, հայ մեծերը՝ մտավորական-ներն ու բանաստեղծները (*Խսահակյան, Չարենց, Սևակ, Սահյան և այլն*) հասկանում էին հայոց բնօրրան-հայրենիքի հիշողությունն ու նրա հետ կապվածությունը վառ պահելու, ինչպես նաև ազգի հարատևման համար ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ հայոց բնօրրանի վերադարձի խնդիրը քաղաքականապես լուծելու գերնպատակի կարևորությունն ու այն սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը: Առանց ազգային գերնպատակի՝ ազգը դատապարտվում է լճացման և անկման:

## **ԳԼՈՒԽ Բ**

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌ**  
**ՀԱՅԵՅԱԿԱՐԳ**



**Զկա՛ սփյուռքահայ, կա սփյուռքում բնակվող հայ՝, և Հայաստանի Հանրապետությունը՝** որպես աշխարհի բոլոր հայերի հայրենիք-պետություն, իր տնտեսաքաղաքական հայեցակարգը պետք է վերակառուցի որպես **ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ամբողջական ծրագրային հայեցակարգ:**

Այսօրվա բազմաբղետ, տարերային ու անկազմակերպ ՍՓՅՈՒՌՔԸ հնարավոր է դարձնել կազմակերպված ու նպատակային միմիայն հայկական պետության լծակների միջոցով՝ Սփյուռքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքանության փոփոխությամբ: Հայստանի Հանրապետության անկախության 30 տարիների ընթացքում ՀՀ կառավարություններն իրենց առջև երբեք չեն դրել ՀՍՓՅՈՒՌՔ կազմակերպելու խնդիր: Եվ եթե Հայաստանի Հանրապետությունը առաջիկա 5-7 տարիների ընթացքում իր առջև չդնի ՍՓՅՈՒՌՔ կազմակերպելու գերխնդիրը՝ դրան համապատասխան ռազմավարական ու մարտավարական ծրագրերով, ապա հնարավոր չի լինելու կազմակերպել 21-րդ դարի աշխարհաքաղաքական մարտահրավերներին հայկական պետության դիմակայությունը: ՍՓՅՈՒՌՔԻ առումով Հայաստանի Հանրապետության ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ պետք է ոչ թե լինի ՍՓՅՈՒՌՔԻ հետ մշակութային կապերով հարաբերվելու ՀԽՍՀ-ից ժառանգած ելակետային կամ Սփյուռքից միայն դրամական աջակցություն ստանալու մոտեցում, այլ ՍՓՅՈՒՌՔԸ կազմակերպելու և ՀՀ-ի հետ մեկ ամբողջի մեջ ներառելու տնտեսաքաղաքական հայեցակարգ, այլապես 20-25 տարի հետո մենք կկորցնենք հայկական գենոֆոնի ահոելի մասը և կունենանք այսօրվա ուժացվող Սփյուռքի կեսը:

Սփյուռքի կազմակերպման համար տնտեսաքաղաքական և մշակութային ծրագրերը պետք է կառուցվեն Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական և մարտավարական ծրագրերի ամբողջական փաթեթով:

Ի՞նչ է հայկական Սփյուռքը, և ինչպիսի՝ պոնտենցիալ հնարավորություններ կարող է ունենալ կազմակերպված Սփյուռքը:

Սփյուռքն անհրաժեշտ է դիտարել որպես՝

- ա) ողջ հայության գենոֆոնի 70-75%-ը,
- բ) ՀՀ պետության համար անհրաժեշտ փորձառու մասնագետ կադրերի ներուժ,
- գ) աշխարհի տարբեր երկրներում ՀՀ-ի քաղաքական լոքրիստական ներուժ,
- դ) ՀՀ-ում տնտեսական ծրագրերի իրականացման համար ֆինանսական ներուժումների ներուժ,
- ե) Հայաստանի Հանրապետության հետ միասին համահայկական տնտեսական ցանցային շուկայի ձևավորման հնարավորություն,
- զ) ՀՀ-ում արտադրության ապրանքատեսակների համար հավելյալ շուկա,

- է) Հայաստանի Հանրապետությունում համաշխարհային առաջավոր համակարգերի և տեխնոլոգիաների ներդրման ներուժ,
- ը) Սփյուռքից ներգաղթի կազմակերպմամբ՝ Հայաստանի Հանրապետության առջև կանգնած դեմոգրաֆիական աղետի կասեցման հնարավորություն:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 18-րդ

ՍՓՅՈՒՌՔԻ գերխնդիրը՝ ուժացման դեմ պայքարն է: Հայկական ՍՓՅՈՒՌՔՆ արագ ուժացման վտանգի տակ է և ՀՀ պետության կողմից անհրաժեշտ է համակարգային հիմնարար լուծումներ գտնել սփյուռքի ուժացումը հնարավորինս կասեցնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով հայկական ՍՓՅՈՒՌՔԻ տարածական ցրվածությունը՝ աներաժեշտ է, որ ՀՀ պետության կողմից ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ դասավանդման համար ստեղծվի ուսուցման միասնական ծրագրերի և ինտերնետային օնլայն դպրոցների ցանցային համակարգ:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ են մայրենի լեզվի ուսուցման ծրագրային դասընթացների տեսահոլովակներ, անիմացիաներ, ցանցային համակարգի ձևավորում և առցանց համակարգող ուսուցիչներ՝ որոնք տիրապետում են Սփյուռքի տվյալ հատվածի համար երկու լեզուների (*օրինակ՝ հայերենի և ռուսերենի, հայերենի և իսպաներենի և այլն*), որպեսզի Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել մայրենի լեզվով գրել-կարդալ-ունկնդրել-խոսել և իմասալ իր վավերական պատմությունը:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 19-րդ

Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի դպրոցական և բուհական բոլոր միավորները պետք է լինեն Հայոց պատմության և հայ ինքնության մեկ-միասնական տեղեկատվական կրթական դաշտում՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի և ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ համապատասխան հանձնախմբի վերահսկողության ներքո:

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ գտնվող բոլոր հայագիտական ամբիոնների, հայկական դրագրոցների ծրագրերի բովանդակությունները պետք է ունենան հայոց պատմության գիտականորեն հիմնավորված նույն սկզբունքները (*հայոց ծագումնարանության, Պատմական Հայաստանում հայոց բնիկության տեսություններ, Ուրատուն որպես հայկական պետություն և այլն*) և պետք է լինեն Հայաստանի Հանրապետության գիտական համապատասխան ինստիտուտների վերահսկողության շրջանակում:

Անհրաժեշտ է աշխատանք տանել Հայոց պատմության և մշակութի առանձին

դրվագների հակահայկական՝ քաղաքական պատվերով օտարաստեղծ ու կեղծ «գիտականությամբ» ներկայացված պնդումների դեմ և դրանց փոխարեն շրջանառել գիտականորեն հիմնավորված մեկնարանություններ:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 20-րդ

Անհրաժեշտ է Միջին Արևելքի երկրներում և հատկապես Թուրքիայում իսլամադավան հայերի առնչությամբ ազգային-մշակութային կապերի հաստատում և ազգեցության ընդլայնում:

Հայաստանի Հանրապետությունը պետք է ստեղծի և ֆինանսավորի ազգային-մշակութային այնպիսի աշխատանքային ծրագրեր, որոնք Հայաստանում գործող ազգային-մշակութային կազմակերպությունների և խմբերի գործունեությունն ուղղորդեն դեպի Սփյուռքյան հատկապես այն համայնքները, որտեղ սկսում է մարել հայկական համայնքների ինքնության գիտակցությունը, և թուլացած է կապը մայր հայրենիքի հետ:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 21-րդ

ՍՓՅՈՒՌՈՒՄ ուժացման դեմ պայքարը, հնարավորինս քիչ թե շատ հաջողված, կատարում են արդեն գոյություն ունեցող հայկական ոչ եկամտաբեր կամ որպես փոքր բիզնես գրանցված տասնյակ հազարների հասնող մշակութային կազմակերպությունները, որոնք կարողացել են կազմակերպվել հիմնականում ֆինանսապես ինքնարավ միավորներ ձևավորելով (*հայկական դպրոցներ, ազգային պարի համույթներ, թերթեր, հեռուստատեսություններ և այլն*): Եվ հիմնականում հենց այս միավորների շուրջ է կենտրոնացած սփյուռքահայության ազգային մշակութային գործունեությունը ներկայացնող ողջ ակտիվը, և հենց այս միավորների միասնության հիմքով է հնարավոր կազմակերպել ՍՓՅՈՒՌՔԸ որպես ցանցային միասնական ամբողջականություն, քանի որ ՍՓՅՈՒՌՈՒՄ հասարակական և մշակութային խնդիրների իրականացնողն ի վերջո հենց այս կազմակերպություններն են:

Հայաստանի Հանրապետությունը պետք է նախաձեռնի ՍՓՅՈՒՌՈՒՄ գոյություն ունեցող հայկական բոլոր հասարակական-մշակութային կազմակերպությունների ներգրավումը միասնական ցանցային կառույցներում: Հայաստանի Հանրապետությունը պետք է համապարզի ՍՓՅՈՒՌՔ ազգային հասարակական-մշակութային գործունեությունը ներկայացնող ողջ ակտիվը՝ որպես ներկայացնուցական մարմին՝ տարբեր երկրներում ձևավորելով ազգային կազմակերպություններից կազմված միություններ:

### Բացատրություն:

Յուրաքանչյուր երկրում գրանցված հայկական հասարակական-մշակութային կազմակերպություններից (*մեկական ներկայացուցիչներից*) կկազմվի մեկ միություն, որն ընտրական ձևաչափով կարող է ներկայանալ 9 հոգուց բաղկացած նախագահությամբ՝ որպես տվյալ երկրի հայկական կազմակերպությունների ամբողջականը ներկայացնող իրավական մարմին, որը պետք է ունենա իր գրասենյակն ու աշխատող խումբն այդ երկրի ՀՀ դեսպանատանը և ներկայացնուցիչ պատգամավոր՝ ՀՀ ԱԶԳԱՅԻ ԾՈՂՈՎԻՆ առընթեր ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹՉԱԿԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ:

(Օրինակ՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպություններից կազմվում է մեկ միություն և ընտրական ձևաչափով ներկայացնուցական նախագահություն, որը պետք է ունենա իր գրասենյակն ու աշխատող խումբը Ֆրանսիայի ՀՀ դեսպանատանը, և այդ միության ներկայացնուցիչը կարող է լինել ՀՀ Ազգային Ժողովին առընթեր ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹՉԱԿԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ Ֆրանսիայի սփյուռքը ներկայացնող պատգամավորը):

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 22-րդ

Հայաստանի Հանրապետությունը ՍՓՅՈՒՌՔԻ հետ պետք է հարաբերվի ընդլայնակի և ամենօրա աշխատանքային ռեժիմով:

ՀՀ Ազգային Ժողովին առընթեր ստեղծել՝

Ա) ՀՀ Ազգային Ժողովով ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹՉԱԿԱՆ ՊԱԼԱՏ, որը տարեկան երկու անգամ կարող է հրավիրել համասվյուռյան համագումար, ընդունել ծրագրեր ու ստանձնել պատասխանատվություն դրանք իրագործելու համար և հանդես գալ կատարողականի հաշվետվությամբ:

Բ) Վերականգնել ՍՓՅՈՒՌՔԻ նախարարությունն իր համապատասխան բաժիններով՝ «ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում», «ՀՀ մշակույթի նախարարությունում», «ՀՀ Կրթության և գիտության նախարարությունում», «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում»:

ՀՀ Սփյուռքի նախարարությունը պետք է նաև նախաձեռնի «*Սփյուռքի մասնագետ մտավորականություն*» կազմակերպության ստեղծումը, որի մեջ ներգրաված պետք է լինեն համաշխարհային անուն և վաստակ ունեցող մասնագետները՝ գիտնականները, կազմակերպիչները, ներդրողներն ու հովանավորողները, որոնք կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության զարգացման տնտեսական ծրագրերով ու առաջարկներով, նորագույն տեխնոլոգիաների ներդրման նախագծերով, ինչպես նաև հայրենական արտադրատեսակների համար նոր շուկաներ գտնելու ռազմավարական ու մարտավարական առաջարկություններով:

## ՀԱՄԱՀԱՅԿԱՎԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Հայաստանի Հանրապետության տնտեսության հզորացման համար անհրաժեշտ է Հայաստանում ռազմավարական նշանակության տնտեսական խոշորամաշտաբ ծրագրերի իրականացում, որը հնարավոր է հայկական կապիտալի կենտրոնացման և ուղղորդման դեպքում, ինչպես նաև համահայկական տնտեսական ցանցային շուկա ունենալու դեպքում: Նման համապարփակ ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ ինստիտուցիոնալ մեխանիզմները.

- 1) ՀԱՄԱՀԱՅԿԱՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐՈՒԹՅՈՒՆ անունով **ակցիոներական** կառույցի ստեղծում, այսինքն՝ «Հայաստան համահայկական հիմնադրամ» կառույցի ռազմավարական ուղղության փոփոխություն՝ ՈՉ ԹԵ ԴՐԱՄԱՀԱՅԿԱՔ, ԱՅԼ ԲԱԺՆԵՏՈՍՈՍԵՐԻ ԱՌԱՋԱՐԿ,
- 2) ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՆԻՇ համակարգի ստեղծում, որը նշանակում է ՍՓՅՈՒՌՔԻ շնորհիվ հայերնական արտադրության ապրանքների համար շուկայի ընդլայնում,

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 23-րդ

«ՀԱՅԱՍՏԱՆ համահայկական հիմնադրամը» պետք է լինի ոչ թե Սփյուռքից հեռուստամարաթոններով փող մուրալու միջոց, այլ վերափոխվի և դառնա **համահայկական բաց բաժնետիրական (ակցիոներական) կառույց**: Հայաստանում ռազմավարական նըշանակության տնտեսական ծրագրերի բաժնետոմսերի առաջարկ ու վաճառք կազմակերպող մարմին: Այդ կառույցը կարող է կոչվել՝ ՀԱՄԱՀԱՅԿԱՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐՈՒԹՅՈՒՆ անունով:

#### Բացատրություն

Հայաստանի Հանրապետությունը պետք է ձեռնարկի ռազմավարական նշանակության մեծամաշտաբ կառույցների շինարարություն. այդ շահութաբեր կառույցների անհրաժեշտությունը ներկայացնի որպես համազգային անվանական ծրագրեր, որոնց ստեղծման համար պետք է կիրառել բաց բաժնետիրական ձևաչափը և ընդլայնական ներգրավել Սփյուռքը: **Նպատակը՝ Սփյուռքում բնակվող և հատուկ կարգավիճակի բաղաքացիություն ունեցող բոլոր հայ մարդիկ կարող են լինել Հայաստանում ռազմավարական նշանակության ազգային կառույցների բաժնետեր և ստանալ շահույթ, որտեղ բաժնետոմսի մեկ միավորը կարժենա \$100 դոլարի սովորական և հետզնվող բաժնետոմս, իսկ արտոնյալ կամ վերահսկող փաթեթ ապահովող բաժնետոմսների բանակը կլինի Հայաստանի Հանրապետության սեփականությունը: Բաժնետոմսերը պետք է լինեն ֆոնդային շուկայում հայտնի «Կապույտ ջիփ բաժնետոմս» (Blue Chip Stocks) կարգի եկամտաբեր բաժնետոմսեր**

(Income stocks), որոնց նկատմար վատահության բարձր գործակիցը կարող է լինել Հայաստանի Հանրապետության կողմից պետական բոնդերով ապահովագրումը: Բաժնետոմսերը պետք է ունենան ժառանգությամբ փոխանցելու իրավունք, սակայն վերակածառելու սահմանափակում. այն կարելի է միայն հետ վաճառել «ՀԱՄԱՀԱՅԿԱՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐՈՒԹՅՈՒՆ» ակցիոներական ՀՀ պետական կառույցին:

Օրինակ, Հայաստանում «ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ԵՐԿԱԹՈՒՂԻ» անունով ծրագրի բաժնետոմսերը կամ՝ «ՀՈՒՐ-ՎԱՀԱԳՆ» անունով ատոմակայանի նոր բլոկի կառուցման ծրագրի բաժնետոմսերը, որոնք կառուցումից և շահագործումից հետո կլինեն առնվազն 10%-ով շահութաբեր, կարող են նախապես, նաև համահայկական թելեթոններով, վաճառվել Հայաստանի և Սփյուռքի ազգաբնակչությանը, պետության կողմից վերահսկող փաթեթի՝ 51%-ի անձեռնմխելիության պայմանով:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 24-րդ

#### (ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՆԻՇ)

Հայաստանի Հանրապետության ՇՈՒԿԱՆ շատ փոքր է, և այն հնարավորություն չի տալիս տնտեսության թոփշաճի զարգացման համար: Բացի այն, որ անհրաժեշտ է ՀՀ պետության կողմից հստակ ծրագրով ու վերահսկողությամբ կրածատել ՀՀ-ում ներկրումների ծավալներն ի հաշիվ տեղական արտադրության ապրանքների, այլ նաև պետք է հստակ հասկանալ, որ միայն արտահանման ընդլայնմամբ է հնարավոր Հայաստանի Հանրապետությունում արտաքին ներդրումների հնարավորությունը, սակայն արտահանման ընդլայնման համար անհրաժեշտ է ՇՈՒԿԱ և հայրենական արտադրության ապրանքների որակական ու գնային մըրցակցություն, որը ենթադրում է ահոելի կապիտալ ներդրումների և տեխնոլոգիաների անհրաժեշտություն, ինչպես նաև գերպետությունների կողմից արտաքին շուկաները ՀՀ-ի համար բացելու քաղաքական որոշումներ: Ահա այս երկու կարեւորագույն գործոններն ամենաբարդ լուծելի խնդիրներն են, քանի որ ողջ աշխարհը՝ նույնիսկ առաջավոր երկրները, պայքարում են շուկայի ու իրենց ապրանքների մցունակության համար:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ տնտեսական միասնական ՑԱՆՑԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ձևավորումը, որը հնարավոր է միայն Հայաստան-պետության նախաձեռնությամբ, կարող է դառնալ Հայաստանի տնտեսական զարգացման համար հենարանի սկիզբ, և միակ հնարավորն ու իրատեսականը Հայաստանի Հանրապետությունը տնտեսական փակուլուց արագ հանելու համար:

Շուկայական պահանջարկ ձևավորելու համար անհրաժեշտ են թե՝ **ռացիոնալ գործոնների** (որակ, ճանաչողություն, մրցունակություն, գին), թե՝ **իրացիոնալ գործոնների** (գովազդ, սովորույթ, քաղաքական քարոզ և այլն) հաշվառում: ՍՓՅՈՒՌ-

ՔՈՒՄ հայրենական ապրանքների կայուն շուկայի ձևավորման ու ընդլայնման համար անհրաժեշտ են հատկապես իռացիոնալ գործոնները:

Հայաստանի Հանրապետության կողմից պետք է ստեղծվի հայրենական արտադրության ապրանքների արտահանման համար «ՍԱՏԱՐԻՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ» միջազգային ապրանքանիշը և կազմակերպվի ՍՓՅՈՒՌԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ՝ հայրենական արտադրության ապրանքների համար:

#### Բացատրություն

ՀՀ-ում արտադրող ընկերություններն արտերկիր արտահանվող ապրանքների համար նախապես Հայաստանի Հանրապետությունից պետք է պարտադիր գնեն ՀՀ-ի կողմից երեք աշխարհամասերում գրանցված «ՍԱՏԱՐԻՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ» միջազգային ապրանքանիշն իրենց ապրանքների վրա տեղադրելու իրավունքը, իսկ դրանց քարոզական գովազդները, արտահանվող ապրանքների համար արտերկրում ցուցահանդեսների կազմակերպումը, որևէ երկրում տեղական մեծածախ ընկերությունների հետ պայմանագրերի կնքման համար օգնությունները պետք է ստանձնի ՀՀ Սփյուռքի նախարարության ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ:

«ՍԱՏԱՐԻՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ» միջազգային ապրանքանիշի վաճառքից առաջացած գումարները պետք է ուղղորդվեն թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում ազգային ծրագրերի իրականացմանը, և բաց ու թափանցիկ հաշվետվությամբ ներկայացվեն ՀՀ Սփյուռքի նախարարության կայքէջում:

Այս գործառույթների իրագործման շնորհիվ կարող է ձևավորվել ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌԻ միասնական տնտեսական ցանցային համակարգը, և տնտեսական հարթության հիմքով կունենանք Հայաստան-Սփյուռք հարաբերությունների միագամայն նոր մշակույթ (սույն գրքում նպատակահարմար չէ 23-րդ, 24-րդ հիմնադրույթների հիմքով մշակված լայնածավալ ծրագիրն ամրողական ներկայացնել):


#### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 25-րդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ պետք է ձեռնարկի ՍՓՅՈՒՌԻՑ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ կազմակերպելու ծրագրի մշակումը:

Ծրագիրը պետք է ունենա նախնական աշխատանքներ, վիճակագրություն՝  
ա) Սփյուռքում հայ բնակչության հաշվառում ըստ երկրների,  
բ) հայ բնակչության հաշվառում ըստ տարիքային ցենզի և ըստ ընտանեկան կարգավիճակի,  
գ) սոցիալակաս շերտերով ներկայացում՝ ըստ երկրների,  
դ) կրոնական պատկանելության կամ ուղղության վիճակագրություն,  
ե) հասարակական, մշակութային, կրոնական կամ քաղաքական այս կամ այն կազմակերպության մեջ ընդգրկվածություն:

## **ԳԼՈՒԽ 4**

### **ԱՎԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԱՅԵՎ**



## ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ունենալու համար անհրաժեշտ է համապատասխան տնտեսական կացութածիք:

Որպես կանոն «ազատ շուկայական» հարաբերություններ որդեգրած նոր զարգացող կամ երրորդ աշխարհի երկրներում հշենանությունը պատկանում է երկրի հիմնական հարստությունների սեփականատերերին և բարձրաստիճան շինովնիկներին, անկախ այդ երկրի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ անվանումից կամ երկրի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ մեջ առկա՝ «ՀՇԵՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԺՈՂՈՎԸՐԴԻՒ» դեկլարատիվ ու անհիմն հայտարարությունից:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ որպես կառավարման օպերատորական գործիք, մարդկային քաղաքակրթության հազարավոր տարիների ընթացքում մի շտ է ունեցել պատկանելություն և որպես իրավական շահերի պաշտպանություն ապահովող՝ մի շտ է եղել անհավասարակշիռ: Եթե հնում պետությունը, որպես կառավարման համակարգ, իրավականորեն պատկանում էր արքայական և նախարարական տներին, ապա ֆինանսական կապիտալիզմի ժամանակաշրջանում ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կառավարման «գործիքի» սեփականատերերը ֆինանսակորպորութիվ կլանային խմբային միավորումներն են<sup>10</sup>, որոնք պետության կառավարումն իրականացնում են կամ ուղիղ ձևաչափով (*կլանի դեկավարը նաև երկրի նախագահն է*) կամ ներկայացուցական ձևաչափով (*ինստիտուցիոնալ սպասարկում*): Եվ միշտ չէ, որ պետության մեջ բնակվող ժողովրդի ու այդ երկրի խոշոր սեփականատերերի կլանային շահերը լինում են համադրված. դրանք տարբեր ազդակների ներգործության պատճառներով, ժամանակ առ ժամանակ, կարող են փոփոխվել և արտահայտվել՝ ցուցաբերելով թե՝ պետականամետ կենտրոնաձիգ, թե՝ կենտրոնախույս վարքագիծ: Այսինքն, եթե որևէ երկրում տնտեսական կացութածեր նպաստում է, որ ֆինանսական միջոցները, բնական և արտադրական ռեսուրսները կենտրոնանան մի քանի անձերի, ընտանիքների կամ ընկերությունների ձեռքում, ապա դրանք բնականորեն միանում ու փոխպայմանավորվածությամբ ոչ միայն սպանում են «ազատ շուկայական» ձևաչափը՝ պարտադրելով իրենց համար ձեռնատու կանոններ ու մենաշնորհներ, այլ նաև «պետություն» ինստիտուցիոնալ համակարգն է դառնում նրանց ենթակա գործիքը՝ հիմնականում պաշտպանելով իշխող էլիտայի շահերը<sup>11</sup>: Ու թեև 1960-ականներից հետո, էվոլյուցիոն ճանապարհով, տեղի ունեցան ֆինանսական կապիտալիզմի տարատեսակ դրական զարգացումներ և արտահայտություններ՝ «Ականդինավյան տնտեսական մոդել», «Այսակայի մշտական հիմ-

նադրամ» և այլն, սակայն ինչպես պրոֆեսոր Ք. Քուգլին է բնութագրում, արևմտյան ֆինանսական կապիտալիզմի կլանային բնույթի պատմությունը ցուցում է նրա անցումային օրինաչափությունները, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում պետության և ժողովրդավարության համար:

Կլանային կառավարմամբ ֆինանսատնտեսական համակարգը հատկապես փոքր և նոր զարգացող երկրների համար խիստ վտանգավոր է: Մեր ժամանակներում, վարչաօլիգարխիկ համակարգ ունեցող փոքր երկրներում, *հիմնականում*, տեղի չի ունենում հասարակության սոցիալական շերտերի պահանջների բավարում և հասարակության միասնականացում: Աստիճանաբար՝ հատկապես ժողովրդի հաշվին հարստացած տնտեսական և ֆինանսական հզոր միավորների ձևավորումից հետո, վերանում են բուրժուազիայի պարտավորությունները ժողովրդի և պետության նկատմամբ, նրանց ֆինանսական ռեսուրսներն այդ երկրի փոքր շուկայի հանգամանքով պայմանավորված հոսում են դուրս, և էլիտայի ու ժողովրդի, ինչպես նաև պետության ու ժողովրդի միջև ձևավորվում է սոցիալական անտագոնիզմ ու բներացում, որոնք վտանգավոր են դառնում պետության հետագա գոյության համար:

Կա ավելի վտանգավորը. եթե որևէ փոքր երկրի ռազմական նշանակության միավորները (*կապի համակարգ, էներգակիրներ, զագ, երկաթուղի, հանքեր և այլն*) պատկանում են օտար գերտերության ընկերություններին, իսկ տեղական խոշոր սեփականատերերի և բարձր պաշտոնյաների ֆինանսները գտնվում են երկրից դուրս՝ արտաքին վերահսկողության ու սառեցման վտանգի տակ, և գերտերության աշխարհաքաղաքական շահերը սկսում են փոխվել ու հակադրվում են փոքր երկրի շահերին, ապա փոքր և տնտեսապես թույլ երկիրը կանգնում է ոչ միայն պետականությունը կորցնելու վտանգի, այլ նաև ազգային աղետի առջև:

Պետության մեջ հասարակության սոցիալական բներացումները պարատ հոդ են նաև դրսից պատվիրված «հեղափոխությունների» համար, որոնք ոչ թե լուծում են փոքր պետության ներքին խնդիրներն ու ներկայացնում ժողովրդի շահերը, այլ փոխում են միմիայն փոքր երկրի՝ օրինակ արևելքից դեպի արևմուտք «վասալային» ենթակայությունը և ապահովում են տեղական խոշոր սեփականատերերի շարքերում միայն անձերի փոփոխություն: Արդյունքում՝ պահպանվում է նույն տընտեսաքաղաքական կացութածերի կլանային համակարգը նոր անձերով, որտեղ ժողովրդի շահերը նորից մնում են անտեսված:

Կոնկրետ Հայաստանի Հանրապետության համար՝ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԻՑ արդեն 30 տարի անց՝ ներկա տնտեսական, քաղաքական, արտաքին ու ներքին իրավիճակների արդյունքներից ելնելով, կարող ենք թվարկել անհերքելի մի շարք գործուներ, որոնք հստակ ցույց են տալիս, որ մեր պետականությունն ու ազգը լուրջ

<sup>10</sup> Carroll Quigley, “Tragedy and Hope: A History of the World in Our Time”, NY, 1966, pg 324.

<sup>11</sup> Նույն տեղում:

սպառնալիքի տակ են գտնվում, և երկիրն այս տնտեսաքաղաքական համակարգով, որն իրականում «Վարչաօլիգարխիկ կլանային» է, չի կարող զարգանալ ու դիմակայել այսօրվա աշխարհաքաղական մարտահրավերներին:

## ԳՈՐԾՈՒՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ

1. *Հայաստանի Հանրապետությունում ներմուծման ծավալները երեք և ավելի անգամ զերազանցում են արտահանման ծավալները<sup>12</sup>, քանի որ ՀՀ շուկայի նկատմամբ հիմնականում մենաշնորհներով օժտված ներկրողների համար առավել ձեռնատու է ներմուծելով շահույթ ստանալ, քան արտադրություններ կազմակերպելու համար երկարաժամկետ ներդրումներ անել:*

2. Քանի որ Հայաստանի Հանրապետության ՇՈՒԿԱՆ շատ փոքր է, մենաշընորհներով օժտված օլիգոպոլիաները ոչ միայն ամբողջովին սպանում են փոքր և միջին բիզնեսը, այլ նաև շուկայի փոքրության պատճառով ֆինանսական ռեսուրսները սկսում են երկրից հոսել դուրս<sup>13</sup>:

3. Համաձայն ՄԱԿ-ի «Մարդկային զարգացման զեկույցի» տվյալների, Հայաստանի բնակչության մոտ 75%-ը չի հարկվում<sup>14</sup>:

4. *Մոտավոր հաշվարկներով ՀՀ տնտեսության մոտ երեք քառորդը ստվերային է, և փորձագետների գնահատականներով մեր երկրում կորուստները կոռուպցիայի գծով կազմում են տարեկան մոտ մեկ միլիարդ դոլար»<sup>15</sup>:*

5. Բյուջեի միջոցներով կամ արտաքին վարկեր վերցնելով՝ պարտքերով, երկրի տնտեսությունը կարգավորել ու թոփշրած զարգացնել՝ հնարավոր չէ:

6. *ՀՀ-ում դրսից՝ արտաքին լայնամասշտար ներդրումների ակնկալությունն անիրական է մի շարք պատճառներով՝ ՀՀ-ում շատ փոքր շուկա, սակավարիկ հումք, տարանցիկ երկիր չէ և այլն, սակայն գլխավոր պատճառներից է նաև այն, որ արտաքին լայնամասշտար ներդրումները կարող են հակադրվել ներմուծմամբ շահույթ ստացող և տեղական շուկան տիրապետող մենաշնորհներով օժտված տեղական օլիգոպոլիաների շահերին. այսինքն՝ վարչաօլիգարխիկ տնտեսաքաղաքական համակարգում նման քաղաքականության իրականացումը հնարավոր չէ:*

7. Ողջ աշխարհը, նույնիսկ առաջավոր երկրները, պայքարում են ՇՈՒԿԱՆԵՐԻ ու իրենց ապրանքների մցունակության համար: Եվ ուրեմն, հայրենական արտադրության ապրանքների արտահանումն ընդլայնելու համար անհրաժեշտ են

գերպետությունների կողմից արտաքին շուկաները ՀՀ-ի համար բացելու քաղաքական որոշումներ, որոնք առանց ՀՀ պետության կողմից հատուկ ծրագրված, մշակված ու հետևողական քաղաքականության՝ հնարավոր չեն իրականացնել: Սակայն երկրի զարգացման համար նման թիրախային ռազմավարությունը մեր երկրում արդեն հաստատված օտարերկրյա ընկերությունների կամ նրանց ազդեցության տակ գտնվող և տեղական շուկան տիրապետող օլիգարխների ու նրանցից կազմված վարչաօլիգարխիկ տնտեսաքաղաքական համակարգի համար հետաքրքիր չեն: Տեղական օլիգարխներն անգամ անկախությունից 30 տարի հետո, նույնիսկ պատերազմի՝ արտաքին վտանգի մշտական առկայությամբ, ձեռք չբերեցին պետականամետ հասունություն, չենավորեցին միասնական կազմակերպվածություն ու երկրի զարգացմանը նպաստող ծրագրային ռազմավարություն:

8. Եթե երկրի իրար հաջորդած կառավարությունների վարած քաղաքականության շնորհիվ ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորները (*կապ, էներգիա, զագ, երկաթուղի, հանքարդյունաբերություն և այլն*) օտարերկրյա ընկերությունների կամ նրանց ազդեցության տակ գտնվող տեղական օլիգոպոլիաների մենաշնորհային սեփականությունն են, որոնց ֆինանսական ռեսուրսները գտնվում են օտար երկրներում, ապա այդ երկիրը ոչ միայն չի կարող համարվել ազգային, այլ նաև չի կարող լինել ինքնիշխան (սուվերեն) պետություն, տնտեսապես անվտանգ և զրկված է որևէ հիմնարար ռեֆորմների հնարավորությունից:

9. Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին պարտքի տարեկան ավելացումներով, որը վաղուց անցել է անվտանգության սահմանը, արտաքին պարտքի սպասարկումով և ներկա վարչաօլիգարխիկ տնտեսական համակարգի առկայությամբ, եթե մինչև անգամ ժամանակ առ ժամանակ ունենա տարեկան 10-12% տրնտեսական աճ, ապա նույնիսկ 10 տարի հետո չի կարող ունենալ բնակչության ընդհանրական կենսամակարդակի կրկնակի բարելավում<sup>16</sup>:

10. Այս թյուր կարծիքը, թե Թուրքիայի ու Աղրբեջանի հետ սահմանների բացումն իբր տարանցիկ երկիր կդարձնի Հայաստանի Հանրապետությունը և ազատ առևտրի հաստատումով երկրի տնտեսությունը թոփշրած կզարգանա ու բնակչության ընդհանուր կենսամակարդակը կվրենապատվի՝ անհեթեթություն է: Կշահեն միայն որոշ օլիգարխներ, սակայն թուրքական ապրանքների հետ մրցակցության արդյունքում առաջին հերթին կտրուկ կլրճատվի Հայաստանի գյուղատնտեսական արտադրությունը (քանի որ փոքր երկրի արտադրողականությունը ցածր է): Հարված կհասցվի երկրի տնետսությանն ու հատկապես գյուղին, քանի որ երկրի

<sup>12</sup> Թաթուլ Մանասերյան, «Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր», Երևան, 2014թ., էջ 245:

<sup>13</sup> Նույն աղյուր, էջ 623:

<sup>14</sup> www.undp.org

<sup>15</sup> Թ. Մանասերյան, նույն աղյուր, էջ՝ 628, 296:

<sup>16</sup> Համեմատություն՝ ՀՀ-ի ՀՆԱ-ն 13.7 մլրդ. դոլար է, փոքրիկ Ալովակիայինը՝ 117.664 մլրդ.:

ՀՆԱ-ի շուրջ 12-14%-ը կազմում է զյուատնտեսական արտադրությունը և զբաղված-ների 24.3 %-ն ընդգրկված են զյուղատնտեսության ոլորտում<sup>17</sup>: Տեղի կունենա զյուղական բնակավայրերից արտահոսք և արտագաղթ, և երկրի մի շարք տնտեսական ոլորտներ կնկնեն թուրքիայից անմիջական կախվածության մեջ:

11. Լեռնարդյունաբերական հում կամ հարստացված հումքի արտահանումը փոխարինել վերամշակված ապրանքային արտադրությամբ ու արտահանմամբ հնարավոր է միայն ահոելի կապիտալ ներդրումների, արևմտյան տեխնոլոգիաներով հազեցված գործարանների կառուցման դեպքում, սակայն այդ ռազմավարական նշանակության գործարանների մասնավոր սեփականության հիմքով եկամուտների բախչման համակարգը չի կարող դառնալ այն հենարանը, որ պետության եկամուտները նշանակալի ավելանան կամ բնակչության ընդհանրական կենսամակարդակը կրկնակի աճ ունենա մոտակա 7-10 տարիների ընթացքում:

12. Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ տնտեսական ազատ շուկայական նույնիսկ ամենակատարյալ մողելի դեպքում հնարավոր չէ, որ երկիրը ներքին կամ արտաքին ազդակներից առաջացած ճգնաժամային իրավիճակներին լիարժեք պատրաստ լինի հակազդելու՝ թե՝ արձագանքող (re-active), թե՝ նախաձեռնող (pro-active) տնտեսական քաղաքականություն գործարկելով<sup>18</sup>:

Եվ ուրեմն, եթե հայ ժողովուրդը՝ նրա քաղաքական մտավորականությունը և հատկապես տնտեսական ու վարչական էլիտան, հասկանում են մեր երկրի առաջ կանգնած տնտեսագիտական արքիոմաների հիմքով վերը ներկայացված փաստացի ՓԱԿՈՒՂԻՆԵՐԸ և չեն ցանկանում, որ առաջիկայում տեղի ունենա պետականության փլուզում կամ կորուստ, ապա պետք է ըմբռնեն, որ նման իրավիճակից դուրս գալու միակ ԵԼՔԸ հնարավոր է տնտեսական կացութաձևի և դրան համապատասխան կառավարման ինստիտուցիոնալ ողջ համակարգի փոփոխությամբ:

Ի վերջո, Հայաստանի Հանրապետության համար ստեղծված այսօրվա քաղաքական վտանգավոր իրավիճակն ունի շատ ավելի խորը պատճառներ: Այն միայն պայմանավորված չէ ՀՀ ղեկավարության վարած տաղանդավոր կամ տգետ քաղաքականությամբ, քաղաքական կամ տնտեսական մարտավարական սխալներով, կոռուպցիայի դեմ անբավարար պայքարով կամ անձերի դավաճանությամբ և այլն: Պետությունը տնտեսաքաղաքական ինստիտուցիոնալ մեխանիզմ-համակարգ է, և եթե այդ համակարգը թույլ է տալիս գերվտանգավոր խաթարումներ ու ենթակա է փլուզման, ուրեմն այդ համակարգն անպետք է:

1990-ականների երկրի իշխանություններն իրենց արբանյակներով «Սեփականաշնորհման» անվան տակ արմատապես թալանեցին ու փլուզեցին ՀԽՍՀ-ի ՀՆԱ-ն, տնտեսական ողջ հնարավորություններն ու կարողությունները: Եվ մենք սկսեցինք կառուցել «ազատ շուկայական» հարաբերություններով տնտեսաքաղաքական համակարգ, որն իրականում կարելի է բնութագրել որպես «Անարիտ կապիտալիզմ»<sup>19</sup> ամենավատ դրսերում: Հայաստանում, այսօր գործող մասնավոր հատվածի հիմնական մասի ձևավորումը տեղի ունեցավ բնակչության ունեզրկման, հայրենիքից միլիոնից ավելի արտագաղթածների, ազգային և հանրային հարստությունների թալանի ու մասնավորեցման, ինչպես նաև ՀԽՍՀ-ի ՀՆԱ-ի ողջ տնտեսական կարողությունների փոշիացման ու թալանի արդյունքում<sup>20</sup>, և շարունակվեց Ռուսաստանի Դաշնության օլիգապոլ ընկերություններին Հայաստանի ռազմավարական միավորների նկատմամբ մենաշնորհային իրավունքների փոխանցմամբ: Եվ, թեև 1992-1994թթ. հայ ժողովրդի ինքազոհաբերության արդյունքում մենք հաղթեցինք Արցախյան պատերազմում ու ստեղծեցինք երրորդ աշխարհի «Քվազի-պետության»<sup>21</sup> տեսակին մոտ պետական համակարգ, բայց այսօր, որպես արդյունք, մենք ունենք պարտված պետություն և համակարգ, որն իր հնարավորություններով, 30% աղքատության ցուցանիշով, հասարակության սոցիալական խավերի բեվեռացվածությամբ ու անտագոնիզմով, տնտեսաքաղաքական վարչաօլիգարխիկ բոնապետական համակարգով և վերջապես, Ռուսաստանի՝

<sup>19</sup> P. Marshall, “Demanding the Impossible: A History of Anarchism”. London, 1992, pp. 564-565. Անարիտ-կապիտալիզմը տեսություն է, որը պաշտպանում է կենտրոնացված պետությունների վերացումն իշխանականության համակարգի, որը պետք է գործի մասնավոր գործակալությունների, ազատ շուկաների և սեփականության իրավունքի ազատաթիրավական մեկնաբանության միջոցով: Պիտեր Մարշալի բնութագրմամբ անարիտ կապիտալիստները դեմ են պետությանը պարզապես այն պատճառով, որ նրանք առաջին հերթին կապիտալիստ են ու նրանց չի մտահոգում կապիտալիզմի վատ հետևանքները՝ սոցիալապես անապահովների վիճակն ընդհանրապես:

<sup>20</sup> 1997 թվականին, ըստ ՀՀ Վարչապետ Արմեն Սարգսյանի պաշտոնական հայտարարության, 800 հազար ԱՄՆ դոլարի դիմաց «սեփականաշնորհվել» է (իսկ իրականում ժողովրդի սեփականությունն ապապետականացվել է) ՀԽՍՀ-ի տնտեսական կարողության 55%-ը: Տե՛ս Թ. Մանասերյան, նույն աղբյուր, էջ 297, և «Եղիցի Լույս» ամսագիր, ԱՄՆ, 1997թ., #4:

<sup>21</sup> Քվազի՝ Quasi = «զրեթե», «իբր թե», - ձևական, թիվ թե շատ իրականին մոտ: R. H. Jackson, Quasi-States. Sovereignty, International Relations and the Third World , Cambridge, 1993. Ռ. Զաքսոնը «քվազի-պետություն» բնութագրում է միջազգային իրավունքի հիմքով ձևաչափական սուլքեկտ-երկիր, որն իրականում վասալային է և չի կայացել որպես լիարժեք ինստիտուցիոնալ պետություն. ինքնիշխան, ներքին կայունությամբ ու իրավական համակարգով ինստիտուցիոնալ հաստատուն պետություն չէ:

<sup>17</sup> Տե՛ս 2019թ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն՝ <https://mineconomy.am/page/1326>:

<sup>18</sup> Թարուլ Մանասերյան, նույն աղբյուր, էջ 812:

դեպի Թուրք-Ադրբեջանական տանդեմ աշխարհաքաղաքական վեկտորի փոփոխության պայմաններում չի կարող դիմակայել մեր տարածաշրջանային միջավայրում առկա գործոնների ներկա և զալիք մարտահրավերներին:

**Եթե Հայաստանի Հանրապետությունում տնտեսաքաղաքական համակարգը չի աշխատում տարածաշրջանում առկա գործոններով պայմանավորված միջավայրում (տարածք-փոքր շուկա, թշնամի հարեաններ, բավարար կոմունիկացիաների բացակայություն, բնակչության փոքր թվաքանակ, բնական փոքրաթիվ ռեսուրսներ և այլն) և եին համակարգի գործարկմամբ չկա ելք ու լուծում, որը փաստված է ՀՀ անկախության 30 տարվա մեր փորձառությամբ, ապա ոչ թե պետք է մոտածել եին համակարգի բարեկավման մասին, այլ պետք է փոխել համակարգը:**

Պետականության կորստի դեպքում մենք բոլորս ենք կորցնելու՝ թե՝ աղքատը, թե՝ մեծահարուստը: Եվ եթե իմանովին չվերանայվի ու չփոխվի մեր երկրի ներկա կացութածեր՝ **սեփականության հիմքով տնտեսական համակարգն ու դրան համապատասխան կառավարման ինստիտուցիոնալ համակարգը**, որը պետականության հենքն ու նախապայմանն է, ապա մեր փոքրիկ երկրում երբեք չի լինի հասարակության միասնականություն, չի վերանա հարուստների ու աղքատների սոցիալական անտագոնիզմը, ժողովուրդ և պետություն տարանջատումը, աղքատությունը, արտագաղթով պայմանավորված ժողովրդագրական աղետը և այլն, որոնց վերջնական կայանը կարող է լինել պետականության կորուստը:

**Մենք պետք է ստեղծենք մեր երկրի համար աշխատող այն լավագույն տնտեսաքաղաքական կացութածեի մոդելն ու դրան համապատասխան կառավարման ինստիտուցիոնալ համակարգը, որտեղ կլինի հասարակության միասնականություն, որտեղ թե՝ խոշոր սեփականատերը, թե՝ աշխատող քաղաքացին կարող է լինել սեփականության նկատմամբ գործընկեր («Այսակայի մշտական հիմնադրամ» համակարգի մեթոդ), որտեղ կլինի հասարակության սոցիալական շերտերի պահանջների բավարարում (Նորվեգիա, «Upgåva» կորպորատիվիզմ» համակարգի մեթոդ), և յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի շոշափելի կզքա, որ ի՞նքն է իր երկրի տերը:**

Աշխարհի տարբեր երկրներում, հատկապես ազգային միատարրությամբ փոքր երկրներում (Նորվեգիա, Ֆինլանդիա, Իսլանդիա, Շվեյցարիա, Դանիա), որտեղ տեղի է ունեցել **Խառն-համադրված տնտեսական կացութածեի** էվոլյուցիոն փոփոխություն, նաև հաջողվել է շնորհիվ այդ երկրների միապետների կամ ֆինանսատընտեսական ու վարչության էլիտաների նախաձեռնության կամ առնվազն այդ երկրների տնտեսական էլիտաների կողմից արհմիությունների նախաձեռնությանը չդիմադրելու շնորհիվ, քանի որ ազգային ու պետական շահը նրանց համար առաջնային է համարվել ու նաև այդ էլիտաները հասկացել են, որ ի վերջու երկարաժամկետ հեռանկարով, նրանք ոչ թե կորցնում, այլ միայն շահում են:

**Խառն-համադրված տնտեսական կացութածեի** տարբեր դրսնորումներ որդեգրած երկրների շարքում, որոնք կարծ ժամանակահատվածում կարողացել են արձանագրել աննախադեպ թոփչքածե տնտեսական աճ, ընդգրկված են ոչ միայն Սկանդինավյան երկրները, այլ նաև արաբական և հեռավոր արևելյան մի շարք երկրներ (Քաթար, Բահրեին, Զինաստան, Մալազիա, Սինգապուր և այլն), որտեղ կիրառվում են բնական ռեսուրսների նկատմամբ հանրային սեփականության ու պետության կողմից տնտեսության կենտրոնացված պլանային ձևաչափերը:

ԽԱՌՆ-ՀԱՄԱԴՐՎԱԾ կացութածեի ձևաչափով համակարգեր կիրառող երկրներում ապահովված են թե՝ 100% **մասնավոր** բիզնես-միավորների, թե՝ **հանրային կոպերատիվ**, թե՝ **հանրային-մասնավոր**, թե՝ **մասնավոր-պետական** տնտեսական խառն-համադրված ձևաչափերով բիզնես միավորների համատեղ և իրավականորեն պաշտպանված գոյությունը:

Ի՞նչ է հարկավոր Հայաստանի Հանրապետությանը, որպեսզի հասարակության միասնականությամբ դառնա ուժեղ ու կայուն, տնտեսությամբ՝ թոփչքածե զարգացող, աստիճանաբար ձերբագատվի ՎԱՍՍԱԼԱՅԻՆ կարգավիճակից և արտաքին ու ներքին վտանգավոր գործոնների ազդեցություններից, որն ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայացման գլխավոր գրավականն է:

Պատասխանը շատ հստակ է. անհրաժեշտ է՝

ա) իրական ժողովրդավարություն (ու և բնութագրումները՝ 6-8 էջերում),

բ) օրենքի դիկտատուրա՝ օրենքի գերակայություն բոլորի՝ համար՝ անկախ պաշտոնեական կամ սոցիալական դիրքից,

գ) տնտեսության կենտրոնացված պլանային ձևաչափով կացութածեի փոփոխություն՝ անցում խառն-համադրված տնտեսական կացութածեի, որը կարող է ապահովել երկրի տնտեսական զարգացումն ու անվտանգությունը:

Ի վերջո, որևէ երկրի ՏՏԵՍՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ քաղաքական, տընտեսական, իրավական, սոցիալական, ռազմական, բնապահպանական և ժողովրդագրական խնդիրների հաշվառմամբ այն իրատեսորեն կազմակերպված ինստիտուցիոնալ ՀԱՄԱԴՐՎԱԾ է, որն ապահովում է երկրի համար կենսական ռեսուրսների հավասարակշռված գործունեությունը և պահպանում է երկրի հաստատուն ու բնականուն զարգացումը: Արդյո՞ք մենք ունենք երկրի տնտեսական անվտանգությունն ապահովող պետական ինստիտուցիոնալ նման համակարգ: Ո՞չ: Արդյո՞ք որևէ օտար երկիր մեզ համար կստեղծի մեր պետականության համար անհրաժեշտ տնտեսական անվտանգության այդ ցանկալի համակարգը: Ո՞չ: Արդյո՞ք պետականությունը չկորցնելու համար մեզ անհրաժեշտ է ունենալ վերևում բերված սահմանմանը համապատասխան համակարգ: Այս՝ :

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՆՁՐԱԺԵՇՏ ՀԱԶՈՐԴԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

1. Կենտրոնացված պլանային տնտեսության ձևաչափի կիրառմամբ անցում **Խառն-համադրված տնտեսական կացութաձևի:**

2. **Խառն-համադրված տնտեսական կացութաձևին համապատասխան վերափոխել երկրի կառավարման ինստիտուցիոնալ ողջ համակարգը:**

3. Կիրառել ընդունված օրենքների գերակայություն բոլորի՝ համար և ապահովել հասարակության միասնականությունը:

4. «**Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը**<sup>22</sup> ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՍՄԲ պետք է ամրագրվի որպես անկախ մարմին, որի իրավունքներն ու լիազորությունները սահմանվում են ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՍՄԲ և սահմանադրական օրենքներով: ՀԻՆՄԱԴՐԱՄԸ հաշվետու է երկրի ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ:

5. Կրճատել ներմուծման ծավալները՝ դրանք փոխարինելով հայրենական արտադրությամբ: Ստեղծել **հանրային-մասնավոր ձևաչափի ձեռնարկություններ** և ըսկսել **պետպատվերների** հնարավոր ողջ ծավալն ուղղորդել դեպի **Խառն-համադրված ձևաչափի ձեռնարկություններ՝ կտրուկ կրճատելով ներմուծման ծավալները**, և դառնալ առաջնային անհրաժեշտության սպառողական ապրանքների առումով հնարավորինս ինքնաբավ տնտեսությամբ երկիր: Եվ, տնտեսության կենտրոնացված պլանային կառավարմամբ վերահսկել և ուղղորդել երկրի ներքին շուկան:

6. Առնվազն 51%-ով ազգայնացնել Հայաստանի ռազմավարական **քացառիկ նշանակության** տնտեսական միավորները:

7. Ընդլայնել ՀՀ արտադրատեսակների համար ներքին և արտաքին սպառողական շուկան. ձևավորել **Հայաստան-Սվյուտք միասնական տնտեսական ցանցային շուկա** (տե՛ս 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ հիմնադրույթները. էջ՝ 26-30):

8. Համազգային բոլոր (ֆինանսական, մտավոր, մասնագիտական և այլն) կարողությունների կենտրոնացումով դառնալ տարանցիկ երկիր՝ կառուցել Իրանի սահմանից մինչև Վրաստանի սահման երկաթուղային և ավտոճանապարհային ուղիներ, ունենալ սեփական լաստանավային համակարգեր թե՛ Վրաստանի Սևծովյան, թե՛ Իրանի Կասպիցծովյան և թե՛ Պարսից ծոցի նավահանգիստներում:

9. Ունենալ ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգ, որտեղ բացի պրոֆեսիոնալ բանակից, պետք է երկրի ողջ բնակչությունն ունենալ զինվորական պատրաստություն:

<sup>22</sup> Այս անվանումը շրջանառության մեջ է դրել Վլադիկ Ներսեսյանը: Ներսեսյանը: Արքայություն: Վ. Ս., «Մանիֆեստ օ ցիվիլիզմե»: Մ., 2000. Ծ. 22: Մեր համոզմամբ «**Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ**» անվանումը պետք է վերափոխել՝ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ անունով, սակայն այս աշխատության մեջ, հարգանքի տուրք մատուցելով ակադեմիկոս Վ. Նեսեսյանը անձին ու նրա աշխատանքային վաստակին, հարկ համարեցինք նրա կողմից օգտագործած անվանումը թողնել նույնությամբ:

Մարդկային հասարակության զարգացման տասնյակ հազարավոր տարիների ընթացքի պատմությունը ցուցել է, որ յուրաքանչյուր հասարակական-տնտեսական կացութած բնութագրվում է իրեն հատուկ սեփականության ձևով: Եվ իշխող էլիտաների կողմից հասարակության կառավարումն ու վերահսկումն իրազործվել է սեփականության տիրապետման հետևյալ հիմնական գործիքներով՝ — ՄԱՐՄԻՆԸ՝ ստրակտիրական հասարակարգ,

— ՀՈՂԸ՝ ֆեոդալական հասարակարգ,

— ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ նյութականացված աշխատանքի տիրապետում, - կապիտալիստական և ֆինանսական իմպերիալիզմի հասարակարգ:

ԽՍՀՄ-ի հասարակական-տնտեսական կացութաձևեր կարելի է բնորոշել միայն որպես ֆեոդալական տնտեսական հասարակարգի բարձրագույն և յուրօրինակ փուլ՝ «Աղմինիստրատիվ ֆեոդալիզմի» արտահայտություն, քանի որ թե՛ մարդը, թե՛ հասարակությունը, զրկված էին թե՛ հողի, թե՛ բնական ռեսուրսների և թե՛ արտադրության միջոցների նկատմամբ սեփականության իրավունքից և ունեին միայն անձնական սահմանափակ սեփականություն ունենալու իրավունք:

Ազգային գաղափարաբանությամբ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ չի կարող գոյություն ունենալ վերոնշյալ հասարակական-տնտեսական կացութաձևերի հիմքով, քանի որ ազգային պետությունում ամենամեծ արժեքը պետք է լինի եթևոսի վերարտադրությունն ապահովող ընտանիքը՝ նրա բարեկեցությունն ու անվտանգությունը:

2-րդ համաշխարհային պատերազմից հետո և հատկապես 1970-ականներից Այսակայում և Սկանդինավյան էթնիկ միատարր մեծամասնությամբ երկրներում սկսվեց ձևավորվել հասարակական-տնտեսական նոր կացութաձևի նախատեսակ, որը թեև կոչվում է տնտեսական մոդել (Nordic model), սակայն իրականում քաղաքացիական սեփականության հիմքով տնտեսահասարակական մոդել է, որը կարող է վերաձել տնտեսական նոր կացութաձևի: Եվ ինչպես ՈՒ ակադեմիկոս Վ. Ներսեսյանը է բնորոշել՝ «**Բոլորին քաղաքացիական սեփականությամբ օժտելն արմատապես փոխում է բոլոր գույքային հարաբերությունները և բուն սոցիալական և պետական-իրավական համակարգի տեսակը**<sup>23</sup>: Իսկ մեր համոզմամբ, եթե «Քաղաքացիական սեփականության» ձևն իր մեջ ներառում է հողի, օդի, ջրի, բնական բոլոր ռեսուրսների և հատկապես՝ երկրի ռազմավարական նշանակության միավորների նկատմամբ սեփականության գործարկում և **շրջանառու ներդրումային համակարգի կիրառումով ազգային սեփականությունը հաջորդ սերունդներին փոխանցելու համակարգ**, ապա այն դառնում է տնտեսական նոր կացութաձևը և ԱԶԳԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ համար իդեալական, քանի որ ԱԶԳԸ՝ ԷթնոՍԻ ԱՆՑԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ Է:

<sup>23</sup> Ներսեսյան Վ. Ս., «Մանիֆեստ օ ցիվիլիզմե»: Մ., 2000. Ծ. 22.

## ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎԻՉՄ

Այսօր, աշխարհում առաջավոր են համարվում «Այսակայի մշտական հիմնադրամ» և «Նորվեգիայի պետական կենսաթոշակային հիմնադրամ» անուններով բնական ռեսուրսների նկատմամբ քաղաքացիական՝ հանրային սեփականության տնտեսական ձևաչափերի հիմքով հիբրիդային տարատեսակները։ Այսինքն, այդ երկրներում նավթի բնական պաշարները համարվում են ազգային սեփականություն, յուրաքանչյուր քաղաքացի-բնակիչ հավասարաշափ համարվում է այդ սեփականության բաժնետեր և ունի անձնավորված շահութաբաժին։ *Սասնավոր կամ պետական-մասնավոր ձևաչափով ընկերությունները, որոնք արդյունահանում են այդ բնական ռեսուրսը, Նորվեգիայի կամ Այսակայի քաղաքացիական հիմնադրամներին՝ ռեսուրսի տիրոջը, վճարում են նրա բաժնեմասը որպես ԲՆԱՎՃԱՐ։ Իսկ այդ հիմնադրամներն իրենցից ներկայացնում են մշտական բնակիչների անձնավորված և հավասար բաժնեմասերով համակարգեր, որտեղ յուրաքանչյուր բնակիչ բաժնետեր է, ստանում է անձնավորված շահութաբաժին, վերահսկում ու մասնակցում է այդ հիմնադրամի կառավարմանը, սակայն նա չի կարող վաճառել կամ ժառանգությամբ օտարել իր բաժնեմասը։*

«Այսակայի մշտական հիմնադրամի» մոդելն ունի իր թերություններն ու առանձնահատկությունները։ Հայաստանում այդ մոդելը ներդնելու դեպքում, այն պետք է ոչ միայն վերափոխել և տեղայնացնել ըստ մեր երկրի առանձնահատկությունների և տնտեսական զարգացման նպատակային թիրախների, ինչպես դա արվեց մեր հարևան հրանում<sup>24</sup>, այլ նաև սեփականության ձևի փոփոխությամբ ընդլայնել ու հաստատել տնտեսահասարակական նոր կացութածել։

«Այսակայի մշտական հիմնադրամի» մեթոդի թերություններն են։

1. Այսակայի հիմնադրամի ֆինանսական միջոցները մինչև 2021 թվականը գոյանում են միայն նավթի շահագործման դիմաց ստացած բնօգտագործման համար տարեկան վճարումներից՝ մինիմում ոռյալտին 25%-ի չափով<sup>25</sup>։
2. Հիմնադրամի ներդրումները կատարվում են ֆոնդային բորսայում, որը որևէ ձևով չի նպաստում Այսակա նահանգի տնտեսական զարգացմանը։
3. Թեև հիմնադրամի ողջ կապիտալը հավասարաշափ և անձնավորված վերաբախշվում է Այսակա նահանգի մշտական բնակիչների միջև, սակայն

<sup>24</sup> Widerquist, Karl, Michael W. Howard, “Exporting the Alaska Model”, NY, 2012, pp. 17-32.

<sup>25</sup> 2021 թվականի Հունիսի 27-ի որոշումով Այսակա Նահանգում հաստատվեց բոլոր բնական պաշարների նկատմամբ որյալտի վճարում՝ մինիմում 25%-ի չափով։ Տե՛ս Այսակա Նահանգի 27/07/2021թ. որոշումը։ Սահմանադրության IX հոդված, 15-րդ բաժին՝ [http://www.akleg.gov/basis/get\\_documents.asp?session=32&docid=57250](http://www.akleg.gov/basis/get_documents.asp?session=32&docid=57250)

սկսած 1976 թվականից այդ հիմնադրամը որևէ շոշափելի գումար չի փոխանցել իր բնակչության որևէ անդամին, քանի որ բնակչության մեծամասնության որոշմամբ այն դեռ միայն կուտակում են։ Եվ փաստորեն, 45 տարվա ընթացքում ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հազարավոր շահառու անդամներ, որոնք մահացել են տարիքային կամ հիվանդության տարբեր պատճառներով, երբեք չեն օգտվել իրենց հասանելիք գումարներից՝ ի տարբերություն իրանական մոդելի, որտեղ յուրաքանչյուր բնակիչ-քաղաքացի շոշափելի օգտվում է նավթային միջոցներից առաջացած ներդրումային հիմնադրամից<sup>26</sup>։

Ի տարբերություն «Այսակայի մշտական հիմնադրամի» կամ «Նորվեգիայի պետական կենսաթոշակային հիմնադրամի», որոնք ազգայնացրել են երկրի բնական ռեսուրսներից միայն նավթի պաշարները, իսկ ներդրումային շրջանառությունն իրականացնում են միայն Ֆոնդային շուկայում՝ արժեթղթերի գամբյուլային փաթեթներում ներդրում կատարելով և ապահովում են 8% ֆիքսված շահույթ, Հայաստանի Հանրապետությունում «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» պետք է ունենա սկզբունքային և հայեցակարգային տարբեր առանձնահատկություններ։

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ գլխավոր խնդիրը պետք է լինի՝ տնտեսական միկրո և մակրո ենթակառույցների ստեղծումով ու ֆինանսավորմամբ խթանել երկրի տնտեսության զարգացումը և տնտեսության կենտրոնացված պլանային ձևաչափի կիրառումով հաստատել տնտեսական նոր կացութածել։ Եվ ուրեմն, Հայաստանի Հանրապետությունում «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» պետք է ունենա հետևյալ առանձնահատկությունները։

1) ՀՀ Անկախության Հոչակագրի 7-րդ կետի համաձայն պետք է կիրառվի երկրի բնական ԲՈԼՈՐ ռեսուրսների և ուղարկարական ԲԱՑԱՌԻԿ նշանակության տնտեսական միավորների նկատմամբ ՀՀ բնակիչների սեփականության իրավունքն ու դրանց շահագործման դիմաց ապահովվի շահագործող ընկերություններից տարեկան բնօգտագործման վճարների և երկամուտների ներհոսք դեպի ՀԻՄՆԱԴՐԱՄ։ Բնօգտագործման վճարումների (Royalty Payment) չափերը պետք է սահմանվեն արդյունահանվող ապրանքի արժեքից որոշակի տոկոսի գանձումով՝ ըստ միջազգային պրակտիկայում ընդունված հաշվարկման բանաձևների (*Օրինակ, մետաղական և ոչ մետաղական արդյունահանման համար որյալտի վճարումները սահմանված են ապրանքային արժեքի 3%-ից մինչև 25% չափերով*)<sup>27</sup>։

<sup>26</sup> Widerquist, Karl, Michael W. Howard, “Exporting the Alaska Model”, NY, 2012, pp. 17-32.

<sup>27</sup> “Mining Royalties, A Global Study of Their Impact on Investors, Government, and Civil Society”, 2006, Washington DC, The International Bank for Reconstruction and Development.

2) Հայաստանում «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ» ներդրումները պետք է կատարվեն երկրի տնտեսության զարգացման ազգային-համապետական ծրագրերում՝ քաղաքացիական հիմնադրամ և մասնավոր սեկտոր» 50%-50% բաժնեմասերով համադրված բաժենտիրական ձեռնարկությունների ստեղծմամբ, որոնք պետական հովանավորությամբ՝ պետապատվերի պայմաններում, պետք է ապահովեն պետության կողմից պատվիրակված երկրի հիմնական պահանջները բավարարող ինքնաբավ համակարգ և «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ» համար ապահովեն առնվազն 12.5%-15% շահույթ:

3) Քանի որ ՀԻՄԱԴՐԱՄ իր բնույթով կուտակային է և բնօգտագործման տարեկան ներհոսքների ու ներդրումներից առաջացած եկամուտների հաշվին դառնում է աճող և անընդհատական, ապա ՀԻՄԱԴՐԱՄՈՒՄ կուտակված շահույթի կեսը պետք է հավասարաշափ բաժանվի երկրի բնակչությանը՝ ՀԻՄԱԴՐԱՄԻ կայացումից 10-15 տարի հետո՝ սոցիալական երեք տեսակի՝ «Բուհական կրթաթոշակ», «Առաջին բնակարանը գնելու» և «կենսաթոշակի հավելում» փաթեթներով՝ ըստ յուրաքանչյուր քաղաքացու բաժնետոմսի համարում կուտակված դրամի շափի: Եվ, ՀՀ քաղաքացու որոշելիքն է, թե սոցիալական ո՞ր փաթեթը նա կնտրի: Այս երեք տեսակի սոցիալական փաթեթների անհրաժեշտությունը հիմնավորվում է մարդու որակյալ կյանքի համար երեք կարևորագույն պահանջներով ու տարիքային առանձնահատկություններով (18-27 տարեկան հասակ և 62-64 տարեկան՝ կենսաթոշակային հասակ): Նման թիրախային մոտեցումը նպաստում է որպեսզի ԱԶԳԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ մեջ կրթություն ստանալը, երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավումը և կենսաթոշակային ապահովությունը դառնան առաջնային:

4) Իրանական քաղաքացիական ՀԻՄԱԴՐԱՄՆԵՐՈՒՄ կուտակված ֆինանսական միջոցների կեսը՝ 1/2-րդը, հատկացվում է տնտեսության զարգացմանը, սակայն հայկական առաջարկվող տարբերակի համաձայն, ի տարբերություն «Այսակայի մըշտական հիմնադրամ»՝, երկրի տնտեսության զարգացման խնդիրը գլխավոր նպատակ է և ներդրումային գործառույթը կատարվում է երկրի տնտեսության մեջ՝ առանձնահատուկ թիրախային ձևաչափով (տե՛ս 2-րդ կետ): Սակայն, առաջարկվող հայկական տարբերակում անհրաժեշտ է, որ ՀԻՄԱԴՐԱՄԻ միջոցների 10%-ը հատկացվի համայնքների հանրային կարիքներին (հատկացուների շափը պետք է որոշվի ըստ համայնքի բնակչության թվաքանակի), իսկ 40%-ը հատկացվի ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ֆինանսավորմանը՝ հաշվի առնելով թշնամի հարևաններով մեր երկրի դիրքի հանգամանքը, որն ԱԶԳԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ և ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու գլխավոր խնդիրն է:

Սկանդալավան երկրներում ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎԻԶՄ համակարգը

տնտեսական եռակողմ կորպորատիվիզմի ձև է, որը հիմնված է կապիտալի և աշխատանքի շահերի սոցիալական գործընկերության վրա, որտեղ ազգային մակարդակով՝ կառավարության միջնորդությամբ, տեղի են ունենում բանակցություններ գործառուների և աշխատավորների խմբային ներկայացուցիչների միջև (արհմիություններ), որպեսզի տեղի չունենա երկու կողմերի շահերի բախում, այլ փոխզիջումային տարբերակով կապիտալի և աշխատուժի միջև կարգավորվի նրանց շահերի հակամարտությունը:

Մեր առաջարկած **ԱԶԳԱՅԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎԻԶՄ** համակարգում ոչ միայն նավթի, այլ բնական բոլոր ռեսուրսների և ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորների նկատմամբ է գործարկվում հանրային՝ ազգային սեփականության իրավունքն ու դրա գործնական կիրառումը: Առաջարկվող այս տարբերակում՝ **ԱԶԳԱՅԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎԻԶՄ** համակարգում, հաշվի են առնված ոչ միայն **հանրային**, այլ նաև **հանրային-մասնավոր** համադրված ձևաչափի ձեռնարկությունների ստեղծումով՝ **մասնավոր սեկտորի** շահերը: Այս համակարգում պետության կողմից պետապատվերների հնարավոր ողջ ծավալն ուղղորդվում է դեպի **հանրային-մասնավոր** տիպի ձեռնարկություններ՝ ապահովելով դրանց համար կայունություն ու շահավետություն, որը ենթադրում է տնտեսավարման կենտրոնացված պլանային համակարգ, որտեղ թե՛ հանրային, թե՛ մասնավոր սեկտորների շահերը դառնում են համադրված ու նրանց միջև վերանում է շահերի հակամարտությունը: Ավելին՝ **ԱԶԳԱՅԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎԻԶՄ** առաջարկվող համակարգը երկրի համար ապահովում է տնտեսության թոփքային զարգացում, երկրից կապիտալի արտահոսքի կասեցում և ուղղորդում դեպի տնտեսության ենթակառույցներ:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 26-րդ

Քաղաքացիական հարթակը պետք է ստանձնի պետության պատվիրատուի, իսկ պետությունը՝ կատարողի՝ դերը:

Ա) Ազգային-հանրային շահը պետք է լինի գերակա:

Բ) Ազգային-հանրային սեփականությունը պետք է լինի անօտարելի՝, և սեփականաշնորհման կամ մասնավորեցման համար ո՛չ ենթակա:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 27-րդ

Հիմք ընդունելով ՀՀ Անկախության Հռչակագրի 7-րդ և 12-րդ կետերը, ընդունել Սահմանադիր օրենք՝

Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, ինչպես նաև ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորները, նրա ժողովրդի

սեփականությունն են, որը մեկնաբանվում և սահմանվում է որպես ՀՀ քաղաքացիների անօտարելի սեփականություն, իսկ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ որպես կառավարման օպերատոր, քաղաքացիական ինստիտուտների հետ միասին, այդ ազգային հարստությունների կարգավորող ու վերահսկող մարմինն է:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 28-ՐԴ

Հայաստանի Հանրապետությունում ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ նշանակության տնտեսական միավորների նկատմամբ կիրառել՝

ա) ազգայնացում **առնվազն 51%-ի** չափով՝ գործարկելով բաց բաժնետիրական ձևաչափը,

բ) Ազգայնացված ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ նշանակության տնտեսական միավորները պետության կողմից պետք է ունենան **ՊԵՏԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՉԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ** և Հայաստանյան շուկայում երաշխավորված գերակշռող դիրք:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 29-ՐԴ

ՀՀ Սահմանադրությամբ արգելել մասնավոր ընկերությունների արտոնյալ մենաշնորհային կարգավիճակը կամ գերիշխող դիրքը շուկայում:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 30-ՐԴ

Պետության համար ռազմավարական հանդիսացող հանրային ծառայության ոլորտները և մունիցիպալ սպասարկման գործառույթ ունեցող տնտեսական միավորները պետք է լինեն ազգային՝ հանրային սեփականություն, որոնք կարող են գործարկել՝ աշխատել կապալային պայմանագրերով՝ **հանրային-կոպերատիվ, հանրային-մասնավոր, մասնավոր-պետական** խառն-համադրված տնտեսական ձևաչափերով բիզնես միավորների կողմից:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾՐՋԱՆԱՌՈՒ-ՆԵՐԴՐՈՒՄՎՅԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 31-ՐԴ

**«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՄԲ պետք է ամրագրվի որպես անկախ մարմին, որի իրավունքներն ու լիազորությունները սահմանվում են ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՄԲ և սահմանադրական օրենքներով: ՀԻՄՆԱԴՐԱՄԸ հաշվետու է երկրի ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ:**

1. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀՀ քաղաքացիների ազգային՝ **հանրային սեփականությունը** կառավարող գործիք է և ունի երկու հիմնական գործառույթ՝

ա) բնօգտագործման վճարների հավաքագրում,

բ) ներդրումային շրջանառության ապահովում:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ինքնավար մարմին է, որի կառավարում իրականացնում են քաղաքացիական ինստիտուտները՝ հոգաբարձուների խորհուրդները՝ պետական (մասնագիտական) վերահսկողությամբ:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ պետք է ունենա տեղական համայնքների քաղաքացիներից ընտրական ձևաչափով կազմված հոգաբարձուների քաղաքացիական ինստիտուտներ, որոնք պետք է մասնակցեն այդ ֆինանսական միջոցների կառավարմանը:

ՀԻՄՆԱԴՐԱՄԸ կառավարում ու վերահսկումն իրականացնող ՀՈԳԱԲԱՐՁՈՒՄԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ, պետք է լինեն **վարից դեպի վեր սկզբունքով**, քանի որ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ սկսվում է ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ հանրային սեփականությունից (հետիորհրդային տարիներին՝ 1992-2000թթ. ՀԽԱՀ-ում կային շուրջ ինը հարյուր /900/ համայնքներ և 36 շրջաններ) <sup>28</sup>:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՄԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ կարող են ձևավորվել երկու հարթությամբ. յուրաքանչյուր համայնքում բնակիչներն իրենց ընտրությամբ կազմում են 7 հոգուց բաղկացած հոգաբարձուների տեղական խորհուրդ, իսկ նրանց ներկայացուցիչներն ընտրում են շրջանային հոգաբարձուների խորհուրդ, որոնք ներկայացնում են Հայաստանի Հանրապետության 36 շրջանները: Այս համակարգում անպայման է նաև ներդնել ներկայացուցիչների ՀԵՏ ԿԱՆՉՄԱՆ ՄԵԽԱՆԻՋՄԻ գործարկումը:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ՝ հողը, օդը, ջուրը, ընդերքը և կենսաբանական ռեսուրսները շահագործող ընկերություններից պետք է ամենամյա ստանա **ԲՆՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ**, քանի որ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀՀ բոլոր քաղաքացիների սեփականությունն է, իսկ նշված բոլոր ռեսուրսների ՏԵՐԸ՝ ՀՀ մշտական բնակություն ունեցող ՀՀ քաղաքացիներն են:

#### Բացատրություն:

ԲՆՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ վճարը միջազգային պրակտիկայում կոչվում է ՌՈՅԱԼՏԻ ՎՃԱՐ կամ «Ռոյալտի տոկոս» (Royalty payment or Royalty interest), որը բառացի նշանակում է «Հոնորարի վճար» կամ «Սեփականատիրոջ վճար»: ՌՈՅԱԼՏԻ վճարման չափերը սովորաբար համաձայնեցվում են ակտիվի օգտագործումից ստացված համախառն կամ զուտ շահույթից տոկոսի կամ նման ապրանքի վա-

<sup>28</sup> Անհրաժեշտ է կանգնեցնել **«Համայնքների խոշորացում»** անվան տակ գյուղի և համայնքների վերջնական ավերումը: Այսօր գործարկվող **«Համայնքների խոշորացում»** ծրագիրն ուղղված է համայնքների հանրային սեփականության անհացմանը, համայնքները վարչական հրահանգներով իշխանության վարչակազմին ենթակա դարձնելուն, ինչպես նաև համայնքների ինքնակառավարումը կուսակցականացված մեթոդներով վերացնելուն:

ճառված միավորի դիմաց հաստատուն գնից, բայց կան նաև փոխհաստուցման այլ եղանակներ և չափումներ: Ռոյալտիի տոկոսադրույքն ապագա եկամուտներից վճարումների հոսք հավաքելու իրավունքն է: Մետաղական և ոչ մետաղական արդյունահանվող ապրանքների համար ռոյալտիի վճարումները միջազգային պրակտիկայում գործարկվում են 3%-ից մինչև 25% և ավելի չափերով: Օրինակ Ալյասկա Նահանգի 2021 թվականի Հուլիսի 27-ի որոշման համաձայն, Նահանգի Սահմանադրության մեջ փոփոխությամբ որոշում է կայացվել՝ Ալյասկայի բոլոր բնական պաշարների համար սահմանել նվազագույնը 25% ռոյալտի վճար<sup>29</sup>: Ռոյալտի վճարը և **պետական հարկը** լիովին տարբեր բաներ՝ տարբեր գործունեությունների վրա հիմնված ձևաչափեր են: ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ դիմաց ստացված ռոյալտի եկամուտը պետության կողմից նույնպես ենթակա է հարկման: Օրինակ, «Ալյասկայի մշտական հիմնադրամը» պետության կողմից հարկվում է<sup>30</sup>:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ֆոնդերը պետք է ներդրվեն «Քաղաքացիական հիմնադրամ և մասնավոր սեկտոր»՝ 50% - 50% բաժնեմասերով համադրված բաժենտիրական ձեռնարկությունների ստեղծման և գործարկման համակարգում, որոնք պետական հովանավորությամբ՝ **պետպատվերի** պայմաններում, կարող են ապահովել երկրի հիմնական պահանջները բավարարող ինքնաբավ համակարգ և ՀԻՄՆԱԴՐԱՄԻ համար ապահովել առնվազն 13-15% շահույթ (նույն չափով նաև մասնավոր սեկտորի համար):

**Հանրային-մասնավոր** տիպի ձեռնակությունները պետության կողմից պետք է լինեն հովանավորված՝ Հայաստանյան շուկայում պետք է ունենան երաշխավորված գերակա դիրք (պետության հարկային քաղաքականությամբ՝ հայրենական արտադրությանն աջակցելու համար երկիր ներմուծվող նմանատիպ ապրանքների համար պետք է սահմանի ավելի բարձր հարկայնություն):

**Հանրային-մասնավոր** տիպի ձեռնակությունները պետության կողմից պետք է նաև ունենան համապատասխան աջակցություն հայրենական արտադրության ապրանքները դեպի արտաքին շուկաներ արտահանելու համար:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ համապետական ԳՅՈՒՂԿՈՌԵՐԱՑԻ համակարգում հանդիսանում է ՖՐԵՆՉԱՅՉՈՐ և մասնավոր ընկերություններին՝ ֆրենչայզերին, մթերումների գործառույթ իրականացնելու իրավունքի ընձեռնման համար ֆրենչայզերի մաքուր եկամտից ստանում է տարեկան 2%-ի չափով վճարում (մանրամասն առջևում՝ ՀԱՍՍՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԿՈՌԵՐԱՑԻ բաժնում):

<sup>29</sup> Տե՛ս Ալյասկա Նահանգի 27/07/2021թ. որոշումը. Սահմանադրության IX հոդված, 15-րդ բաժին՝ [http://www.akleg.gov/basis/get\\_documents.asp?session=32&docid=57250](http://www.akleg.gov/basis/get_documents.asp?session=32&docid=57250)

<sup>30</sup> <https://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?article=1311&context=alr>

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ներդրումները պետք է կատարվեն միայն **անկորուստ և որի կայնություն չպարունակող ոլորտներում**<sup>31</sup> բնակարանաշինություն, էլեկտրաէներգիայի արտադրություն և խնայողություն, պետպատվերի հովանավորությամբ երկրի համար անհրաժեշտ ապրանքների արտադրություն, երկաթուղային ճանապարհներություն, ատոմակայանի նոր էներգաբլոկ և այլն:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ միջոցներն առաջանում են՝

ա) օդի, ջրի, հողի, լնողերքի և կենսաբանական ռեսուրսների շահագործման դիմաց **տարեկան հավաքագրվող բնավճարներից**,

բ) երկրի ռազմավարական բացառիկ նշանակության առնվազն 51%-ով ազգայնացված միավորներից ստացվող եկամուտներից,

գ) ԳՅՈՒՂԿՈՌԵՐԱՑԻ համակարգում մթերումներ իրականացնող մասնավոր ընկերություններից՝ ֆրենչայզերներից,  
և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ առաջացած եկամուտներից՝

դ) **հանրային-մասնավոր** համադրված ձևաչափով ստեղծված ձեռնարկություններից ստացվող եկամուտներից,

ե) համապետական նշանակության տնտեսական խոշորամասշտար ծրագրերում ներդրումներից առաջացած եկամուտներից:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ շահութաբաժնի իրավունք՝ շահառուի հավաստագիր՝ ԲԱԺ-ՆԵՄԱՍ, պետք է ունենա Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, որը յոթ տարի մշտական բնակվում՝ ապրում է Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ քաղաքցու համար **սահմանված պարտավորությունների** կատարողն է (հարկերի վճարում, բանակում ծառայություն և այլն):

10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ բաժնետոմսերը ՀՀ քաղաքցիների **անօտարելի սեփականություններ** են, սակայն **վաճառքի և ժառանգությամբ փոխանցման ենթակա չեն**:

11. Քանի որ ՀԻՄՆԱԴՐԱՄՆ իր բնույթով կուտակային է և բնօգտագործման տարեկան ներհուսների ու ներդրումներից առաջացած եկամուտների հաշվին դառնում է աճող և անընդհատական, ապա ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒ կուտակված ֆինանսական մասսայի 50%-ը պետք է հավասարաշափ բաժանվի ՀՀ քաղաքցիներին՝ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ կայացումից 10-15 տարի հետո՝ սոցիալական երեք տեսակի՝ **«Բուհական կրթաթոշակ», «Առաջին բնակարան գնելու» և «կենսաթոշակի հավելում» փաթեթներով {Օրինակ՝ ծնված օրվանից երեխան ստանում է իրեն հասանելիք կուտակային գումարն իր բաժնեքարտի վրա, որը միայն 18-ից 27 տարեկան հասակում կարող է օգտագործել կրթաթոշակի կամ իր 1-ին բնակարանը գնելու տեսրով, ինչպես նաև 62-64 տարեկանից սկսած՝ որպես կենսաթոշակի հավելում}:**

12. ՀԻՄՆԱԴՐԱՄՆ իր գործառույթի 1-ին և 2-րդ փուլերից հետո (տե՛ս 1-ին կետը) իր միջոցների 10%-ն ամենամյա փոխանցում է **համայնքների հանրային կարիք-**

**ներն** ապահովելուն (դպրոցների, ճանապարհների վերանորոգում և այլն):


13. **ՀԻՄՆԱԴՐԱՄՆ** իր գործառույթի 1-ին և 2-րդ փուլերից հետո (տե՛ս 1-ին կետը), ամենամյա՝ իր միջոցների 40%-ի չափով, մասնակցում է ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ֆինանսավորմանը:

14. **ՀԻՄՆԱԴՐԱՄՆ** թե՛ ներդրված ֆոնդերն են առաջնահերթությամբ հետ վերադարձում, թե՛ շրջանառու ներդրումներից առաջացած տարեկան եկամուտներն են մուտքագրվում ՀԻՄՆԱԴՐԱՄՆ:


15. **ՀԻՄՆԱԴՐԱՄՆ** ներդրումային թիրախները պետք է ընտրվեն ըստ երկրի տնտեսության համապետական զարգացման ծրագրերի:

16. **ՀԻՄՆԱԴՐԱՄՆ** ապահովում է երկրի ողջ բնական պաշարների և ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորների շահագործման դիմաց ստացված օգուտների արդար և հավասար բաշխումն այդ ռեսուրսների օրինական տերերի՝ ՀՀ քաղաքացիների միջև և շրջանառու ներդրումային կապիտալի տեսրով ապագա սերունդներին փոխանցումը:

## ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 1-ԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԲՆԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՏԵԱՅՅԱ ՍՈՒՏՔԱԳՐՈՒՄՆԵՐ



## ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2-ՐԴ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ՝ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ



Ներդրումներ  
Վերաբեր 12-15% ԸՆՉՈՒՅԹ

## ՀԱՆՐԱՅԻՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԽԱՎԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատերազմական իրավիճակում գտնվող երկրի համար ոչ միայն անհրաժեշտ է տնտեսաքաղաքական առաջավոր մողել, որը մեկ ամբողջական կուռ կառույցում կարող է ներառել հասարակության բոլոր խավերի շահերն ու ստեղծել շահերի միասնականություն, այլ նաև անհրաժեշտ է երկրի հիմնական պահանջները բավարարող հնարավորինս ինքնարապ տնտեսական համակարգ՝ ներմուծման ծավալների մեծացում:

Անհրաժեշտ է պետության նախաձեռնությամբ ստեղծել «Հանրային-մասնավոր» տիպի խառն-համադրված ձևաչափի ձեռնարկություններ՝ «Քաղաքացիական հիմնադրամ» և «Մասնավոր սեկտոր»՝ 50% - 50% բաժնեմասերով համադրված բաժենտիրական ձեռնարկություններ, որոնք պետք է իրականացնեն պետական հիմնական ծավալները:

Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչություններն իրենց կարիքների համար, պետպատվերի շրջանակներում, անհրաժեշտ գնումներ են կատարում ու դրանց ծավալները քիչ չեն: Սակայն իրականում պետպատվերներից հիմնականում միայն օգտվում են մենաշնորհներով օժտված ներկրողներն ու տեղական մասնավոր ձեռնարկությունները: Այս համակարգը նաև պարարտ հող է պետական չինովնիկների և մասնավոր սեկտորի զաղտնի համագործակցությամբ կոռուպցիայի և պետական միջոցների ոչ ռացիոնալ օգտագործման համար: Մյուս կողմից, շատ մեծ ծավալների են հասնում երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող թե՛ արդյունաբերական, թե՛ շինարարական և թե՛ զյուլատնտեսական ապրանքների (*այդ թվում՝ հացահատիկի*), ներմուծումները: 30 տարի պատերազմական իրավիճակում գտնվող երկրի համար նման տնտեսություն ունենալն անհարիր է և վտանգավոր: Անհրաժեշտ է ռազմավարական ապրանքների առումով երկրում ձևավորել հնարավորինս ինքնաբավ տնտեսություն: Եվ ուրեմն, պետպատվերների հնարավոր ողջ ծավալները պետք է կրճատել հօգուտ հայրենական արտադրության ապրանքների և դրանց արտադրության համար պատվերներն ուղղորդել դեպի «*հանրային-մասնավոր» տիպի ձեռնարկություններ:*

Օրինակ՝ ՀՀ Պաշտպանության Նախարարության համար անհրաժեշտ է գնել տարեկան մոտ 400 հազար կոշիկ, համազգեստ, փամփուշտ և այլն, որոնք պետությունը կարող է պատվիրել «*Քաղաքացիական հիմնադրամ և Մասնավոր հատված*» (*այսուհետ՝ ՔՄ տիպի*) ձեռնարկություններին, որոնց ստեղծման համար պետությունը որևէ գումար ներդնելու կարիքը չի ունենալու: Ներդրողը պետք է լինի «*Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը*» և *մասնավոր հատվածը*: Մասնավոր հատվածի համար շահեկան է ներդրում կատարել ու ստեղծել *ՔՄ տիպի*՝ 50% - հանրային և 50% - մասնավոր համադրված բաժնեմասերով արտադրական ձեռնարկություններ, քանի որ նմանատիպ ձեռնարկությունները պետության կողմից ապահովված կլինեն բոլոր արտոնություններով՝ շուկա գտնելու փոխարեն ապահովագրված պետպատվեր, ԱԱՀ-ից ազատում, հիմնադրումից հետո շահութահարկից ազատում՝ առաջին 3-5 տարիների ընթացքում, դեպի արտաքին շուկաներ ընդլայնվելու համար պետական աջակցություն և այլն:

### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 32-րդ**


Հայաստանի Հնարապետությունում անհրաժեշտ է համապետական մասշտաբով ստեղծել ՀԱՆՐԱՅԻՆ/ՄԱՍՆԱՎՈՐ (*«Քաղաքացիական-Մասնավոր» այսուհետ կօգտագործվի՝ ՔՄ տիպի հապակումը*) խառն համադրված ձեռնարկությունների ցանցային համակարգ, և պետության կողմից հնարավորինս բոլոր պետպատվերների իրականացումը պետք է ուղղվի դեպի *ՔՄ տիպի* ձեռնարկություններ:

1. **ՔՄ տիպի** ձեռնարկությունների բաժնեմասերը պետք է ունենան հետևյալ կառուցվածքը:
  - 50%-ը՝ «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» բաժնեմաս,
  - 50%-ը՝ մասնավոր սեկտորի բաժնեմաս,
  - պետությունը պատվիրատու է, չունի բաժնեմաս, սակայն պետպատվեր ապահովողն ու վերահսկողն է:
2. **ՔՄ տիպի** ձեռնարկությունների 50% բաժնեմասը պատկանում է **մասնավոր ընկերությանը**, եթե նա կատարում է իր հետևյալ պարտավորությունները՝
  - 50%-ի չափով ֆինանսական ներդրում,
  - սահմանված ժամկետներում արտադրական ձեռնարկության կազմակերպում,
  - ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ներկայացուցչության հետ համատեղ կառավարում,
  - հաշվետու է պատվիրատուին (պետություն) և «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամին» (գործընկեր):
3. **ՔՄ տիպի** ձեռնարկությունների 50% բաժնեմասը պատկանում է **«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամին»**, որի պարտավորություններն են՝
  - 50%-ի չափով ֆինանսական ներդրում,
  - պետպատվերի երաշխավորություն՝ պայմանագրով,
  - հաշվետու է պատվիրատուին (պետություն) և **մասնավոր ընկերությանը**:
4. Պետությունը՝ որպես պատվիրատու, **ՔՄ տիպի** ձեռնարկությունների համար երաշխավորում է՝
  - ԱԱՀ-ից ազատում (*Ավելացած արժեքի հարկ*),
  - շահույթահարկից ազատում՝ հիմնադրումից հետո առաջին 3-5 տարիներին,
  - դեպի արտաքին շուկաներ ընդլայնվելու համար պետական աջակցություն,
  - **ՔՄ տիպի** ձեռնարկությունների արտադրանքների համար Հայաստանյան շուկայում պետության կողմից հովանավորչական քաղաքականություն (նմանատիպ ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային բարձր վճարի գանձում և այլն):
5. **ՔՄ տիպի** ձեռնարկությունները պետք է լինեն առնվազն 25% մաքուր եկամուտ ապահովող ձեռնարկություններ: **ՔՄ տիպի** ձեռնարկությունների առաջացած եկամուտները բախչվում են ըստ 1-ին կետում ամրագրված բաժնեմասերի:
6. **ՔՄ տիպի** ձեռնարկությունը՝ «*հանրային-մասնավոր*» համադրված ձևաչափով բաժնետիրական համակարգ է, որտեղ որոշումները կայացվում են նրա կառավարման բարձրագույն խորհրդում՝ **մասնավոր սեկտորի, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ և պետության** մասնագետ ներկայացուցիչների կողմից:
7. **ՔՄ տիպի** ձեռնարկության համար մասնավոր ընկերության՝ գործընկերությունը, մրցութային է և հաստատվում է ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ու պատվիրատուի (պետություն) համաձայնությամբ՝ բացառելով երկրի մասշտաբով **ՔՄ տիպի** ձեռնար-

կությունների բաժնեմասերում մասնավոր ընկերությունների կամ անձերի կրկը-նությամբ կենտրոնացում:

8. **ՔՄ տիպի** ձեռնարկությունների **եռակողմ** վերահսկողությունը (պատվիրատու, հիմնադրամ, մասնավոր սեկտոր) և իրար նկատմամբ հաշվետվությունը հնարավորինս բացառում են խարդախության և կոռուպցիոն ռիսկերը:

9. **ՔՄ տիպի** ձեռնարկությունների հանրային մասի (50%) բաժնետոմսերն օտարաման ենքակա չեն:



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԽԱՌՈՆ ՀԱՄԱԳՐՎԱԾ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

**ՔՄ տիպի** ձեռնարկությունների ստեղծումը հնարավորություն է տալիս՝  
ա) ներկրումների կրծատման հաշվին հայրենական արտադրության ավելացում,  
բ) երկրի տնտեսության համար բազմաշերտ ենթակառույցների ձևավորում,  
գ) փոքր և միջին բիզնեսների ընդլայնման ու սատարման հնարավորություն,  
դ) հազարավոր աշխատատեղերի ստեղծում,  
ե) բնակչության ամրացում երկրում և սահմանամերձ շրջաններում,  
զ) նպաստում՝ սոցիալական միջին խավի ձևավորմանը,  
է) սեփականատերերի և աշխատավորների սոցիալական անտագոնիզմի մեղմացում և վերացում, քանի որ հիշատակված սոցիալական տարբեր սանդղակներում կանգնածները դառնում են բաժնետիրական ձևաչափով գործընկերներ,

- ը) ՀՀ դրամի շրջանառության արագացում և ակտիվացում,
- թ) Բնակչության կենսամակարդակի բարձրացում,
- ժ) պատերազմական իրավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության համար առաջին անհրաժեշտության ապրանքների (ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների) հայրենական արտադրություն՝ հնարավորիս ինքնաբավ տնտեսական համակարգի ձևավորում,
- ժա) անձնավորված բաժնեմասերով հանրային սեփականության ձևավորում,

որը ՀՀ քաղաքացիների համար ստեղծում է երկրի ՏԵՇԸ լինելու գիտակցություն,

ժբ) կենտրոնացված պլանային տնտեսության կազմակերպմամբ՝ ներքին և արտաքին ազդակներից առաջացող գննաժամային իրավիճակներին լիարժեք պատրաստ լինելու և պետության կողմից դրանց հակագողելու՝ թե՝ արձագանքող (reactive), թե՝ նախաձեռնող (pro-active) տնտեսական քաղաքականություն իրականացնելու հնարավորություն:

## ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԿՈՌՊԵՐԱՑԻՒՄ

### Տեղեկատվություն:

Գյուղատնտեսությունը մեր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է, որն ապահովում է երկրի ՀՆԱ-ի շուրջ 12-14%-ը: «2019 թվականի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի 97%-ն ապահովում են շուրջ 317 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում 1.48 հա հողատարածք: Հայաստանի Հանրապետության գրադաճների 24.3 %-ն ընդգրկված է գյուղատնտեսության ոլորտում»<sup>31</sup>: Սակայն երկրում գործող համակարգը նպաստում է, որ տեղական շուկայում մենաշնորհներով օժտված ընկերությունները հարստահարեն գյուղացուն. պարտադրեն մեծածախ գների իրենց համար ձեռնտու առաջարկ՝ ապահովելով գերշահույթ: Օրինակ, 2021 թվականին գյուղացուց մթերվող լոլիկի 1 կգիլոգրամի մեծածախ գինը եղել է 50 դրամ, իսկ տեղական շուկայում մանրածախ միջինացված գինը՝ 450-460 դրամ: Գոյություն ունեցող իբր «ազատ շուկայական» համակարգը հնարավորություն չի տալիս հայ գյուղացու կենսամակարդակի բարձրացում, խթանում է արտագաղթը, վլուգում է գյուղացիական տնտեսությունները և նպաստում է միայն մենաշնորհներով օժտված ընկերությունների ու վարչաօլիգարքիկ անձանց թոփշքած հարստանալուն: Եվ միայն գյուղատնտեսական ապրանքների ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ համապետական համակարգի՝ ԳՅՈՒՂԿՈՌՊԵՐԱՑԻՒՄ ստեղծումը կարող է նպաստել հայկական գյուղի շենացմանը, երկրում պարենային անվտանգության ապահովմանը և գյուղացու կենսամակարդակի բարձրացմանը:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 33-րդ

Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ստեղծել ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԿՈՌՊԵՐԱՑԻՒՄ:

Առաջարկվող ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԿՈՌՊԵՐԱՑԻՒՄ համակարգում կարելի

<sup>31</sup> Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն,  
<https://www.mineconomy.am/page/1326>

է օգտագործել «ՖՐԵՆՉԱՅՇԻՆԳ» բիզնես ձևաչափի շղթայական բազմաշերտ արևմբույան մոդելը<sup>32</sup>, որտեղ «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» պետք է հանդես գա մենաշնորհով օժտված ֆրենչայզոր, իսկ մասնավոր ընկերությունները՝ ֆրենչայզի: Այս համակարգում՝ 1) ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, 2) «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» և 3) ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ֆրենչայզին, ունեն հետևյալ դերակատարումներն ու գործառույթները:

**1) ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:** Պետությունը՝ «Էկոնոմիկայի նախարարությունը» և «Պետական ապահովագրությունը», պետք է ստանձնեն ստեղծել.

Ա) «ՀՀ-ում գյուղատնտեսական մթերքների արտադրության և սպառման գործընթացներին առնչվող կենտրոնացված ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, որն ունենա հետևյալ գործառույթները՝ ա) մասնագիտական խորհրդատվություն՝ որպեսզի երկրի պարենային անվտանգությունն ապահովող ճյուղերի արտադրանքը լինի կայուն և կանխատեսելի, բ) համայնքներում գյուղմթերքների արտադրության արդյունավետ ուղղորդում և ոլորտին առընչվող այլ տեղեկատվության փոխանակման և օգտագործման մեխանիզմ, գ) հանրապետության բոլոր համայնքներում սպասվող բերքի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվություն, դ) նախօրոք պահանջված շափորշչիների ապահովման դեպքում բերքի ապահովագրություն:

Բ) Գյուղացիական տնտեսությունների աջակցման ազգային ծրագրի մշակում և դրա հետևողական իրականացում՝ ցածր տոկոսով վարկերի տրամադրումով:

Գ) Արտերկրում տեղական գյուղմթերքների իրացման հնարավորությունների բացահայտում և արտահանման աջակցություն: Առավել մեծ պահանջարկ ունեցող և արտահանման ուղղվածության գյուղմթերքների առանձին ծրագրերի պետական համաֆինանսավորման մեխանիզմի ներդրում:

Դ) Երկրի պարենային անվտանգության ապահովման նպատակով սերմնացուի, պարարտանյութի, թունաքիմիկատների տեսքով պետական սուբսիդավորում<sup>33</sup>:

<sup>32</sup> Ֆրանչայզինգ (անգլ.՝ franchising), շուկայի սուբյեկտների միջև հարաբերությունների մի տեսակ է, երբ մի կողմը (ֆրանչայզերը) փոխանցում է մյուս կողմին (ֆրենչայզիին) որոշակի տեսակի բիզնեսի իրավունք՝ օգտագործել իր զարգացած բիզնես մոդելը. գործել իր անունից՝ օգտագործելով բիզնեսի վարման տեխնոլոգիան, ապրանքային նշանը, ֆիրմային ոճը, ապրանքանիշը: Աշխարհում հայտնի են առևտային, հյուրանոցային, առողջապահական, անշարժ գույքի բազմաթիվ ցանցային ֆրենչայզ ընկերություններ. օրինակ՝ McDonald's, KFC, ACE, Century 21, Marriott International, Interim Healthcare և այլն:

Կուլեր Փ., Մարկետինգ մենեջմենտ. — Պիտեր, 2004. С. 575.

<sup>33</sup> Մանրամասն տես և՝ «Այլրնտրանք» գիտական հանդես, 2016թ., Դեկտեմբեր, թ. Մանաւոյան, «Մթերումների համակարգի ձևավորման հրամայականը»:

Ե) Գյուղատնտեսական ներմուծվող նմանատիպ ապրանքների մաքսային բարձր վճարի գանձման քաղաքականություն՝ տեղական շուկայում հայրենական արտադրության մրցունակության ապահովում:

**2. ՀԻՄՆԱԴՐԱՄ:** «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» հանդես է գալիս որպես մենաշնորհով օժտված ֆրենչայզոր: «Ֆրանչայզորն» այն իրավաբանական սուբյեկտն է, այս դեպքում՝ «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը», որը մասնավոր ընկերություններին հատկացնում է արտոնագիր գյուղացիական տնտեսություններից մթերումներ կատարելու համար: Ֆրենչայզորին են պատկանում ապրանքային նշանները և մեծածախ գների որոշման իրավունքը:

**3. ՖՐԵՆՉԱՅԶԻՐԻ:** «Ֆրենչայզին»՝ ֆրենչայզորից արտոնագիր ստացած մասնավոր ընկերություններ՝ որը ստեղծում և դեկավարում է բիզնեսը՝ օգտագործելով ֆրենչայզորից լիցենզավորված ապրանքային նշանները և ընդունված կանոնները:

«Ֆրենչայզին» ստեղծում է մթերումների համակարգը սպասարկող անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ 1) ՀՀ Առողջապահության նախարարության կողմից լիցենզավորված սննդի անվտանգության ապահովման նպատակով համապատասխան լաբորատորիաների հիմնում մարզերում, 2) սառնարանային տնտեսություններ, պահեստներ: Եվ երկողմ՝ ֆրենչայզորի հետ միասին, որոշում է մթերումների մեծածախ գներն ու այն առաջարկում է սպառում իրականացնող խանութների ցանցերին:


Ֆրենչայզին՝ մասնավոր ընկերությունը, ֆրենչայզորին՝ «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամին», մթերումներ կատարելու իրավունքի համար իր մաքուր շահույթից տարեկան վճարում է 2%, որի դիմաց ստանում է հետեւյալ արտոնությունները՝ մթերումների համար արտոնագիր՝ լիցենզիա, տեղեկատրվություն, ցածր տոկոսով պետական վարկեր, պետությունից արտահանելու օգնություն և աջակցություն, պետության հարկային քաղաքականության շնորհիվ տեղական շուկայում մրցունակության ապահովում և այլն:

#### Բացատրություն:

Փաստորեն, եթե պետությունը գյուղատնտեսական արտադրանքի մթերումների լիցենզավորման իրավունքի մենաշնորհը տալիս է «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամին» (ՀԻՄՆԱԴՐԱՄ), ապա մթերումներ իրականացնող մասնավոր ընկերությունները և գյուղացիական տնտեսությունները դառնում են գործընկերներ, և ՀԻՄՆԱԴՐԱՄԻ համայնքային հոգաբարձուների խորհրդներն ու մասնավոր ընկերությունները տեղերում՝ համայնքային և շրջանային մակարդակներում, ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ միջոցով միասին են որոշում գյուղատնտեսական ապրանքների մեծածախ գները: ՀԻՄՆԱԴՐԱՄԸ պետության հովանավորությամբ մասնավոր սեկտորի համար ապահովում է ցածր տոկոսով վարկերի տրամադրում՝ մարզերում պահեստներ և լաբորատորիաներ հիմնելու համար, ար-

տահանման համար վարկավորում և պետական աջակցություն, ներկրումների նկատմամբ մաքսային հարկումներով տեղական շուկայում հայրենական գյուղատնտեսական ապրանքների մրցունակության ապահովում: Այս համակարգը հնարավորություն է տալիս, որ մթերումներ կատարող խոշոր ընկերությունները կամ «խմբիշխանները» չկարողանան իրենց համար ձեռնտու մեծածախ գներ պարտադրելով հարստահարեն գյուղացուն՝ նրանց դարձնելով պոտենցիալ արտագաղթող, որը երկրի մասշտաբով նպաստում է գյուղտնտեսությունների փոշիացմանը:

### **ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԿՈՂԵՐԱԾԻԱՅԻ ԿԱՌՈՒԺՎԱԾՔԸ**



Մթերումների համապետական նման համակարգի ստեղծումը, որը կվերահսկվի և կկառավարվի քառակողմ համակարգով՝ հանրային, մասնավոր և պետական կառույցների (նախարարություն և պետական ապահովություն) կողմից, կարող է ապահովել երկրի պարենային անվտանգությունը, համապետական մասշտաբով կազմակերպել գյուղմթերքների արտադրության ու սպառման գործընթացները և գյուղացիական տնտեսությունների ու մասնավոր սեկտորի գործընկերությամբ՝ բանակցություններով, որոշել ապրանքների մեծածախ գները: Այս համակարգը նպաստում է փոքր և միջին, ինչպես նաև խոշոր բիզնեսների ստեղծմանը և շահավետ է թե՝ գյուղացիական տնտեսությունների, թե՝ մասնավոր հատվածի համար՝ բացուելով մենաշնորհային կոռուպցիոն սխեմաները:

### **ԱՍՓՈՓՈՒՄ**

Այսպիսով,

— «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» միջոցներն առաջանում են՝

1- Բնօգտագործման դիմաց առաջացած վճարներից (ոոյալտի վճար՝ 3-25%)

և երկրի ռազմավարական նշանակության տնտեսական միավորների եկամուտներից (51% բաժնեմասի իրավունքով),

2- «Քաղաքացիական/Մասնավոր» խառն համադրված տիպի ձեռնարկություններում ներդրումների շնորհիվ առաջացած եկամուտներից,

3- «Համապետական գյուղկոռպերացիայից՝ մթերումների արտոնագիր ընձեռնելու համար ֆրենչայզերների կողմից մաքուր շահույթի 2%-ի չափով տարեկան վճարումներից:

— «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» ներդրումներ է կատարում՝

1- «Քաղաքացիական/Մասնավոր» տիպի խառն համադրված ձեռնարկություններում,

2- երկրի տնտեսական խոշորամասշտար անվանական ծրագրերում:


— «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» միջոցները բաշխվում են՝

1- Համայնքներին՝ հանրային կարիքների համար 10%-ի չափով, և յուրաքանչյուր համայնք կստանա ըստ համայնքում ապրող բնակչության թվաքանակի,

2- «Ազգ-քանակ» համակարգին՝ 40%-ի չափով:

3- ՀՀ քաղաքացիներին 50%-ի չափով:

### **ՔԱՂԱՔԱԾԻԱԿԱՆ ԾՐԳԱՆԱՌՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒԺՎԱԾՔԸ**



**«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ»** ապահովում է երկրի ողջ բնական պաշարների և ռազմավարական բացառիկ նշանակության տընտեսական միավորների շահագործման դիմաց ստացված օգուտների և ներդրումներից առաջացած եկամուտների արդար և հավասար բաշխումն այդ ռեսուրսների օրինական տերերի՝ ՀՀ քաղաքացիների միջև և շրջանառու ներդրումային կապիտալի տեսքով ապագա սերունդներին փոխանցումը:

## ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍ

Երկրի տնտեսական զարգացման և կայունության համար բացառիկ կարևոր տեղ է գրավում **ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԸ:** Հատկապես փոքր բիզնեսը երկրի տնտեսության կենտրոնակության արյունատար համակարգն է: Օրինակ, ԱՄՆ-ում փոքր բիզնեսը կազմում է տնտեսական ակտիվության 44%-ը, ստեղծում է նոր աշխատեղերի 2/3-ը, և նրա շնորհիվ ստեղծած արդյունքը 2014 թվականի տվյալներով կազմում էր ԱՄՆ-ի ՀՆԱ-ի 43.5%-ը:

Կերևում ներկայացված ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՑՈՒԹԱՉԵՎՔԻ պայմաններում՝ խառն-համադրված՝ «Հանրային/Մասնավոր» տիպի ձեռնարկությունների ցանցի ապահովմամբ և «Համապետական գյուղկոռոպերացիա» համակարգի ներդրմամբ անշեղորեն մեծանում են փոքր և միջին բիզնեսների ընդլայնման ասպարեզները բազմացնելու հնարավորությունները: Սակայն փոքր և միջին բիզնեսների ակտիվացման ու զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել պետության կողմից հատուկ մշակված ծրագրեր, ցածր տոկոսներով նրանց վարկեր տրամադրելու համակարգային հայեցակարգ, ինչպես նաև տնտեսության մեջ նոր ենթակառույցների ստեղծմամբ փոքր բիզնեսին տեղ հատկացնելու ռազմավարություն:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 34-րդ

Անհրաժեշտ է ստեղծել «**Փոքր և միջին բիզնեսների օգնության պետական վարչություն»,** որը պետական ծրագրերի շրջանակներում, ցածր տոկոսադրույթներով կարող է վարկեր տրամադրու փոքր բիզնեսներին և խրախուսել տեղական բանկերին՝ աշխատել կայացած այն միավորների հետ, որոնք ցանկանում են ընդլայվել:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 35-րդ

**«Փոքր և միջին բիզնեսների օգնության պետական վարչությունը»** պետք է ստեղծի տնտեսական և տեղեկատվական խորհրդակցությունների ցանցային համակարգ, որոնք փոքր և միջին բիզնեսներին վարկային պարտավորություններ վերցնելուց առաջ պետք է օգնեն համապատասխան տեղեկատվություն և մասնագիտական խորհուրդներ տրամադրելով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 36-րդ

Պետությունն իր հարկային քաղաքականության մեջ պետք է գործարկի նոր ստեղծված փոքր բիզնեսներին առաջին երեք տարիների ընթացքում հարկերից ազատացած եկամուտների արդար և հավասար բաշխումն այդ ռեսուրսների օրինական տերերի՝ ՀՀ քաղաքացիների միջև և շրջանառու ներդրումային կապիտալի տեսքով ապագա սերունդներին փոխանցումը:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 37-րդ

Պետությունը պետք է իրականացնի մշակված ծրագրային քաղաքականություն՝ խոշոր ընկերությունների և փոքր բիզնեսների միջև միջնորդավորված պայմանագրային քաղաքականության գործարկում: Օրինակ, պետությունը խոշոր ընկերությունների համար ապահովում է որոշակի հարկային արտոնություններ, եթե նրանք ստեղծում են պայմաններ և իրենց հովանոցի ներքո ապահովում են փոքր բիզնեսների բազմացումը:

## ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԿԱՊԻՏԱԼ

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայացման համար բացառիկ կարևոր և անհրաժեշտ է խոշոր կապիտալի դերը:** Ավելին, խոշոր կապիտալի՝ սեփականատերերի շահերը, լավագույնս կարող են ապահովված լինել միայն ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայացման դեպքում: Մակերեսային մոտեցմամբ կամ առաջին հայացքից կարող է թվական մասնավոր խոշոր կապիտալի շահերը հակադրվում են հանրային շահերին, եթե հողը, օդը, ջուրը, ընդերքի պաշարներն ու ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորները վերևում բերված ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՑՈՒԹԱՉԵՎՔԻ պայմաններում պետք է դառնան հանրային՝ ազգային սեփականություն: Սակայն, համաշխարհային պատմական փորձը ցույց է տալիս, որ դա այլպես չէ: Բնակչության մեծամասնությամբ միատարր ազգային պետությունների փորձը թե՝ սկանդինավյան երկրներում, թե՝ արաբական որոշ երկրներում, որոնք վերջին մի քանի տասնամյակների ընթացքում սկսեցին իրականացնել խառն-համադրված տնտեսական մողելների ներդրումը և երկրի ընդերքի հիմնական հարստությունը ազգային սեփականություն դարձնելու մոտեցումը, ցույց է տալիս, որ այդ փոփոխությունները կատարվել են հենց այդ երկրների էլիտաների նախաձեռնության շնորհիվ: Եվ դա պատահականության կամ բարի կամքի շնորհիվ չէ: Կապիտալի նախասկզբնական կուտակման անարխիկ շրջանից հետո, խոշոր կապիտալի, հատկապես երկրի ազգային կապիտալի համար, անհրաժեշտ է երկարաժամկետ կայունություն և ապահովություն, այլ ոչ թե հասարակության բներացումով բախումներ կամ քաղաքական իշխանությունների վայրիվերումներով փոփոխությունների ընթացք, որը վտանգում է երկարաժամկետ կապիտալ ներդրումների

հնարավորությունը: Ավելին, վարչաօլիգարխիկ համակարգի երկրներում խոշոր սեփականատերերը երբեմն նաև պարտադրված են երկրի բարձրագույն ղեկավարությանն իրենց բիզնեսից մաս հատկացնելով ապահովել իրենց բիզնեսը փորձության շենթարկելու մարտավարությունը: Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում թե՝ սոցիական աղքատության սանդղակում գտնվող բնակչությունը, թե՝ խոշոր կապիտալը գտնվում են անապահով վիճակում, քանի որ նման երկրներում չի կայացել նաև իրավական համարկարգը՝ «Օրենքի գերակայությունը բոլորի համար» սկզբունքը: Եվ եթե սոցիալական աղքատության սանդղակում գտնվողները կորցրնելու բան չունենալով զանգվածաբար արտագաղթում են երկրից, ապա դրանից տուժում է նաև խոշոր կապիտալը, քանի որ բնակչության նվազեցմամբ տեղական շուկայում պահանջարկը փոքրանում է և ամենակարևորը՝ խոշոր կապիտալի համար արտագաղթելը դյուրին բան չէ: Իրականում, որևէ երկրում առաջին հերթին խոշոր կապիտալին է անհրաժեշտ ապահովություն և կայունություն. գործատուն մեծամասամբ պատրաստ է տրամաբանական զիջումների (եթե իհարկե ունի համապատասխան ինտելեկտուալ և բարոյահեղեղնոր մակարդակ), առավել ևս, որ դա պահանջում է ազգային պետական շահը: Եվ պատահական չէ, որ Սկանդինավյան երկրներում կվոլուցիոն ճանապարհով ձևավորվել է «սոցիալական կորպորատիվիզմի» եռակողմ համակարգը (գործառուներ, արհիմություններ և պետություն), որը պետության միջնորդությամբ՝ բանակցությունների միջոցով, կարգավորում է սոցիալական տարբեր խավերի շահերի հակամարտությունը:

Հայաստանի և Սփյուռքի խոշոր կապիտալի ներկայացուցիչներն ի վերջո պետք է հասկանան, որ օտար ափերում իրենց նախաձեռնողական գործունեությունն ու կապիտալը չեն կարող լինել ապահով ու սենդե-սերունդ փոխանցվող, ինչպես նաև նրանք չեն կարող գնահատվել ու հիշվել օտար ժողովուրդների կողմից: Հայ խոշոր կապիտալի պատմությունը ցուցում է, որ թե՝ Թուրքիայում, թե՝ Հնդկաստանում, թե՝ ցարական Ռուսաստանում և թե՝ արևմտյան երկրներում, հայկական խոշոր կապիտալն ունեցել է միայն կորուստներով պայմանավորված շատ դառն պատմություն, քանի որ հայկական խոշոր կապիտալի ներկայացուցչներն ունեցել են միայն իրենց անձնական խնդիրները լուծելու մտահոգությունը: **Հայկական խոշոր կապիտալն** օտար երկրներում մի՛ շտ է լինելու հարվածի տակ, եթե նրանք ֆինանսապես չնպաստեն, որ իրենց հետևում ձևավորվի ազգային գաղափարախուսությամբ դաստիարակված և այդ երկրներում մշակութային ու քաղաքական կառույցների մեջ կազմակերպված Սփյուռք (ինչպես հրեական սփյուռքի համար հրեական խոշոր կապիտալը կազմակերպեց սիոնիզմը): Եվ ամենակարևոր՝ հայկական խոշոր կապիտալի ներկայացուցիչները նաև պետք է հասկանան՝ ոչ թե օտար ափերում, այլ միայն հայրենիքում ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ունենալու դեպքում նրանց ունեցվածքը կա-

րող է իրենց սերունդներին բերել ապահովություն և երջանկություն:

Սյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության գալիք վարչակազմերն ու տեղական խոշոր կապիտալի ներկայացուցիչները պետք է գործեն այն գիտակցությամբ, որ առանց Սփյուռքի՝ սփյուռքյան մասնագետների ու խոշոր կապիտալի խոշորամասշտաբ ներդրումների, Հայաստանը չի կարող ունենալ տնտեսական թոփշրածն զարգացման լուրջ հնարավորություններ:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ թեև խոշոր կապիտալն իր բնույթով կոսմոպոլիտ է, սակայն համաշխարհային պատմական փորձը ցույց է տվել, որ նրանք կարող են նաև դրսնորել ազգային շահերին ընդառաջ գնալու վարքագիծ և հայեցակարգ՝ հատկապես փոքր ազգերի կամ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ պարագայում: Եվ ուրեմն, պետք է ծրագրել խոշոր կապիտալի միավորման ու ազգային շահերի համար արտագաղթելը դյուրին բան չէ: Իրականում, որևէ երկրում առաջին հերթին խոշոր կապիտալին է անհրաժեշտ ապահովություն և կայունություն. գործատուն մեծամասամբ պատրաստ է տրամաբանական զիջումների (եթե իհարկե ունի համապատասխան ինտելեկտուալ և բարոյահեղեղնոր մակարդակ), առավել ևս, որ դա պահանջում է ազգային պետական շահը: Եվ պատահական կորպորատիվիզմի՝ կվոլուցիոն ճանապարհով ձևավորվել է «սոցիալական կորպորատիվիզմ» եռակողմ համակարգը (գործառուներ, արհիմություններ և պետություն), որը պետության միջնորդությամբ՝ բանակցությունների միջոցով, կարգավորում է սոցիալական տարբեր խավերի շահերի հակամարտությունը:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 38-րդ

Ազգային պետության կայացման համար անհրաժեշտ է պետական մշակված ծրագրային ռազմավարություն՝ տեղական խոշոր կապիտալի արտահոսքը դադարեցնելու և հայկական խոշոր կապիտալի ներհոսքն ապահովելու համար: Անհրաժեշտ է տնտեսական դիվանագիտության<sup>34</sup> արդեն գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրմամբ բացառիկ պայմաններ ապահովել ազգային խոշոր կապիտալի ներդրումային ներհոսքներն ապահովելու համար:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 39-րդ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ պետք է ազգային գաղափարախոսության մեջ ներառի ազգային տնտեսական կացութածեի կարևորությունն ու նրանում ընդգծի խոշոր կապիտալի դերը՝ ներկայացնելով խոշոր կապիտալի և ազգային շահերի համարդրությունը, և հասարակության մեջ լուծարի սոցիալական անտագոնիզմն ու գնահատելով խրախուսի խոշոր կապիտալի ազգանպաստ գործունեությունը:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 40-րդ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ օրենքի և իրավունքի գործարկմամբ պետք է ԵՐԱՇԽՎՈՐԻ խոշոր կապիտալի ապահովությունը և նրանց հետ համատելով նախաձեռնի երկրի տնտեսության զարգացման համար համազգային նշանակության երկարաժամկետ ու թիրախային ծրագրեր:

<sup>34</sup> Սանրամասն տև՝ «Ազգային զարգացման համահայկական բանկ» բաժնում:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 41-ՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ մեջ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ նշանակություն ունեցող տնտեսական միավորների (առողմակայան, երկարուղի, կապի համակարգ, էլեկտրոցանցեր և այլն) ընդլայնումների կամ նոր համակարգեր կառուցելու համար, որոնք պետք է ունենան ՊԵՏԱԿԱՆ ՍԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ապահովություն և լինեն առնվազն 51% ազգային սեփականություն (տե՛ս Հիմնադրույթ 28-րդը), անհրաժեշտ է առաջին հերթին ներգրավել ազգային կապիտալը՝ օգտագործելով պետական վերահսկողությամբ սահմանափակ<sup>35</sup> բաց բաժնետիրական ձևաչափը, ինչպես նաև պետական բոնդերով<sup>36</sup> երաշխվորված ապահովագրությունը:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 42-ՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կառուցելու համար անհրաժեշտ է ձևավորել ազգային խոշոր կապիտալի ներկայացուցիչների միասնական գործելու ավանդություն՝ **Խոշոր սեփականատերերի ԱԿՈՒՄԲ**, որտեղ պարբերաբար պետք է լինեն նրանց հանդիպումները՝ թե՝ իրար օժանդակելու կամ համաձայնությունների գալու, թե՝ ազգային տնտեսական ծրագրերի առումով քննարկումներ ու պայմանավորվածություններ ձեռք բերելու առումներով, որի պրակտիկան վաղուց գոյություն ունի տարբեր ազգերի մոտ (հայտնի են՝ անզլուաքսական, հրեական, շվեդական, նորվեգական, չինական և այլ ազգային համատեքստով ստեղծված խոշոր սեփականատերերի ակումբները):

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ պետք է ունենա ազգային սուվերեն տնտեսություն, որի կայացման համար անհրաժեշտ է թե՝ ազգային խոշոր կապիտալի, թե՝ Հայաստանի և Սփյուռքի ազգաբնակչության հնարավոր բոլոր ֆինանսական ռեսուրսների մորիլիզացված ուղղորդում համագային նշանակության տնտեսական ծրագրերի կազմակերպման համար, որտեղ յուրաքանչյուրը ոչ միայն պետք է ոգեշնչվի ազգային առաջընթացի հեռանկարով, այլ նաև պետք է ունենա անձնական շահութափնուվ պայմանավորված հետաքրքրություն:

Խոշոր կապիտալն իրեն հարմարավետ և երաշխավորված կարող է զգալ, երբ կա կոնկրետ իրատեսական տնտեսական ծրագիր, որն ունի պետական աջակցություն, համագային ընդգրկումով բաց բաժնետիրական ձևաչափի գործարկում, և ցածր տոկոսներով վարկերի նախապես պայմանավորված աջակցության հնարավորություն:

<sup>35</sup> Նման սահմանափակումը նշանակում է, որ ՀՀ պետության կողմից 49%-ի չափով բաժնետոմսերի վաճառքն իրականացվում է պետության վերահսկողությամբ:

<sup>36</sup> Պետական ԲՈՆԴ՝ պետական պարտատոմս:

## ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԼԱԿԱՆ ԲԱՆԿ

«Ազգային զարգացման համահայլական բանկի» գործունեության և հեռանկարային ռազմավարության հիմնահարցերի արդյունավետ հանգուցալուծումը պահանջում է ռազմավարական պլանավորման և կորպորատիվ կառավարման ժամանակակից մեթոդների միջազգային ուսանելի փորձի ուսումնասիրություն և տեղայնացում՝ հաշվի առնելով Հայաստանի տնտեսության առանձնահատկությունները: Ի տարբերություն ՀՀ Կենտրոնական Բանկի կամ առևտրային մասնավոր բանկերի, «Ազգային զարգացման համահայլական բանկի»<sup>37</sup> ծրագրերը պետք է միտված լինեն նպաստելու տնտեսական աճին, ՀՆԱ-ի դիվերսիֆիկացմանը, տնտեսության արդիականացմանն ու սոցիալական խնդիրների լուծմանը: Զարգացման բանկերը հիմնականում նպատակառուղղված են լինում երկրի տնտեսական ենթակառուցվածքների ու վերամշակող արդյունաբերության զարգացման համար հանրային ներքին և արտաքին ներդումները ներգրավելուն և ուղղորդելուն: «Ազգային զարգացման համահայլական բանկը» որպես պետության տնտեսական քաղաքականության կարևորագույն գործիք, պետք է առաջնորդվի իրատեսական, սակայն երկրի համար ռազմավարական նշանակության երկարաժամկետ ծրագրերը ֆինանսավորելու առաջնահերթությամբ:

«ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԼԱԿԱՆ ԲԱՆԿԻ» գործառությունները պետք է լինեն:

1) Ցածր տոկոսների տրամադրմամբ խոշոր ընկերություններին և մասնավոր բանկերին ներգրավել ներդումներ կատարելու երկրի տնտեսական ենթակառուցների և վերամշակվող արդյունաբերության զարգացման համար նախատեսված ծրագրերում,

2) ՀԱՄԱՀԱՅԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐՈՒՅԹՈՒՆ պետական ակցիոներական կառուցի սպասարկում,

3) Տե՛ս Հիմնադրույթ 23-ը: «ՀԱՅԱՍՏԱՆ համահայլական հիմնադրամը» պետք է լինի ոչ թե Սփյուռքից հեռուստամարաթոններով փող մուրալու միջոց, այլ վերափոխվի և դառնա համահայլական բաց բաժնետիրական (ակցիոներական) կառույց՝ Հայաստանում ռազմավարական նշանակության ծրագրերի համար պայմանավորված հետաքրքրություն:


<sup>37</sup> «Համահայլական բանկը» ստեղծվել է 29/11/2008 թվականին Կ-391օրենքով՝ որպես բաց բաժնետիրական ընկերություն, որտեղ միակ ներդումը կատարել է ՀՀ ԿԲ-ն՝ 20 մլն ԱՄՆ դրամարի չափով, սակայն բանկի դեկավարությունը 2011 թվականից ի վեր որևէ քայլ չի կատարել այդ կապիտալ ավելացնելու ուղղությամբ:

բաժնետոմսերի առաջարկ ու վաճառք կազմակերպող մարմին: ՆՊԱՏԱԿԸ՝ Հայաստանի և Սփյուռքի թէ՝ խոշոր կայսիության ներդրումային հնարավորությունների մորիլիզացում և ուղղորդում հայրենիքում ռազմավարական բացառիկ նշանակություն ունեցող ազգային խոշորամասշտար կոնկրետ տրնտեսական ծրագրերի իրագործմանը, որը նշանակում է այդ անվանական ծրագրերի բաժնետոմսերի առաջարկ և վաճառք: ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸՆԻ պետական ակցիոներական կառույցի բաժնետոմսերը պետք է լինեն ֆոնդային շուկայում հայտնի «Կապույտ չիփ բաժնետոմս» (Blue Chip Stocks) կարգի եկամտաբեր բաժնետոմսեր (Income stocks), որոնց նկատմար վստահության բարձր գործակիցը կարող է լինել ՀՀ-ի կողմից պետական բոնդերով ապահովագրումը»:

3) Աջակցություն՝ «Հայաստան-Սփյուռք համահայկական ցանցային շուկայի» ձևավորմանը (տե՛ս Հիմնադրույթներ 23-ը և 24-ը),

4) Երկարաժամկետ վարկերի և պետական պարտատոմսերի (բոնդերի) գործարկմամբ ՀՀ-ում ռազմավարական նշանակության ազգային ծրագրերի ֆինանսավորում, ինչպես նաև այդ անվանական տնտեսական ծրագրերից առաջացած եկամուտների սպասարկում,

5) «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի», «Հանրային-Մասնավոր» տիպի ձեռնարկությունների, «Համապետական գյուղկուպերացիայի», «Համահայկական ազգային բաժնետիրություն» պետական ակցիոներական կառույցի և «Տարածքային զարգացման ներդրումային հիմնադրամի» սպասարկում:



Երկրի համար ռազմավարական նշանակության ունեցող **տնտեսական խոշորամասշտար անվանական ծրագրերի** իրականացման հնգամյա և տասնամյա թիրախային նպատակները կարող են լինել՝

- > հայկական երկաթուղու արդիականացում,<sup>38</sup>
- > իրանական Թեքրիզից դեպի Մեղրի-Քաջարան-Կապան-Միսիան-Ջերմուկ-Ծովինար-Սևան հատվածում երկաթգծի կառուցում, որը նշանակում է հյուսիսից հարավ երկաթուղային ճանապարհի ստեղծում (Թեև ոուսական ընկերությունները հայկական երկաթգծի կառուցումը գնահատել են իրենց համար ոչ կարևոր և ծրագրի իրականացման համար սկզբում հաշվարկել էին \$1,8 գործակիցը կարող է լինել ՀՀ-ի կողմից պետական բոնդերով ապահովագրումը):



<sup>38</sup> Անհրաժեշտ է, որ ՀՀ-ն նախ չեղարկի ՈԴ-ի «Հարավ-Կովկասյան երկաթուղիներ» ընկերության հետ պայմանագիրը, քանի որ՝ 2008 թվականի փետրվարի 13-ին կոնցեսիոն պայմանագիր է ստորագրվել «Հայկական երկաթուղու» համակարգը ոուսական «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ընկերությանը փոխանցելու վերաբերյալ, ըստ որի այդ ընկերությունը Հայաստանի երկաթուղային տնտեսության մեջ պետք է կատարել 572 մլն դոլարի ներդրում, ընդ որում՝ 230 մլն դոլարը՝ առաջիկա հինգ տարիների ընթացքում: Սակայն ոուսական «Հարավ-Կովկասյան երկաթուղիներ» (ՀԿԵ) ձեռնարկությունը ստանալով Հայաստանի երկաթուղիների կոնցեսիոն կառավարումը ոչ միայն չի կատարել իր պարտավորություններն ըստ պայմանագրի, այլ 2008-2020 թթ. ընթացքում ապամոնտաժվել է զգալի երկարության երկաթգիծ, վերացվել են տասնվեց երկաթուղային կայարաններ՝ իրենց հարակից ենթակառուցվածքներով և բնակավայրերով:

միլիարդի, իսկ հետո՝ 3,5 միլիարդ ԱՄՆ դոլարի ծախս, սակայն հայրենական մասնագետների հաշվարկներով այն կարող է իրականացվել \$1,2-\$1,8 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք միջոցներով, որը մեզ համար ունի բացառիկ կենսական նշանակություն, քանի որ հյուսիս-հարավ երկաթուղային ճանապարհ ունենալու դեպքում Հայաստանը դառնում է Եվրոպան ու Արևելքն իրար միացնող տարանցիկ երկիր),

> Վանաձոր-Ֆիալետովո հատվածում երկաթգծի 22 կիլոմետր կառուցումով՝ առկա Երևան-Թբիլիսի երկաթուղային ճանապարհի 100 կիլոմետրով կրճատում, որը կստեղծի միջազգային գրոսաշրջության միասնական օդակ և կնպաստի երկու երկրների տնտեսական զարգացմանը,

> Վրացական Փոթի, Իրանական Կասապից ծովի Ամիրաբադ և Պարսից ծոցի Իմմամ նավահանգիստներում վարձակալած տարածք և սեփական լաստանավերի ձեռքբերում, որը կնպաստի տարանցիկ երկիր դառնալու և հայրենական արտադրությունը դեպի Եվրոպա, ՌԴ՝ Աստրախան, արաբական թերակղզի և դեպի արևելքի երկրներ արտահանելու համար,

> ռազմարդունաբերության ստեղծում,

> ատոմակայանի նոր բլոկի կառուցում և գործարկում,

> սեփական տիեզերական արբանյակի ձեռքբերմամբ կապի համապետական համակարգի ստեղծում,

> ՀՀ-ում ջրային պաշարների կառավարման և արդյունավետ օգտագործման ծրագիր՝ քաղցրահամ ջրերի համահայաստանյան ցանցի ստեղծում և ջրային պաշարների ամբարում (ՀՀ-ում ջրային պաշարների ահռելի մասը չի ամրարկում և կորչում է, իսկ իսմելու ջուրն աշխարհում համարվում է ռազմական նշանակության բնական հարստություն և նավթից արժեքավոր: Հնարավոր է և ՀՀ-ից ջրի հնարավոր արտահանում. նախ Արարս գետի վրա՝ Մեղրու կիրճի հատվածում, հիդրոկելուրովայանի և հիդրոպոմպակայանի կառուցում, ապա խողովակաշարի կառուցում դեպի Արաբական թերակղզի: Շիրակի և Թալինի անջրդի հողատարածքների ոռոգման նպատակով անհրաժեշտ է նաև Ախուրյանի ջրամբարի ջրերի համար բազմատիճան պոմպակայանների կառուցում, որի աշխատանքներն ընդհատվել են ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով, և Հայաստանը նախագծով նախատեսված չափով չի օգտվում՝ միակ օգտատեր թողնելով Թուրքիային:),

> Հարստահարված հումքի՝ մոլիբդենի, պղնձի և ոսկու արտահանման փոխարեն՝ հայրենական հումքով վերամշակվող գործարանների կառուցում և պատրաստի ապրանքների արտահանման կազմակերպում:

< «Նայիրիտի» վերակառուցում ու վերագործարկում և այլն:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 43-րդ

Ազգային պետության կայացման համար անհրաժեշտ է ստեղծել ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ, որը պետք է ապահովի «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի», «Հանրային-Սասնավոր» տիպի ձեռնարկությունների, «Համապետական գյուղկոռպերացիայի», «Համահայկական ազգային բաժնետիրություն» ակցիոներական կառույցի և «Տարածքային զարգացման ներդրումային հիմնադրամի» ֆինասական կարգավորումներն ու սպասարկումը:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 44-րդ

«Հայաստան համահայկական հիմնադրամը» վերափոխելով ստեղծել «Համահայկական ազգային բաժնետիրություն» պետական ակցիոներական կառույց (որը պետք է գործի ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ սպասարկման ներքո), որպեսզի Հայաստանում և Սփյուռքում ապրող հայ բնակչության և ազգային խոշոր կապիտալի ներդրումային հնարավորություններն ուղղորդվեն հայրենիքում ազգային խոշորամասշտաբ տնտեսական ծրագրերի իրագործմանը:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 45-րդ

ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ներքո անհրաժեշտ է ստեղծել՝ «Տարածքային զարգացման ներդրումային հիմնադրամ» և «Համապետական գյուղկոռպերացիայի ներդրումային հիմնադրամ», որոնք կսպասարկեն համայնքների զարգացման ծրագրերն ու սուբսիդավորումները:

### ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 46-րդ

Անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության բոլոր դեսպանատներում և հյուպատոսարաններում բացել ՏՏԾԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ, որոնց գործունեությունը պետք է լինի ՀՀ-ում ռազմական նշանակության տնտեսական ծրագրերի համար արտաքին կապիտալի ներհոսքի ապահովումը: ՀՀ հյուպատոսարաններին կից ՏՏԾԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ գործունեությունը պետք է լինի՝ Հայաստանի Հանրապետությունում առկա բիզնես-փաթեթների ներկայացում, դրանց համար ցուցահանդեսների կազմակերպում և գովազդ, բանակցություններ այդ երկրներում գործող խոշոր ընկերությունների հետ Հայաստանում ներդրումներ անելու համար և այլն {Օրինակ, Կալիֆորնիայի Տայվանի հյուպատոսարանն ունի տնտեսական բաժին: Հյուպատոսարանը ոչ միայն կազմակերպում է ցուցահանդեսներ, գրադադար է տնտեսական ծրագրերում ներդրումային փաթեթների գովազդով և բանակցում է ԱՄՆ տարբեր ընկերությունների հետ՝ Տայվանում ներդրումներ անելու համար, այլ նաև այցելուներին տեսահոլովակներով ու բիզնես-բրոշյուրներով ներկայացնում

Է Տայվանում ներդրումային ծրագրերի 50-ից ավելի փաթեթներ, տալիս է մանրամասն տեղեկատվություն և խորհրդատվություն, թե պետության կողմից երաշխավորված ներդրումների դեպքում որքա՞ն շահութ կարող է ունենալ օտարերկրյա ներդրողը:

#### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 47-ՐԴ

- ՀՀ կառավարությունը ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ պետք է աջակցի հետևյալ մեթոդներով՝
- այլ երկրներից և միջազգային կառույցներից ցածր տոկոսադրույքներով փոխառված միջոցների հաշվին ապահովել երկարաժամկետ վարկային գծեր,
  - տրամադրել երաշխավորված պետական պարտատոմսերի թողարկման բացառիկ իրավունք<sup>39</sup>,
  - պարտավորությունների գծով պետական երաշխիքների տրամադրում<sup>40</sup>:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխարհաքաղաքական շահերի հակասությունների խաչմերուկ հանդիսացող մեր տարածաշրջանում անհրաժեշտ է ունենալ կազմակերպված պետություն և ազգային նկարագիր ու հոգեկերտվածք ունեցող քաղաքացի։ Մեր պետականության և մեր ազգային տեսակի գոյապահպանության հիմնայունը կարող է լինել ազգային դաստիարակությամբ կերտված հայ մարդը։ Սակայն, ազգային գաղափարաբանությամբ դաստիարակությունն արդյունավետ կգործի, եթե հասարակությունը լինի միասնական, եթե հայ մարդը պետության կողմից իրեն չզգա լրված, եթե քաղաքացու սոցիալական պաշտպանվածությունը երաշխավորված լինի իր երկրի բնական ռեսուրսների և ռազմավարական բացառիկ նշանակության միավորների նըկատմամբ սեփականության իրավունքով, և եթե նա լիարժեք կզգա, որ ի՞նքն է իր երկրի տերը։ Եվ ահա մեր պետականության հարատևման այս նախապայմանների բավարումը հնարավոր է իրականացնել միմիայն իրարից անքակտելի երկու հայեցակարգերի կիրառմամբ՝ ազգային գաղափարախուսությամբ սերունդների դաստիարակություն և ազգային պետության համար անհրաժեշտ տնտեսաքաղաքական նոր ու առաջավոր տնտեսական կացութաձեի ներդրում։


<sup>39</sup> Չինաստանի զարգացման բանկի բոլոր պարտավորությունների 77 %-ը կազմում են զրոյական ոիսկով պարտատոմսերը, որոնք ունեն մեծ պահանջարկ։ Տե՛ս՝ Թ. Մանասերյան, «Զարգացման բանկերի և համահայկական փոխառու միջոցների դերը տնտեսական առաջընթացի ապահովման գործում»։ «Բանբեր» #1, (25), էջ 54-65, Երևան, 2018թ.։

<sup>40</sup> Կանադայի կառավարությունը երաշխավորում է իր զարգացման բանկի պարտավորությունները երրորդ անձանց նկատմամբ։ Տե՛ս նույն աղյուրը։

#### ԳԼՈՒԽ Պ

## ԱՐՎԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿՈՐԾ

### «Ազգ-Բանակ» հայեցակարգ



Որևէ երկրում, հասարակության կողմից ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ հայեցակարգի<sup>41</sup> անհրաժեշտության գիտակցումը պայմանավորված է լինում այդ երկրի աշխարհագրական դիրքով՝ թշնամի հարևանների առկայությամբ, երկրի համար աշխարհաքաղաքական զարգացումների վտանգավորությամբ և պատմական փորձի հաշվառմամբ: Շվեյցարականի կամ Խորայելի ազգ-քանակ համակարգի ստեղծումը պայմանավորված էր այդ երկրների գոյատեսումն ու անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ: ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ստեղծումը հնարավոր է միայն, եթե հասարակության մեջ ԱԶԳ-ԲԱՆԱԿ հայեցակարգի նկատմամբ կա բացարձակ ցանկություն և վստահություն, որը հնարավոր է, եթե հասարակությունն ունի դրա անհրաժեշտության լիարժեք գիտակցությունը: ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի որդեգրման կարևորությունը բխում է պետականության և ազգի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ հրամայականից, սակայն եթե պետության կողմից ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ սերունդների դաստիարակությունը չի դառնում պետության կողմից ընդունված և կիրառվող ռազմավարություն, ապա ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգը չի կարող աշխատել: Եթե մեկ-երկու սերունդների կյանքի ընթացքում (25 տարին համարվում է մեկ սերնդի միջին տևողությունը) հասարակության դաստիարակությունը բարձիթողի է մատնվում և ազգային արժեհամակարգի՝ մայրենի լեզվի, ազգային մշակույթի նկատմամբ ստեղծվում է քամահրանք ու հասարակության մեջ գերակշռում են դրախտ ներմուծված սպառողական հասարակությանը հատուկ կոսմոպոլիտ գաղափարներ, ապա հասարակությունը դառնում է միայն սոցիալական պահանջներ ներկայացնող գաղափարագործ ու պառակտված մասսա և փլուզվում է հասարակության ազգային հավաքական ՌԳԻՆ:

Մեր հասարակությունը պետք է գիտակցի, որ որևէ արտաքին ուժ կամ գերպետություն իր տնտեսական ու ռազմական ռեսուրսներն ու ռեզերվները չի ներդնելու հայ ազգային տեսակի և ՀՀ անկախ պետականության գոյատեսումն ապահովելու համար: Դա մե՞ր գործն է. մե՞նք պետք է ապահովենք մեր անվտանգությունն ու մեր ազգային արժեհամակարգը: Քաղաքականության մեջ չկան բարեկամներ. լինում են միայն շահերի համարմամբ դաշնակիցներ: Իսկ դաշնակիցների առումով ժողովրդին պետք է բացատրել Նժդեհյան՝ ՄԻԱՅՆ ՎՃՈՒԱԿԱՆ ՄԻԱՅՆԱԿԸ ԿԱՐՈՂ Է ՌԻՍԵՆԱԼ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ քանաձնի էռությունը. այսինքն՝ դաշնակցում են միայն այն երկրի հետ, որը պատրաստ է իր ազգային շահերի համար պայքարել: Իսկ եթե փոքր երկրի անվտանգությունը՝ ռազմավարական նշանակության տնտեսական

բոլոր միավորները, ինչպես նաև երկրի սահմանների թեկուզ մասնակի պաշտպանությունը հանձնվում են դաշնակից գերպետությանը, ապա տվյալ գերպետության աշխարհաքաղաքական շահերի փոփոխությամբ փոքր երկիրը նրա համար դառնում է օբյեկտ և մանրադրամ:

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի նախ և առաջ պետք է գիտակցի, որ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ բացարձակ արժեք է: 21-րդ դարի աշխարհաքաղաքական պայմաններում ազգի գոյատեսումը հնարավոր է միայն պետականության պահպանմամբ: Սակայն ի՞նչ ունենք մենք այսօր: Աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաններում, եթե մեր դաշնակից Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության փոփոխությամբ 44 օրյա Արցախյան ծրագրը վածերազմում մենք պարտվեցինք, եթե ՀՀ տարածքի նկատմամբ առկա են թուրք-աղբեջանական տանդեսի ունագություններն ու թուրանական ծավալապաշտական նկրտումները, մեր քաղաքական դաշտում և հասարակության մեջ սկսվեցին խմբրվել հետևյալ մոտեցումները.

Ա) Բարի-դրացիական՝ «քիրվայական» հարաբերություններ ձևավորել թուրքիայի ու Աղբեջանի հետ և փորձել գոյատեսել՝ վարելով նրանց «չքարկացնելու» քաղաքականություն,

Բ) Որոշ քաղաքական ուժերի կողմից Հայաստանը Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ մտնելու բարձրաձայնումներ,

Գ) Անկախությունն ու պետականությունը համարել որպես բացարձակ արժեք ու երկրում ձևավորել ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգը:

Վերևում բերված երեք տարբերակներն առանձին-առանձին կարող ենք քննության ենթարկել ու տեսնել, թե այդ մոտեցումներով պայմանավորված ճանապարհները որքանո՞վ են իրական և ո՞ր են տանում:

**Առաջինը՝** թուրքի հետ «ՔԻՐՎԱՅԻԹՅԱՆ» տարբերակը, որի ջատագովն էր ՀՀ առաջին նախագահն ու այսօր էլ այն բացահայտ տեսանելի է օրվա իշխանությունների՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից վարվող քաղաքականության մեջ, հայության և ՀՀ անկախ պետականության համար առնվազն ԴԱՆԴԱՂ ՄԱՀՎԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ Է: Օսմանյան կայսրությունում հայության վեց հարյուր տարվա պատմական փորձը ցույց է տվել, որ թուրքերի հետ բարեկամություն և «քիրվայություն» անել՝ հնարավոր չէ: Եվ սա փաստել են անցյալի մեր բոլոր հայ մեծերը՝ մտավորական գործիչները: Այն կենցաղային թյուր կարծիքը, որը շրջանառվում է ՀՀ-ում որոշ քաղաքական ուժերի կողմից, թե այսօրվա թուրքը

<sup>41</sup> Թեև մեր հասարակության մեջ տարածված տերմինը կոչվում է ԱԶԳ-ԲԱՆԱԿ, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է nation in arms, սակայն ըստ իս, հայոց հին ԱՇԽԱՐՀԱԶՈՐ տերմինն ազգ-քանակի առումով լավագույնն է:

փոխվել է՝ նույնը չել, տգիտության հասնող կարծիք ու մոտեցում է<sup>42</sup>: Թուրքիայի դեպի արևելք՝ թուրքախոս ժողովուրդների միացման հիմքով ծավալապաշտությունը՝ հարյուրամյա «Մեծ թուրանական ծրագրի» իրականացումն այսօր դարձել է հնարավոր, իսկ այդ ծրագրի խոչընդոտ հանդիսացող հայությունն ու Հայաստանի Հանրապետությունն իր կյանքով կարող է հատուցել, եթե չգիտակցի, որ առաջին իսկ հնարավորության դեպքում նրանք որևէ բանի առջև չեն կանգնելու: Դեպի ԱՆԴՐԿՈՎԿԱՍ Թուրքիայի թափանցումն ու կայացումն առաջին հերթին Հայաստանի Հանրապետությունը կդարձնի Թուրքիայի տնտեսական անկայությունը, որին կհետևի Հայաստանից զանգվածային արտագաղթ, և գուցե 10-15 տարվա ընթացքում մենք կկորցնենք ամեն ինչ ու կորդեգրենք անհայրենիք ասորիների ճակատագիրը:

**Երկրորդը՝** Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ մտնող տարբերակը, Հայաստանի Հանրապետության համար նույնպես անհետանկար ու ԴԱՍԴԱՂ ՄԱՀՎԱՆ ձանապարհ է: ՈԴ-ն ԽՍՀՄ չել. նրա կազմի մեջ մտնելով մենք վերջնականապես կդառնանք օբյեկտ և, թե՛ մեր սահմանների, թե՛ մեր հասարակական կյանքի արժեհամակարգի որոշողը կդառնա ՈԴ դեկավարությունը: Ավելին՝ ներքին և արտաքին սոցիալական գործոնների ազդեցությամբ այսօրվա ՀՀ տարածքում կսկսվի զանգվածային արտագաղթ և կտրուկ կրծատվի հայ էթնոսի դեմոգրաֆիան իր իսկ հայրենիքում: Այսինքն, անկախությունից հրաժարվելով և ՈԴ կազմի մեջ մտնելով Հայաստանը կդառնա լիարժեք օբյեկտ և իրականություն կդառնա 19-րդ դարի Ռուսական կայսրության «Հայաստանն առանց հայերի» քաղաքականությունը:

**Երրորդը՝** ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգով ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ստեղծելու տարբերակը, հայ էթնոսի փրկության միակ խարիսխն է. անվտանգ ու արժանապատիվ ապրելու և արարելու միակ ճանապարհը:

Իսրայելի առաջին վարչապետ Դ. Բեն-Գուրիոնի առաջ քաշած հայեցակարգը, որ միայն ԲԱՆԱԿԸ՝ որպես համակարգ-դպրոց, կարող է հրեաներին վերակերտել որպես ազգ, լիովին իրատեսական մեթոդի և հաջողության հասնելու ուղի էր<sup>43</sup>: Հայաստանի Հանրապետության պարագայում ԱԶԳ-ԲԱՆԱԿ հայեցակարգի որդեգրումն իրոք կարող է ձևավորել նոր տեսակի պետություն՝ հասարակության միասնականությամբ ու պետական ինստիտուցիոնալ նոր համակարգով պետություն, որը նաև Հայաստանի Հանրապետությունը կդարձնի տարածաշրջանում որոշումներ կա-

յացնող լուրջ սուբյեկտ: ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ստեղծումն առաջին հերթին ենթադրում է հասարակության ընդհանրական բարոյահոգեուր նկարագրի կերտում, քանի որ ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգում «ուզմական» և «քաղաքացիական» ոլորտների տարանջատում չի կարող լինել. «Զինվորական համազգեստով ազգային պետություն» մոդելի գոյության պայմաններում բանակը չի կարող լինել կուսակցականացված, այն պետք է լինի ազգային գաղափարաբանությամբ պետական կառույց, որի մեջ ընդլայնակի պետք է ներգրավված լինեն հասարակության բոլոր խմբերն ու շերտերը: Եվ այս պարագայում՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի հրամայականն ինքնին դառնում է երկրի ու ժողովրդի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ինչպես նաև ազգային համընդհանուր արժեքների և իդեալների հետապնդում: Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության ժողովուրդը դեռևս 90-ականներին՝ Արցախյան առաջին ազատամարտի ընթացքում, ինքնաբուի կերպով ձգտեց ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգին: Ազատամարտիկը կամ զինվորական համազգեստ կրողը դարձավ հասարակության համար ազգասերի և երկրի միակ պահապանի իդեալական կերպարը, սակայն ՀՀ իշխանությունները հրաժարվեցին ազգային գաղափարաբանությունը որպես պետական գաղափարախոսություն որդեգրելուց և ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ստեղծումից, որոնք հայ հասարակության մեջ արդեն պահանջված էին: ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգը չի կարող խորթ լինել հայության համար: Հայոց պատմության մեջ հիշատակվում է նման համակարգի գոյությունը՝ ԱՇԽԱՐՀԱԶՈՐ անունով:

ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգը պահանջում է անհամեմատ՝ մի քանի անգամ ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան կանոնավոր հզոր բանակների կայացման համար նախատեսվող ծրագրային հայտնի ծախսերը:

ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ներդրումն ու ստեղծումը նախ և առաջ պահանջում է ազգային հավաքական ՈԳՈՎ հասարակության միասնականություն, որին հասնելու համար անհրաժեշտ է հասարակության զանգվածային գիտակցության մեջ արմատավորել առաջին հայցքից տրիվյալ՝ սովորական թվացող, սակայն պարզ ու տրամաբանական ՍՍՀՄԱՆՈՒՄՆԵՐ: Դրանք կարող են լինել հետևյալ անբեկանելի (աքսիոմատիկ) կարգախոսները.

- ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԺԵՔ Է,
- ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԱՀԱՌ ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԽԱՐԴԱՐՈՒՅՆԸ
- ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՂԾՈՒՄՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է:
- ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱԶԳԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵՎՈՐ ՆԿԱՐԱԳԻՐՆ ԵՆ, ՆՐԱ ԴԻՄԱԳԻԾՆ ՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ ԵՆ և այլն (մանրամասն տե՛ս //jewish.ru/ru/stories/chronicles/4928/, հասանելի՝ 25.11.2018):

<sup>42</sup> Հայ հասարակությունը պառակտող նույն կարգախոսն օգտագործվել է դեռևս 1917-1922 թվականներին Ռուսաստանի բոլշևիկների կողմից:

<sup>43</sup> Տե՛ս Դավիդ Բեն-Գուրիոն և история становления государства Израиль, <https://jewish.ru/ru/stories/chronicles/4928/>, հասանելի՝ 25.11.2018:

սույն աշխատության Ա գլուխը՝ «Ազգային զաղափարախոսություն, մշակույթ և դաստիարակություն» բաժինը):

**ԲԱՆԱԿ-ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ** փոխգործակցության «ոսկե բանաձեռ» կայանում է նրանում, որ ցեղասպանություն ապրած ժողովրդի զանգվածային գիտակցության մեջ իր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ խնդիրն արմատավորվում է որպես գերակա հրամայական և ժողովուրդը, հատկապես նրա 18-55 տարեկան հատվածը, ուազմականացվում է: Անհրաժեշտ է ընդգծել, որ հասարակության մեջ երկրի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ հրամայականը ոչ միայն կարող է բերել երկրի ուազմականացում, այլ նաև երկրի տնտեսական անկախություն և տնտեսական նոր կացութածեի հիմքով ողջ բնակչության կոնսոլիդացիա (Օրինակ, 1990-ականներին՝ Արցախի ազատազրական պայքարի տարիներին, անվտանգության պահանջը ստիպեց, որ Արցախում կիրառվի «Շազմական կումունիզմ» քաղաքականություն: «Քոլոր ռեսուրսներն ազատազրական պայքարի համար» սկզբունքը նույնիսկ պարտադրեց պասիվ ուներներից առզրակել բազմաթիվ բնակարաններ ու նվիրել ճակատ մեկնող հերոս ազատամարտիկների ընտանիքներին):

#### **ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգում համադրված են հետևյալ սկզբունքները.**

- հասարակության քաղաքացիական պաշտպանության ընդլայնակի ու պարտադիր ուսուցանում,
- պրոֆեսիոնալ՝ պայմանագրային զինծառայություն,
- 18 տարեկանից սկսած երկամյա պարտադիր զինծառայություն,
- դպրոցների ավագ դասարաններում և ԲՈՒՀ-երում զինվորական պատրաստության պարտադիր պրակտիկ դասընթացներ և դաշտային բանակումներ,
- անկախ սեռից, սոցիալական ու պաշտոնական դիրքից 18-55 տարեկան քաղաքացիների համար զինվորական պատրաստություն տարեկան երեքից չորս անգամ՝ ձմեռ, գարուն, ամառ, աշուն, յուրաքանչյուր անգամ 7-9 օր ժամկետով<sup>44</sup>, որը նախատեսում է զինվորական պրակտիկ վարժանքներ և բանակումներ,
- բնակչության օրինական գենք ունենալու մաքսիմալ ազատականացում, գենքի օգտագործելու համար քննության հանձնում և ամենամյա ատեսացիա,
- յուրաքանչյուր երկու տարին մեկ սպայական կազմի ատեսացիա,
- գիտահետազոտական ինստիտուտների և գիտանորարական կենտրոնների անցումը երկրի Պաշտպանության Նախարարության ներքո,
- ուազմարդյունաբերության ներդրում և զարգացում,

<sup>44</sup> Այս մասին խորհրդակցել ենք ՈՄԱ՝ «Ողջ մնալու արվեստը» կազմակերպության ղեկավար Վովա Վարտանովի հետ:

— աշխարհագորի համար մարզերում և համայնքներում ամրագրված ռազմական կենտրոնների ստեղծում:

**ԱԶԳ-ԲԱՆԱԿ հայեցակարգն իր հիմքում պետք է բաղկացած լինի «համայնքանակ» բաղադրիչներից: Այսինքն, յուրաքանչյուր համայնք պետք է ունենա կամ ուազմարդյունաբերական գործարաններ, կամ «համայնքային-բանակ» միավորներ, որտեղ համայնքներից ներգրավվածներն ակտիվ զինվորական ծառայությունն են անցկացնում չկտրվելով իրենց ընտանիքներից և քաղաքացիական կյանքից:**

Հայկական բանակը պետք է լինի ոչ միայն կանոնավոր, այլ նաև պահեստուժի բանակ: Պահեստագորի մեծությունը՝ արագ զորահավաքը (24 ժամում) և նրանց արդյունավետ ներգրավումը մարտական գործողությունների մեջ՝ առանց հետզորահավաքային մարզումների վրա ժամանակ ծախսելու, մարտկային սակավ ռեսուրսներով փոքր պետությունների համար բանակի լավագույն և արդյունավետ համակարգն է: Օրինակ, «Հինգ պատերազմներում հաղթանակած Իսրայելի պաշտպանական ուժերը (ԻՊՈՒ) շուրջ 80 տոկոսով բաղկացած են պահեստագորից: ԻՊՈՒ-ի մողելը մանրազնին ուսումնասիրած ԱՄՆ-ի բանակի գնդապետ, պատմազիտության դոկտոր Չառլզ Հելլերը նշում է. «Իսրայելի Պաշտպանական Ուժերի քաղաքացի-զինվորները «պահեստուժ» չեն բառիս բուն իմաստով, այլ միացյալ ընդհանուր ուժի կառուցվածքի մաս: Այս միակցվածության շնորհիվ էլ Մշտական ծառայության (Քենայի) սպաներն ու կրտսեր սպաները հրաշալի ճանաչում են իրենց պահեստային ուժերը (Միլուիմը), քանի որ նրանք հասկանում են, որ ԻՊՈՒ-ն պահեստուժի բանակ է: ԻՊՈՒ-ի պահեստուժի զինվորին կարող է հատկացնեն կամ շհատկացնեն առկա նորագույն սպառազինություն: Սակայն անկախ դրանից, Միլուիմի շատ ստորաբաժանումներ մարտի մեջ են մտնում Քենայի ստորաբաժնումների հետ կողք կողքի»<sup>45</sup>:

Բնության օրինաշափություն է. առանց հակուտնյա ուժի՝ արտաքին թշնամու գոյության, առանց պայքարի, որևէ տեսակ կամ հավաքականություն դադարում է լինել ուժեղ ու վերանում է գոյաբանական աշխարհից: Եվ այս առումով, եթե սերնդի, մեր հասարակության առջև դրված է «Լինել, թե՝ չլինելու» խնդիրը և մենք պետք է հասկանանք պատմական պահի ողջ լրջությունը, մեր հասարակությունը պետք է գիտակցի, որ միայն ԱԶԳ-ԲԱՆԱԿ կարող է դառնալ այն երաշխիքը՝ հայենասիրական և քաղաքացիական դաստիարակության այն դպրոց-դարբնոցը, որը

<sup>45</sup> Լուրեր.com, Մայիսի 22, 2018: Մանրամասն՝ Արմեն Այվազյան, «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի»: Երևան, 2004, 2-րդ հրատ., էջ 128-133:

կիայտնաբերի ու կսնվի մեր ազգային էության նախակերպարի խորահատակ ներուժից ու կվերակերտի ԱԶԳԸ՝ նրան դարձնելով սոցիալական արդարության սկզբունքով ազնիվ ու կազապահ, հզոր ու հպարտ՝ թե՛ անհատական, թե՛ հավաքական առումներով:

#### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 48-ՐԴ

Տնտեսական և մարդկային սակավաթիվ ռեսուրսներով Հայաստանի Հանրապետության համար ռազմական և տնտեսական ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ապահովումը հնարավոր է միայն ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի որդեգրումով և կայացմամբ<sup>46</sup>:

#### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 49-ՐԴ

Հայաստանի Հանրապետության պարագայում ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ներդրման և կայացման համար անհրաժեշտ են հետևյալ հիմնական նախապայմանները.


Ա) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ համարելով ազգի և պետականության համար առաջնահերթ իրամայական, պետությունը պետք է ստանձնի հասարակության և հատկապես երիտասարդ սերնդի ազգային դաստիարակության գործընթացը՝ որդեգրելով ազգային գաղափարաբանությունը:

Բ) Երկրի տնտեսությունը պետք է վերակառուցվի լիովին տնտեսական նոր կացութաձևի որդեգրումով, քանի որ երկրի ԱՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ նախ և առաջ կախված է տնտեսական անկախության և անվտանգության նախապայմաններից:

- Գ) Աշխարհազոր՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգը, պետք է ֆինանսավորվի՝
- պետության կողմից,
  - «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» միջոցներից հատկացված 40% մասով,
  - Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների պետական ապրանքանիշերի (trademark) գնումից առաջացած միջոցներից (ուժ ու «Հայաստան-Սփյուռք» գլուխը, էջ՝ 23-32),
  - ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի նկատմամբ հավելյալ հարկումներից,
  - նվիրատվություններից:

## ԳԼՈՒԽ

### ԱՎԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒԺՎԱԾՔ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՆգ ԹԵՎԵՐԸ



<sup>46</sup> Հայաստանում ԱԶԳ-ԲԱՆԱԿ համակարգի ներդրման համար անհրաժեշտ է շվեյցարական, իսրայելական և ֆիննական արդեն առկա և տասնամյակներով աշխատող «ազգ-բանակ» (nation in arms) համակարգերի ուսումնասիրություն, մանրամասն մշակում և համապատասխանեցում:

Եթե մենք պայմանականորեն հասարակությունն ընդունենք որպես կենդանի օրգանիզմ, իսկ պետական համակարգն ու նրա կառուցվածքն այդ օրգանիզմի ընթացքն ու կյանքը կարգավորող համակարգ-մեխանիզմ, և դիտարկենք ու հաշվարկենք 30 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության բնակչության հետ տեղի ունեցած դժբախությունների աստիճանը՝ *արտազայթ, սով, աղքատության քարձր աստիճան, կոռուպցիա, պետական համակարգում ապազգային տարրերի թափանցում, պետականության կորստի վտանգ և այլն, ապա պարզ տեսանելի կլինի, որ այս ամենի զլիավոր պատճառը՝ 30 տարիների ընթացքում մեր կողմից ստեղծված անհեթեթ պետական համակարգն է՝ այդ համակարգում ազգային գաղափարախոսության չգոյությունն ու իշխանության թևերի հավասարակշռության ու զապումների մեխանիզմների բացակայությունը, որի արդյունքում մեզ համար «քումերանգային» ամենազորեղ հարվածը եղավ 2018 թվականից իշխանության եկած և 2020 թվականին Արցախը զիջած ու ՀՀ պետականությունը վտանգի տակ դրած գաղափարազուրկ և ապազգային «Իմբայլականների» վարքագիծը:*

Բազմահազար տարիների ընթացքում էթնիկական մեծամասնությամբ հասարակության պահպանումը թեև պայմանավորված է հասարակության հավաքական գիտակցությամբ՝ արժեքների ընդհանրությամբ<sup>47</sup>, սակայն ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ համար անհրաժեշտ է ավելին՝ հավաքական ՀԱՆՈՒՆԻ գաղափարը, որը մեր պարագայում, մեր երկրի աշխարհաքաղաքական վտանգավոր դիրքի առկայությամբ, իր մեջ պետք է ներառի ազգային ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ հրամայականը և ԷԿԱԿԱՆՔ՝ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ որպես պետական գաղափարախոսություն ընդունելու պայման։ Սակայն, թեև ԷՌՈՅՈՒՆ է որոշում կառուցվածքը, բայց կառուցվածքն այն կարենու նախապայմանն է, որը նպաստում կամ կաղապարում է էկանի՝ ազգային գաղափարաբանության դրսնորումը։

Կառուցվածքի և համակարգի առումով ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ նախագահական, կիսանախագահական, թե՝ խորհրդարանական համակարգերի ճիշտ ընտրությունը բացառիկ կարենոր է երկրի անվտանգության համար, որը սերտորեն աղերսվում է նաև պետական կառավարման համակարգում իշխանության թևերի հավասարակշռության ու զապումների մեխանիզմների ընտրության հետ։

Իշխանության՝ բների տարանջատումը, միմյանցից անկախությունը և իրար նըկատմամբ հակաշռությամբ հավասարակշռություն ապահովելու սկզբունքը ոչ միայն ժողովրդավարության, այլ նաև ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կառուցվածքի համար

պետք է լինի առանցքային։ Ո՞րն է **հակաշիռների և զապումների համակարգը**։ Օրինակ, ԱՄՆ-ում իշխանությունների տարանջատման, հակաշիռների և զբարպումների համակարգը կառավարության յուրաքանչյուր ճյուղին տալիս է առանձին լիազորություններ՝ ստուգելու մյուս ճյուղերը և կանխելու որևէ ճյուղի չափազանց հզոր դառնալը։ **Կոնգրեսն** իրավունք ունի օրենքներ ստեղծելու, բայց **երկրի նախագահն** իրավունք ունի վետո դնել դրանց վրա, իսկ **Գերագույն դատարանը** կարող է օրենքները հակասահմանադրական ձանաչել, սական **Կոնգրեսը** կարող է վերացնել Նախագահի վետոն երկու պալատներում ձայնների 2/3-ով։ **Հակաշիռների և զապումների համակարգը** նաև մասնաճյուղերին որոշակի լիազորություններ է տալիս մյուս մասնաճյուղերից անդամներ նշանակելու կամ հեռացնելու համար։ **Կոնգրեսը** կարող է իմփիչմենթի ենթարկել և դատապարտել երկրի **նախագահին** ծանր հանցագործությունների համար, ինչպիսիք են դափաճանությունը կամ կաշառակերությունը։ **Գերագույն դատարանի** դատավորների թեկնածուները առաջադրվում են երկրի **ՆԱԽԱԳԱՀԻ** կողմից, բայց հաստատվում են ՍԵՆԱՏԻ կողմից։ Նրանք կարող են պաշտոնանկ արվել **Ներկայացուցիչների պալատում** իմպիչմենտի և **Սենատում** դատապարտման միջոցով։ Այս համակարգում, բայցի օրենքներն անվավեր ճանաչելուց, յուրաքանչյուր մասնաճյուղի համար նախատեսում է միջոց՝ ստուգելու մյուսներին։ Սակայն, որքան էլ ԱՄՆ **հակաշիռների և զապումների համակարգը** թվում է լավագույններից մեկը, այն այնուամենայնիվ ունի իր անհուսալի թույլ կողմերը։

1-ին՝ միայն կուսակցություններով ձևավորված պառլամենտը չի՝ կարող արտահայտել ողջ հասարակության սոցիալական խավերի, այդ հասարակությունը կազմող դասերի ընդհանրական շահերն ու ապահովել հասարակության բոլոր խավերի ու դասերի իրավունքների ներդաշնակ պաշտպանությունը, առավել ևս, որ մեր օրերում կուսակցություններն ըստ էության գաղափարական տարբերակներ ինստիտուտներ չեն և չեն կարող ներկայանալ որպես հասարակության սոցիալական կամ արհմիութենական խավերի ներկայացուցչություն։ Կուսակցություններով պայմանավորված Արևմտյան պառլամենտարիզմի ձևաչափն իրականում խոշոր կապիտալի և մեզակորպորատիվ միավորներից սնվող ու հիմնականում նրանց շահերը պաշտպանող մարմին է։

2-րդ՝ ԱՄՆ **հակաշիռների և զապումների համակարգը** չի՝ նախատեսում ընտրված պաշտոնյաների՝ նախագահի, պառլամենտականների, դատավորների ժամկետից շուտ հետ կանչումը, եթե նրանք չեն գոհացնում իրենց ընտրողներին։

3-րդ՝ ԱՄՆ **հակաշիռների և զապումների համակարգը** չի՝ նախատեսում ընտրված պաշտոնաների ատեսավորում և իրենց գործունեության արդյունավետության առումով ամենամյա հաշվետվություն։

<sup>47</sup> Émile Durkheim, *The Division of Labour in Society*, translated by G. Simpson, NY, 1993, p. ix.

4-րդ՝ յուրաքանչյուր պառամենտականի կամ երկրի նախագահի ընտրություն պահանջում է ահոելի ֆինանսական միջոցների ծախս, որը շարքային քաղաքացին կամ նույնիսկ արհեստավարժ որևէ միություն իրեն չի կարող թույլ տալ ու ընտրապայքարներում լինել մրցակցային: Իսկ խոշոր կապիտալը, բնականաբար, սատարում է միայն իր շահերը ներկայացնողներին:

5-րդ՝ ԱՄՆ **հակաշիռների և զապումների համակարգը** չորրորդ իշխանությանը՝ ԶԼՍ-ներին (մամուլ, հեռուստատեսություն, սոցիալական համացանցեր) չի՝ համարում որպես իշխանության թե, և նրա վրա հիմնականում չունի վերահեսկողություն իրականացնելու կամ հակաշուկու լծակ: Բայց ԶԼՍ-ները լինելով խոշոր կապիտալի ներկայացուցիչների սեփականություն, ըստ իրենց քաղաքական հայեցողության, ամենաէական ներգործությունն են ունենում սոցիումի գիտակցության վրա:

6-րդ՝ ԱՄՆ **հակաշիռների և զապումների համակարգը** հինգերորդ իշխանությանը՝ Կենտրոնական բանկին չի՝ համարում որպես իշխանության թե ու նրա վրա չունի որևէ վերահսկողություն իրականացնելու կամ հակաշուկու և զապելու լծակ՝ ո՛չ կաղրային և ո՛չ Ֆեդերալ Ռեզերվ բանկի որոշումների վրա վետո դնելու առումներով: Ավելին, Ֆեդերալ Ռեզերվը, որպես բաժնետիրական ընկերություն, որի ակցիաների մեծ մասը պատկանում է մասնավոր բանկերին, պետությունից անկախ մարմին է, թեև ողջ երկրի դրամաշրջանառությունն ապահովող ու կազմակերպող ինստիտուտն է:

Վերևում, ԱՄՆ-ի պետական կառավարման կառուցվածքի օրինակով ներկայացվեց առաջավոր Արևմուտքում գործող **հակաշիռների և զապումների համակարգի** դրական և բացասական կողմերը: Սակայն ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ պարագայում դրանք պետք է լինեն տարբեր: **Տնտեսական նոր կացութաձևի** ներդրումով և ազգային հարստությունների նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխությամբ՝ իշխանության թերի հակաշուկության համակարգը էականորեն փոխվում է, քանի որ առաջին հերթին վերանում է օլիգարխիկ համակարգը, ազգային հարստությունների նկատմամբ քաղաքացիական սեփականության կիրառումն արագորեն ձևավորում է սոցիալական միջին խավն ու օխլոսը վերակերտվում է սուբորդինացված ու ինստիտուցիոնալ շերտավորումների, և նվազում է իրար նկատմամբ սոցիալական դասերի անտագոնիզմը: Իսկ երբ պետությունը նաև որդեգրում է ազգային զաղափարաբանությունը որպես պետական զաղափարախոսություն և կա նաև արտաքին թշնամի, ապա հասարակությունը դառնում է միասնական ու անքակտելի:

Հին Հունաստանի քաղաքական մտածողներն օխլոկրատիան համարում էին կառավարման երեք «վատ» ձևերից մեկը (բռնապետություն, օլիգարխիա և օխլոկ-

րատիա), ի տարբերություն կառավարման երեք «վավ» ձևերի՝ միապետություն, արիստոկրատիա և դեմոկրատիա: Հին հունական հասարակությունը բաղկացած էր սոցիալական չորս դասերից, սակայն միայն «դեմոսը՝ աթենական արիստոկրատիան և միջին դասը կարող էր մասնակցել ընտրություններին, բայց ոչ ստորին դասն ու ստրուկները: Շատերը, նույնիսկ մասնագետները, չեն կարողանում հասկանալ, որ թե՛ հին Հունաստանում, թե՛ այսօր, հասարակության յուրաքանչյուր սոցիալական դաս նաև ուեր և ունի տարբեր հավաքական գիտակցություն և հոգեբանություն: Եթե «դեմոսն» ինքն իրեն համարում էր պետության ստեղծողն ու պատասխանատուն, ապա «օլիգարխիան»<sup>48</sup> ու նրանից ավելի վատը՝ «օխլոս»-ը, իր ու իր ընտանիքից դուրս չուներ որևէ հավաքական արժեքի նկատմամբ հավատամբ ու պատասխանատվություն: Թե՛ հնագույն ժամանակներում և թե՛ այսօր հասարակության սոցիալական դասերի և խավերի հավաքական գիտակցությունն ու հոգեբանությունը նմանատիպ են, քանի որ այն աղերսվում է ոչ միայն սեփականության, այլ նաև կրթության ու դաստիարակության հետ: Հայաստանում, սոցիալական անտագոնիզմով տառապող այսօրվա սովետականատիպ հասարակության մեջ նույնիսկ գիտելիքի նկատմամբ չկա սուբորդինացիա. համացանցում ամենավերջին անգրագետն իրեն վերապահում է հակառակ գիտական կոչում ունեցողի մասնագիտական կարծիքին (*հայագիտական, տնտեսագիտական, ֆիզիկամաթեմատիկական կամ որևէ մասնագիտական կարծիքին*): Արևմուտքի, հենց թեկուզ ԱՄՆ-ի ընտրական համակարգն առաջին հայացքից թվում է օխլոկրատիկ համակարգ՝ երկրի նախագահին ընտրում է ժողովուրդը, սակայն իրականում այն ունի սահմանափակող զափիչներ՝ երկկուսակցական համակարգ, կուսակցություններում թեկնածուների ոչ պատահական առաջադրում, ընտրական կոլեգիա և այլն: Հայաստանում, քանի դեռ ֆինանսատնտեսական վերնախավն օլիգարխիկ է, օխլոսը մեծամասնություն է, իսկ սոցիալական միջին դասը լիարժեքորեն չի ձևավորված ազգային հոգեմտածողություն ունեցողները կամ քաղաքական *ազգային* մտավրականությունը չեն կարող ունենալ լուրջ (առնվազն 25%) հենարան հասարակության մեջ: Օխլոսի հոգեբանությունը՝ «Որտեղ հաց՝ Էնտեղ կաց», «Էղունգ ունես գլուխդ քորի» մոտեցումները, տարածական են ու կարող են ներառել թե՛ օլիգարխին, թե՛ մտավրականին կամ «չինովնիկին»: Եվ ուրեմն, ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կառուցվածքը և բարձր պաշտոնատար անձանց ընտրությունը, ինչպես նաև *իշխանության թերի հակաշիռների ու զապումների մեխանիզմները* պետք է լինեն այնպիսին, որ բացառեն վերոնշյալ կառավարման «բռնապետություն», «օլիգարխիա» և «օխլոկրատիա» ձևերը:

<sup>48</sup> Օլիգարխիա բառը ծագել է հունարեն oligos (որը նշանակում է «քիչ») և arkhein (որը նշանակում է «իշխանություն») բառերից:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 50-րդ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայացման համար նախ և առաջ անհրաժեշտ է ազգային գաղափարաբանությամբ և դրան համապատասխան տնտեսական կացութաձևի հիմքով ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹՅՈՒՆ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ համար ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹՅՈՒՆ օրենքները և կանոնները պետք է լինեն անբեկանելի և գործեն անմիջականորեն:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 51-րդ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ պարագայում ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ՝ որպես ֆինանսատնտեսական կարևորագույն գործիք, իսկ ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ որպես հասարակության հավաքական գիտակցության կոփման լծակ, չեն կարող անտեսվել և չհամարվել իշխանության թեր:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ պարագայում ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹՅԱՄԲ պետք է ամրագրվի, որ իշխանության թերը հինգն են ու դրանք իրար նկատմամբ պետք է հարաբերվեն հակակշիռների և զապումների մեխանիզմներով:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 52-րդ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ համակարգում անհրաժեշտ է, որ իշխանության երեք թերի ղեկավարները՝ թե՛ երկրի գործադիր իշխանության ղեկավարը՝ երկրի ՆԱԽԱԳԱՀԸ, թե՛ երկրի նարձրագույն ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ Ազգային ժողովը և թե՛ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴԻ 11 դատավորները, ուղիղ ընտրությունների ձևաչափով ընտրված լինեն ժողովրդի կողմից, քանի որ այդ ձևաչափը նրանց օժտում է ժողովրդի վստահության բարձրագույն հանձնագրով (մանդատ) և ապահովում է իշխանության երեք թերի անկախությունն ու իրարից տարանջատումը: Իսկ իշխանության մյուս երկու թերի՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ և ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ՝ «Լրատվության և հանրային կապերի խորհրդի» ղեկավարները պետք է հաստատվեն ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ կողմից:

Վարչապետական աթոռն անիմաստ ու հավելյալ ծախս է փոքր երկրի համար:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 53-րդ

**Հակակշիռների և զապումների մեխանիզմների առումով խորհրդարանական և կիսանախազահական կառավարման ձևաչափերն իրականում չհիմնավորված և միջանկյալ մոտեցումներ են:** ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ համատեսքում անհրաժեշտ է սահմանափակ լիազորություններով կառավարման ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, որտեղ հակակշիռների և զապումների մեխանիզմները էականորեն կսահմանափակեն երկրի նախազահի լիազորություններն ու իշխանությունը:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 54-րդ

Իրավական ժողովրդավարական հասարակության ներդաշնակ գոյությունը երնարավոր է նրա անդամների իրավունքների և պարտավորությունների հավասարությամբ, և այդ հասարակությունը կազմող դասերի ու սոցիալական խավերի շահերի պաշտպանությամբ, ինչը ենթադրում է այդ խավերի ներկայացուցչություն պետության քաղաքականության մշակման բարձրագույն օրենսդիր ատյանում և տեղական ինքնակառավարման համակարգերում:

Այս սկզբունքը ենթադրում է՝ ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ և կազմ՝

- Ա) ՀՀ համայնքների ներկայացուցիչներից՝ ամբողջի 1/3 մասով,
- Բ) ՀՀ արհեստակցական միությունների ներկայացուցիչներից՝ 1/3 մասով,
- Գ) ՀՀ կուսակցությունների ներկայացուցիչներից՝ ամբողջի 1/3 մասով:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 55-րդ

Անկախ և ինքնիշխան պետության մեջ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ չի կարող լինել պետական վերահսկողությունից դուրս կամ արտաքին՝ միջազգային կամ տեղական մասնավոր ֆինանսարանկային որևէ համակարգին ենթակա կամ հաշվետուու: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ պետք է լինի պետական ու հանդես զատության ֆինանսական գործակալ: **Հակակշիռների մեխանիզմների համաձայն ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՆ իր գործողություններում պետք է հաշվետու լինի ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ:**

Առաջարկվող տարբերակում ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ղեկավարի թեկնածությունն առաջադրում է երկրի ՆԱԽԱԳԱՀԸ, իսկ ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ հաստատում է, սակայն միայն ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆՆ իրավունք ունի անվստահություն հայտնել և պաշտոնանկ անել նրան՝ ձայների 2/3-ով:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 56-րդ

Չորրորդ իշխանությունը՝ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐՃՈՒՐԴՆ անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐՃՈՒՐԴՆ ձևավորվում է լրատվական դաշտում գրանցված ԶԼՄ-ների, արհեստակցական մասնագիտական միությունների ներկայացուցիչներից, և եռամյա ընտրություններով ձևավորում է իր վարչության կազմն ու նախագահությունը:

## ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 57-րդ

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՃՈՒՐԴՆ պետք է ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹՅԱՄԲ ամրագրվի որպես անկախ մարմին: ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՃՈՒՐԴՆ ձևավորվում է հասարակության կող-

մից հարգված, մեծահամբավ և իրենց մասնագիտական ոլորտներում մեծ ներդրումներ ու հաջողություններ գրանցած 40 ազգային նվիրյալներից: Երկրի իմաստուն ծերակույտը՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՉՈՒՐԴՆԸ, պետք է ունենա խորհրդակցական ձայն, սակայն կառավարության և օրենդիր մարմնի կողմից ներկայացված պետական-քաղաքական բացարձիկ կարևորության ծրագրերին փորձագիտական կարծիք և առաջարկություն անելու իրավունք:

**Իշխանության թերի հակակռության ու զսպումների մեխանիզմների համաձայն՝ քառասուն նվիրյալների միաձայն որոշմամբ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՉՈՒՐԴՆ իրավասու է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ բացարձիկ կարևորության որոշումների կամ միջազգային պայմանագրերի վրա արգելք դնել, եթե այդ որոշումներն ապազգային են կամ ոտնահարում են պետության կամ ժողովրդի շահերը:**

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՉՈՒՐԴԻ ընտրությունը (անժամկետ՝ ցմահ) պետք է լինի հասարակության հանրային կարծիքի հիմքով և **արհեստավարժ մտավորական միություններից** առաջադրվելու և ընտրվելու ձեչափով (ՀՀ Գիտությունների Ակադեմիա, ՀՀ Ճարտարապետների միություն, ՀՀ գրողների միություն և այլն): ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՉՈՒՐԴԻ անդամներից ակնկալվող բնութագրիչները՝ գիտական մասնագիտացում, անկուսակցական կարգավիճակ, մասնավոր կամ պետական ծրագրի շրջանակներում թիմային աշխատանքի փորձ, անաշառություն և հասարակության կողմից ընդունելի նկարագիր:

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՉՈՒՐԴԸ պետք է բաղկացած լինի չորս մասնագիտացված փորձագիտական խորհուրդներից:

- 1) Տնտեսական փորձագիտական խորհուրդ,
- 2) գինվորական փորձագիտական խորհուրդ,
- 3) մշակույթի, գիտության և կրթության փորձագիտական խորհուրդ,
- 4) միջազգային հարաբերությունների փորձագիտական խորհուրդ:

Փորձագետների խորհուրդների ակնկալվող գործառույթները պետք է լինեն՝

- 1) պետական ծրագրերի փորձաքննություն, 2) կառավարության ծրագրում ամրագրված գերակայությունների իրազորման մեխանիզմների մշակում, 3) հասարակական հնչեղության խնդիրների ուսումնասիրություն և խորհրդատվություն:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 58-րդ

Ա) Երկրում ընտրական և նշանակովի բարձրագույն պաշտոնների թեկնածուները պետք է ունենան մասնագիտական փորձառություն և ատեստառքվեն:

Բ) Ընտրական պաշտոններում կարող են ընտրվել միայն Հայաստանում ծընված և վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակչող քաղաքացիները:

Գ) Սփյուռքի մասնագիտական ներուժն օգտագործելու առումով երկրի բարձրագույն նշանակովի պաշտոններում կարող են նշանակվել նաև արտերկրում ապրող ազգությամբ հայ և ՀՀ քաղաքացիություն ունեցողները:

## ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՆգ ԹԵՎԵՐԸ

**Իշխանությունների տարանջատումն ու դրանց հակակռությամբ հավասարակռության ապահովման հեղինակը 18-րդ դարի ֆրանսիացի իրավագետ-փիլիսոփա Շառլ Լուի Մոնտեսըյոն է և այն հնարավորինս դրականորեն օգտագործվեց ԱՄՆ Սահմանադրության հեղինակների՝ հիմնադիր հայրերի կողմից: Սակայն այդ գաղափարը շատ ավելի հին է. գաղափարի հիմքում առկա է բնության օրինաչափություններից բխող ԹԵԶ-ԱՆՏԻԹԵԶ-ՍԻՆԹԵԶ բանաձևը, որը ներկայանում է գերմանական դասականների՝ Հեգելի, Կանտի, Ֆիլստեի և Շելլինգի աշխատություններում, սակայն, որպես **հակակռությամբ հավասարակռություն** ապահովելու գաղափար, այն հայտնի էր թե՝ հնդ-արիական՝ վեդայական, թե՝ հնագույն հայկական՝ «Սասնա Ծոեր» աշխարհահանաշողական համակարգերում, և թե՝ հին հունական փիլիսոփայության մեջ՝ ՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՍՈԼԻՄՆԵՐ անունով, որոնք բնորոշում էին նյութի՝ կարծը, հեղուկ, հրային և գազային իրար հակադիր չորս վիճակները, իսկ եթերը՝ որպես Աստծո կամ այդ չորսի վիճակների կոմպոզիցիա<sup>49</sup>:**

Բնության մեջ գոյություն ունեն չկրկնվող հինգ հիմնական ծավալաձևեր, որոնց եզրերը և դրանց ներքին անկյունները հավասար են: Հնում դրանք կոչվել են «Պլատոնական սոլիդներ»՝ տեսրահեղրոնը՝ 4 նիստ - հուր, խորանարդը՝ 6 նիստ - հող, օկտահեղրոնը՝ 8 նիստ - օդ, իկոսահեղրոնը՝ 20 նիստ - ջուր, և դոդեկահեղրոնը՝ 12 նիստ - եթեր կամ ըստ հայկական անվանման՝ ԱՐՓ<sup>50</sup> (Վանի հայկական թագավորությունում՝ մ.թ.ա. IX-VII դարերում, լայնորեն օգտագործվել են սրբազն համարվող թաքնագիտական երկրաչափության մեթոդները)<sup>51</sup>:

Մեր ժամանակներում պետության մեջ իշխանությունն ունի ոչ թե երեք, այլ


<sup>49</sup> Պլատոնից հազարմյակներ առաջ հին Հայաստանում ջուր, հուր, օդ, հող և արփ-եթեր կեմենտներն արդեն օգտագործվում էին կենդանակերպի կարդինալ աստեղատների պարագայում՝ որպես տարվա գարուն-աշուն, ամառ-ձմեռ չորս եղանակների սկիզբ-ծելով իրար նկատմամբ հակադրորեն ամրագրված գարնանային և աշնանային գիշերահավասարների, ձմեռային և ամառային արևադարձերի ժամանակ ԱՐՓԻ-արևի դիրքը ՑՈՒԼ և ԿԱՐԻՃ (հող և օդ), ՋՐՀՈՍ և ԱՌՅՈՒԾ (ջուր և հուր) իրար հակադիր աստեղատներում: Տե՛ս Արթուր Արմին, «Հալդիի դարպասներ», Երևան, 2020 թ.:

<sup>50</sup> Տե՛ս Հրաչյա Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1926թ., էջ 345:

<sup>51</sup> Տե՛ս Արթուր Արմին, «Հալդիի դարպասներ», Երևան, 2020 թ.:

հինգ թեր. դրանք են՝ **ՕՐԵՆՍԴԻՐ**, **ԳՈՐԾԱԴԻՐ**, **ԴԱՏԱԿԱՆ**, **ՉՈՐՉՈՐԴԻ ԻՇԽԱ-ՆՈՒԹՅՈՒՆ**՝ զանգվածային լրատվական և հեռուստատեսային միջոցներն ու նրանց ազդեցությունը սոցիումի վրա և կենցուական բԱՆԿ:

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կառուցվածքում՝ օրենսդիր, գործադիր, դատական, չորրորդ իշխանություն և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ բանկ՝ իշխանության հինգ թերը պարզ ու պատկերավոր ներկայացնելու համար** կօգտագործենք նեղիթյան ժամանակ-ներից «Պլատոնական սոլիդներ»<sup>52</sup> անունով հայտնի ծավալաձերի սիմվոլները:



Ստորև ներկայացված ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կառուցվածքի և իշխանության թերի **հակակշռների և զապումների համակարգի** առաջարկվող տարբերակում, հաշվի են առնվել աշխարհում գործող ու հայտնի համակարգերի դրական և բացասական կողմերը, հայց ավանդական պատմական փորձը և բնության օրինաչափություններից բխող հետևյալ սկզբունքային մեթոդաբանությունները՝

- 1) «Կառուցվածքային ֆունկցիոնալիզմ»-ի տեսությունը, որը հասարակությունը դիտարկում է որպես բարդ համակարգ, որի մասերը համերաշխություն և կայունություն խթանելու համար համագործակցում են<sup>53</sup>,
- 2) բնության մեջ գոյություն ունեցող հավասարակշռության օրինաչափությունը,
- 3) **Թեղանտիթեղանթեղ** մեթոդաբանությունը, որն առաջարկած համակարգում ներկայացվում է որպես հիբրիդային կոմբինացիոն առաջարկով հակադիր կողմերի և շահերի փոխհամաձայնեցման մեթոդ,

<sup>52</sup> Օրոփորդի Աշմոլինի թանգարանում պահվում են նեղիթյան ժամանակներում քարից պատրաստված հինգ «Պլատոնական սոլիդներ» անունով կոչված ծավալաձերը:

<sup>53</sup> John J Macionis; Linda M Gerber, "Sociology", Toronto, 2011.

4) Զոն Նեշի «Հավասարակշռության միավորներ N թվով անձերի խաղերում»<sup>54</sup> թեորեմը՝ որպես տարբեր խավերի հավաքական շահերի համադրման մեթոդ:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 59-րդ

Ազգային պետության ՀԱԿԱԿՇԻՌՆԵՐԻ ԵՎ ԶՍՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ կարող են լինել հետևյալ մեխանիզմները.

Ա) **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ** իրավասությունն է ընդունել օրենքներ, բայց գործադիր իշխանության դեկավարը՝ **ՆԱԽԱԳԱՀԸ**, իրավունք ունի վետո դնել դրանց վրա, սակայն **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** կարող է վերացնել **ՆԱԽԱԳԱՀԸ** վետոն ձայների 2/3-րդով:

Բ) **ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ** անդամներին նշանակում է երկրի **ՆԱԽԱԳԱՀԸ**, բայց նրանց հաստատում է **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ**՝ ձայների պարզ մեծամասնությամբ: **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** կարող է երկրի **ՆԱԽԱԳԱՀԸ** հայտնել անվտահություն և պաշտոնանկ անել ձայների 2/3-ով:

Գ) **ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ**՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, հաշվետու է **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ**, սակայն **ՆԱԽԱԳԱՀԸ**՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ սահմանված դեպքերում և կարգով, կարող է անգործության կամ ժողովրդական շահերին ընդդիմանալու հիմքով նախաձեռնել **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ** արձակելու գործընթաց՝ դիմելով ժողովրդին, ինդրել սատարել իրեն ու Ազգային ժողովն ընտրողների 1/2-ի համաձայնությամբ՝ ստորագրահավաքով, ժամանակից շուտ արձակել:

Դ) **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ** իրավասու է չհաստատել **ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ** հնգամյա ռազմավարական ծրագիրը կամ ամենամյա պետքուցեի նախագծը, սակայն **ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** իրավունք ունի չհամաձայնել **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ** հետ և իր առաջադրված ծրագիրը՝ վերախմբագրված, երեք անգամ ներկայացնել **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ**՝ այն հաստատելու համար: Երրորդ անգամ հավանության շարժանանալու դեպքում **ՆԱԽԱԳԱՀԸ** ներկայացնում է իր և կառավարության հրաժարականը:

Ե) **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ** եռաշերտ կառուցվածքը՝ համայնքներից, արհիմություններից և կուսակցություններից հավասարաշափ պատգամավորների քանակը, նախ հասարակության հնարավոր բոլոր սոցիալական խովերի ներկայացուցություն է, երկրորդ բացառում է իշխանության որևէ թերի գերիշխանությունը մյուսների նկատմամբ, երրորդ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ստեղծում է հակակշռությամբ հավասարակշռություն, իսկ որևէ պատգամավորի թերի աշխատանքի դեպքում ունի նրան ժամանակից շուտ կանչելու մեխանիզմներ (դրույթներ 61, 62, 63):

<sup>54</sup> Զոն Ֆորբս Նեշ՝ Նորելյան մրցանակակիր, հիմնարար ներդրում է ունեցել դիֆերենցիալ երկրաշափության և մասնակի դիֆերենցիալ հավասարումների ուսումնասիրության մեջ:

Զ) Պատերազմական իրավիճակում **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** ձայների 2/3-ով իրավասու է երկրի **ՆԱԽԱԳԱՀԻՆ** գրկել երկրի գլխավոր հրամանատարի կարգավիճակից և նշանակել ժամանակավոր գլխավոր հրամանատար, եթե նա ի վիճակի չէ կամ թերի է կատարում իր պարտականությունները:

Է) **ԸՆՏՐՈՂՆԵՐԸ** կարող են ինքնուրույն կազմակերպվել և ժամկետից շուտ հեռացնել երկրի **ՆԱԽԱԳԱՀԻՆ**, եթե հավաքեն ընտրազանգվածի ձայների 1/2-րդը:

Ը) **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԸ**՝ 11 բարձրագույն մասնագետ-դատավորներով, որոնք 7 տարի ժամկետով ընտրվում են ժողովրդի կողմից՝ ուղիղ ընտրությամբ, Սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Սահմանադրության գերակայությունը: **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԸ** անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը:

Թ) **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԸ** կարող է **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ** ընդունած օրենքները ճանաչել հակասահմանադրական, սակայն **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ** դատավորները կարող են պաշտոնանկ արվել **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ** կողմից:

Ժ) **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԸ** իրականացնում է սահմանադրական վերահսկողություն, ինչպես նաև քննում և տալիս է եզրակացություն երկրի անունից կնքված միջազգային պայմանագրերին՝ երկրի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ համապատասխանելու վերաբերյալ:

ԺԱ) **ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻՆ** նշանակում է **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** երկրի **ՆԱԽԱԳԱՀԻՆ** ներկայացմամբ:

ԺԲ) Մինչ դատական քրեական վարույթ իրականացնող մարմիններն անկախ են.

1. Քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը:

2. Քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

ԺԳ) **ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ և ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ դեկավարներին նշանակում է երկրի **ՆԱԽԱԳԱՀԸ**, սակայն նրանք հաշվետու են **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ**:**

ԺԴ) **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ** պետական մարմին է և իր գործողություններում պետք է հաշվետու լինի **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ**:

ԺԵ) **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ** ղեկավարի թեկնածությունն առաջադրում է **ՆԱԽԱԳԱՀԸ**, իսկ **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** հաստատում է, բայց իրավունք ունի անվտահություն հայտնել և պաշտոնանկ անել՝ ձայների 2/3-ով:

ԺԶ) Չորրորդ իշխանությունը՝ **ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԸ** անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Պատերազմա-

կան կամ արտակարգ դրության պայմաններում օրենքով կարող է սահմանափակվել **ՉՈՐՐՈՐԴԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ** լիազորությունները:

ԺԷ) **ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՆԸ** (ազգային 40 նվիրյալները) անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: **ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՆԸ** թեև ունի միայն խորհրդակցական իրավասություն՝ կառավարությանն ու օրենդիր մարմնին ծրագրեր և օրենքներ առաջարկելու իրավունք, սակայն ձայների միաձայնությամբ իրավասու է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ բացառիկ կարևորության որոշումների կամ միջազգային պայմանագրերի վրա արգելք դնել, եթե դրանք ապազգային են կամ ոտնահարում են պետության կամ ժողովրդի շահերը:

ԺԸ) Եթե երկրի նախագահը կամ կառավարությունը խախտում են **ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**, որի մասին հայտարարում է երկրի **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԸ** կամ երկրի **ԽՈՐՀՐԴՆԱՐԱԾԸ**՝ ձայների 2/3-ով և կամ **ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԸ**՝ միաձայն, ապա ըստ **ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ՝ ԲԱՆԱԿԸ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ** պետք է անցնեն **ԽՈՐՀՐԴՆԱՐԱԾԻ** վերահսկողության ներքո և **ԽՈՐՀՐԴՆԱՐԱԾԻ ՆԱԽԱԳԱՀԸ** դառնում է երկրի գերազույն գլխավոր իրամանատար:

## ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

### Նախարան և տեղեկատվություն:

«Ավագների ժողով է հիշատակում Հայաստանի առաջին՝ Արտատա պետությունում Ք. Ա. XXVIII-XXVII դարերում», Հայասա-Ազի թագավորությունում՝ Ք. Ա. XV- XIII դարերում, Վանի թագավորությունում՝ Ք. Ա. IX-VII դարերում»: «Ավագների ժողովի գարզացմամբ ստեղծված Աշխարհաժողովն արդեն որակապես նոր երևույթ էր: Այն գոյություն է ունեցել Արտաշեսյան և Արշակունյաց ժամանակաշրջաններում, ունեցել է բացառիկ մեծ ընդգրկում՝ ներառելով հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչներին»<sup>55</sup>: «Այս ամենի համատեքստում, ճիշտ կլիներ, որ այսօր ոչ թե կրկնօրինակեինք Արևմուտքին, այլ հիմք ընդունելով մեր պատմության իրականությունը՝ ՀՀ խորհրդարանը «Ազգային ժողով»-ի փոխարեն

<sup>55</sup> Արտակ Մովսիսյան, «Աշխարհաժողով. Հին Հայաստանի բարձրագույն խորհրդատվական ժողովը՝ երկրի ղասային համերաշխության երաշխավոր», 21 ԴԱՐ, թիվ 3(13), 2006 թ.: ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎԸ հայոց հեթանոսական շրջանում իրավիրվում էր ամենամյա՝ Նավսարդյան տոներին, Բազարան գավառի Վանատուր տաճարի սրբավայրում, որը գտնվում էր Նավսարդյան ստորոտին, իսկ քրիստոնեության շրջանում՝ Հայոց թագավորի բանակատեղիում: ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎՆ այնքան հզոր և կարևորություն ունեցող ինստիտուտ էր, որ կարող էր գահազրել թագավորին կամ ընտրել Ամենայն հայոց հայրապետ:

կոչեինք Աշխարհաժողով»<sup>56</sup>: Պատմական անվանումից բացի, իմաստաբանորեն և ըստ էության դա նույնպես ճիշտ կլիներ, քանի որ Հայաստանի բարձրագույն ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ պետք է ընդգրկի ներկայացնություն՝ հասարակության հընարավորինս բոլոր սոցիալական խավերից:

Երկրի բարձրագույն ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ պետք է ձևավորել ոչ թե կամային մոտեցումով կամ իբրև թե տարբերաբնեո զաղափարական քաղաքական կուսակցությունների հիմքով, որն իրականում չի համապատասխանում իրականությանը և միայն խոշոր կապիտալին ձեռնտու արևմտյան մոդել է, այլ հիմնավորված օրինաչափություններով պայմանավորված սկզբունքների հիմքով:

### ՍԿԶԲՈՒՔ ԱՌԱՋԻՆ՝

Իրավական ժողովրդավարական հասարակության ներդաշնակ գոյությունը հընարավոր է նրա անդամների իրավունքների և պարտավորությունների հավասարությամբ, և այդ հասարակությունը կազմող դասերի ու սոցիալական խավերի շահերի պաշտպանությամբ, ինչը ենթադրում է այդ խավերի ներկայացնություն պետության քաղաքականության մշակման բարձրագույն օրենսդիր ատյանում և տեղական ինքնակառավարման համակարգերում:

### ՍԿԶԲՈՒՔ ԵՐԿՐՈՐԴ՝

Երկրի բարձրագույն ՕՐԵՆՍԴԻՐ իշխանության՝ ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎԻ ներկայացնության կառուցվածքը պետք է խարսխված լինի հիմնարար օրինաչափության վրա: Եվ այդ օրինաչափությունը՝ հասարակության սոցիալական դասերի ու խավերի ընդհանրական շահերն ու նրանց համար ընդհանուր հանդիսացող սեփականությունն է:

Այս հիմնարար օրինաչափության հիմքով են հանդես գալիս՝ թե՝ համայնքները, թե՝ արհմիութենական կառուցները և թե՝ խոշոր կապիտալի կողմից սատարվող քաղաքական կուսակցությունները:

### Բացատրություն:

Ա) Համայնքներն ունեն ընդհանուր սեփականություններ, իսկ համայնքներում ապրող բնակչությունն ունի իր բնակավայրի հետ կապված ընդհանրական՝ համայնքային շահեր:

Բ) Արհեստական միությունները (համբարությունները) ոչ թե տեղայնա-

կան՝ համայնքային, այլ համաերկրային՝ որոշակի ոլորտի աշխատողների արհեստական հիմքով կազմակերպված միավորումներ են, որոնք ստեղծված են արհեստավարժ միության անդամների ընդհանուր շահերի հիմքով (վարձատրության, աշխատանքային պայմանների, սոցիալական երաշխիքների և քաղաքական ստատուսի բարելավման): Անհրաժեշտ է ՀՀ-ում, օրենքի և պետական սատարման տարբեր միջոցներով բարձրացնել արհմիությունների դերը երկրի ներքաղաքական կյանքում: *Առանց արհեստական միությունների զարգացման, որոնք հանդիսանում են գործատուների՝ խոշոր կապիտալի շահերի միակ զարող ուժը, որեւէ հասարակություն ի վիճակի չէ ձևավորել սոցիալական արդարություն և քազմաքեններքաղաքական կյանք:*

ՀՀ-ում այսօր կան զրանցված շուրջ 19 ճյուղային՝ ոլորտային արհեստակացական միություններ՝ 170 հազար անդամներով, սակայն պետք է ընդգծել, որ «Գրողների միությունը», «Ճարտարապետների միությունը», «Ժուրնալիստների միությունը», «Նկարիչների միությունը» ինչպես նաև տասնյակ այլ սեկտորալ միություններ, ըստ էության, նույնպես արհեստական միություններ են, որոնք ունեն իրենց սեփականությունը՝ մասնաշենքեր, տարածքներ և այլն, և **ունեն խմբային ընդհանուր շահեր**: Որոշ անգետներ շփոթում և նույնացնում են պրոլետարիատն ու արհեստական միությունները, սակայն դրանք լիովին տարբեր բաներ են: Ի տարբերություն պրոլետարիատի, արհեստական միությունները պրոֆեսիոնալ միություններ են, ունեն **մասնագիտական և մտավորական ներուժ, ընդհանուր շահեր և սեփականություն**: Ժամանակակից աշխարհում արհմիությունները քաղաքակության ամբաժանելի մասն են կազմում: Կենտրոնական Եվրոպայի երկրներում արհեստական միությունները ոչ միայն իրականացնում են իրենց խմբային շահերի պաշտպանությունը, այլ նաև ընդլայնակի ընդգրկված են երկրի քաղաքականության մշակման պրոցեսին:

(Արհեստական միությունների ներկայությունը երկրի բարձրագույն օրենսդիր ատյանում շահեկան է նաև նրանով, որ նրանք փայլուն տեղեկացված են իրենց ոլորտների կարիքներից ու պահանջներից):

Գ) Օրենդիր իշխանության կառուցվածքի վերոնշված բաժանման պարագայում կուսակցությունները, որպես քաղաքական ինստիտուտներ, ձեռք են բերում ֆունկցիոնալ բովանդակություն և դիրք: Քաղաքական դաշտում նրանք կամ ներկայացնելու են գործատուների՝ կապիտալի ընդհանրական շահերը, կամ հանդես են գալու որպես քաղաքական ազատ մասնագետ-զաղափարականների (freelancer) խումբ-կուսակցություններ, որն ՕՐԵՆՍԴԻՐ կառույցի համար անհրաժեշտ է ձկունության և թարմ զաղափարանների շրջանառության համար:


<sup>56</sup> Արտակ Մովսիսյան, նույն տեղում:

## ԱՎՋԲՈՒՆՔ ԵՐՐՈՐԴ՝

Ազգային ժողովի կառուցվածքը պետք է նպաստի հակակշիռներով հավասարակշռություն ստեղծելու՝ հակադիր ուժերի հարաբերություններում **թեզի և անտի-թեզի** հակադրությամբ **սինթեզի** արդյունքով ընդունելի առաջարկություն ստեղծելու հնարավորություն:

Երկրի բարձրագույն օրենսդիր ատյանի՝ **ԱՇԽԱՇԱԺՈՂՈՎՔԻ** առաջարկվող կառուցվածքը (*որտեղ որոշումները պետք է ընդունվեն ձայների մեծամասնությամբ*) հնարավորություն է տալիս կիրառել բնության օրինաչափությունից բխող հավասարակշռության (*բաղանսի*) օրինաչափությունը, որը հիմքում ունի հակակշիռների բանաձևը: Այսինքն, եթե նույն կառուց-միջավայրում՝ **ՕՐԵՆՍԴԻՐ ԱՏՅԱՆՈՒՄ** կամ «խառն համադրված» տնտեսական համակարգում, հավասարաչափորեն տեղադրվում են իրար հակակշռող շահերով պայմանավորված սուբյեկտներ, և չկա «փախուստ» այդ կառուցվածքային միջավայրից, ապա նրանց շահերի **թեզ-անտի-թեզ** հակադրությունն ի վերջո պետք է ունենա միայն փոխզիջումային՝ **սինթեզի** արդյունքը: Եվ առաջարկված տարբերակում՝ Զոն Նեշի մշակված բանաձևի կիրառման համաձայն, - եթե հասարակության յուրաքանչյուր սոցիալական խավ կարողանա ներկայացնել իր շահերը պետության քաղաքականության մշակման բարձրագույն օրենսդիր ատյանում, և նրանցից յուրաքանչյուրն ըստ խաղի խիստ կանոնների նախօրոք իմանա մնացածների ռազմավարությունը, ապա արդյունքում՝ իր ներդրմանը համապատասխան կշահի յուրաքանչյուրը՝ առանց հավասարության պարտադրանքի<sup>57</sup>:

## **ԱՇԽԱՇԱԺՈՂՈՎՔ (Ազգային ժողով)**



**ԱՇԽԱՇԱԺՈՂՈՎՔ**  
(Ազգային ժողով)

Իկոսահետրոնն ունի հավասարաշափ անկյուններով եռանկյունաձև 20 նիստ:

**ԱՇԽԱՇԱԺՈՂՈՎՔԸ՝** Ազգային ժողովը, պետք է բաղկացած լինի 108 պատգամավորներից, լինի եռաշերտ՝ 1/3 հավասարաշափ բաժանումներով՝  $3 \times 36$ :

**ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԸ պետք է ունենա 20 աշխատանքային մըշտական հանձնաժողովներ:**

## **ՀԻՄՆԱՌՈՒՅԹ 60-րդ**

ԱՇԽԱՇԱԺՈՂՈՎՔԻ ընտրությունները և կազմը պետք է լինի եռաշերտ՝ Ա) համայնքների ներկայացուցիչներից՝ ամբողջի 1/3 մասով,

Բ) արհեստակցական միությունների ներկայացուցիչներից՝ 1/3 մասով,

Գ) կուսակցությունների ներկայացուցիչներից՝ ամբողջի 1/3 մասով:

Խորհրդարանի այս եռաշերտ կառուցվածքը ԲԱՑԱՌՈՒՄ է գործադիր իշխանության և նրա ղեկավարի՝ երկրի նախագահի, կուսակցական, արհմիութենական կամ համայնքային մեծամասնություն ունենալու հնարավորությունը:

## **ՀԻՄՆԱՌՈՒՅԹ 61-րդ**

### **(ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱԺՈՂՈՎՐԴՅՈՒՆ)**

Համայնքների բնակիչներն ընտրում են թե՝ իրենց համայնքների ավագանուն, թե՝ համայնքապետ, թե՝ մեծամասնական ընտրական ձևաչափով՝ շրջանային խորհրդի պատգամավոր, որի շնորհիվ նաև ձևավորվում են երկրի 36 ՇՐՋԱՆԵՐԻ խորհրդները: ՇՐՋԱՆԱՅԻՆ խորհուրդների ընտրված ներկայացուցիչներն ընտրում են պատգամավոր երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի՝ **ԱՇԽԱՇԱԺՈՂՈՎՔԻ** համար: Արդյունքում, Հայաստանի Հանարապետության շրջաններից՝ 36 պատգամավոր (*յուրաքանչյուր շրջան պետք է ներկայացնի մեկ պատգամավոր*): Համայնքները ներկայացնող ՇՐՋԱՆԱՅԻՆ խորհուրդներն իրենց խորհրդում, ձայների 2/3-ով, կարող են անվտանություն հայտնել ու երկրի ԽՈՐՃՐԱՐԱՆԻՑ հետ կանչել իրենց կողմից ընտրված պատգամավորին ու առաջադրել նոր պատգամավոր, եթե նա թերանում կամ չի պաշտպանում իր համայնքի և շրջանի շահերը:

Համայնքներում և վարչական շրջաններում իրականացվում է տեղական ինքնակառավարում: Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ:

*(Համայնքների խոշորացման այսօրվա գործընթացը հակաժողովրդական է և ապազգային: Այդ ծրագիրը փուլում է համայնքային սեփականությունը և համայնքների ինքակառավարման ժողովրդավարության սկզբունքը):*

## **ՀԻՄՆԱՌՈՒՅԹ 62-րդ**

### **(ԱՐՃԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԺՈՂՈՎՐԴՅՈՒՆ)**

Երկրի արհեստակցական միությունների ընտրությունները ենթադրում են մեծամասնական ընտրությունների ձևաչափ:

Յուրաքանչյուր աշխատանքային միությունից (*Enterprise Union*) ընտրված ներկայացուցիչը **ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՐՃԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ** բարձրագույն խորհրդում ներկայացնում է իր կազմակերպությունը: **ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՐՃԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ** բարձրագույն խորհրդն իր հերթին ընտրում է **ԱՇԽԱՇԱԺՈՂՈՎՔԻ** համար պատգամավոր: Արդյունքում, յուրաքանչյուր ՈԼՈՐՏԱՅԻՆ

<sup>57</sup> Տե՛ս՝ John F. Nash, Jr., Equilibrium Points in N-Person Games, Nobel Seminar, 1994.

**ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ 2 պատգամավոր, ընդհանուրը՝ 36 պատգամավոր 18 ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ:**

**ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ** իրենց բարձրագույն խորհուրդներում ձայների 2/3-ով կարող են անվստահություն հայտնել ու երկրի ԽՈՐՀԸՐԴՐԱՄԱՆԻՑ հետ կանչել իրենց կողմից ընտրված պատգամավորին ու առաջադրել նոր պատգամավոր, եթե նա թերանում կամ չի պաշտպանում իր ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ շահերը:

#### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 63-ՐԴ**

##### **(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՅՆՎՐՅՈՒՆ)**

Երկրի քաղաքական կուսակցություններն իրենց ներկայացուցիչներին ներկայացնում են տեղամասերում՝ ԱՇԽԱՐՀԱԾՈՂՈՒՄ (Ազգային ժողովում) 36 պատգամավորական տեղերի համար:

Քաղաքական կուսակցությունները մասնակցում են ընտրություններին համամասնական ձևաչափով՝ ներկայացնելով իրենց թեկնածուներին ՀՀ տարածքում: Անցումային նշանակությունը 3% է: Տոկոսային հարաբերությամբ առաջին շրջա տեղերը գրաված կուսակցություններն ու նրանց թեկնածուները կարող են համամասնորեն ներկայացնել ԱՇԽԱՐՀԱԾՈՂՈՎԻ (ԱԺ-ի) 36 մանդատները: Խորհրդարանական յուրաքանչյուր կուսակցություն կարող է հետ կանչել իր պատգամավորին և առաջադրել նոր թեկնածու, եթե նա թերանում է կամ չի պաշտպանում կուսակցության շահերը:

#### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 64-ՐԴ**

Հայաստանի Հանրապետությունում **տեղական ինքնակառավարման մարմինների, արհսիրությունների և կուսակցությունների** ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրական օրենքով:

Հայաստանի Հանրապետությունում ժողովրդի իշխանությունն իրականացվում է ընտրությունների հանրաքվեների միջոցով:

Պետական և ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

#### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 65-ՐԴ**

Օրենսդիր մարմնի՝ ԱՇԽԱՐՀԱԾՈՂՈՎԻ եռաշերտությունը որոշում է նրա նախագահության ձևաչափը: Խորհրդարանի նախագահի երեք տեղակալներն առաջադրվում են և պետք է լինեն «Համայնքների», «Արհեստակցական միությունների» և

«Կուսակցությունների» ֆրակցիաներից, իսկ խորհրդարանի նախագահն ընտըրվում է խորհրդարանի 2/3-րդ ձայների մեծամասնությամբ:

#### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 66-ՐԴ**

Քանի որ ՕՐԵՆԴԻՐ ՄԱՐՄԻ աշխատանքները սերտորեն փոխկապակցված են ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ աշխատանքների ու ծրագրերի հետ, ապա նպատակահարմար է, որ ԱՇԽԱՐՀԱԾՈՂՈՎՆ ունենա ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ 12 նախարարություններին և 8 համապետական ու համահայկական կառույցներին համապատասխան մշտական աշխատանքային խմբեր ու հանձնաժողովներ, որոնք ՕՐԵՆԴԻՐ և ԳՈՐԾԱԴԻՐ կառույցների միջև կստեղծեն թե՝ դիրքային հակակշռություն, թե՝ անընդհատական աշխատանքային փոխհարաբերություն:

Ուր համապետական ու համահայկական կառույցներն են՝ «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը», «Գյուղկոռպերացիան», «Պետախրավական հարցերի հանձնաժողովը», «Հաշվիչ հանձնախումբը», «Համահայկական Ազգային բաժնետիրություն» կառույցը, «Սփյուռքի ներկայացուցական պալատը», «Ազգային զարգացման համահայկական բանկիը» և «Չորրորդ իշխանությանն» առնչվող հանձնաժողովները (12 նախարարություններին համապատասխան հանձնաժողովները՝ տե՛ս ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնում ներկայացված 12 նախարարությունների ցանկը):

#### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 67-ՐԴ**

Երկրի բարձրագույն օրենսդիր ատյանում օրենքներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ Սահմանադրական օրենքները՝ ձայների 2/3-րդ մեծամասնությամբ: ԱՇԽԱՐՀԱԾՈՂՈՎԻ լիազորությունները սահմանվում են ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՄԲ:

#### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 68-ՐԴ**

Երկրի ԽՈՐՀԸՐԴՐԱՄԱՆԻ պատգամավոր ընտրվելու իրավունք ունեն բոլոր այն ՀՀ քաղաքացիները, նաև երկրադարձիություն ունեցողները, որոնք վերջին հինգ տարիների ընթացքում, որպես հիմնական բնակության վայր, ապրում են Հայաստանի Հանրապետությունում և կատարել են իրենց քաղաքացիական պարտականությունները:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորը ընտրվում է 4 տարի ժամկետով:

ՀՀ Ազգային ժողովի՝ ԱՇԽԱՐՀԱԾՈՂՈՎԻ պատգամավորական բոլոր թեկնածուները պետք է անցնեն ատեստացիա.

— լինեն առնվազն 30 տարեկան,

- ունենան բարձրագույն կրթություն,
- ավարտած լինեն հայկական դպրոց կամ ԲՈՒՀ, որպեսզի լինեն հայ մշակույթի կրող,
- ծառայած լինեն ՀՀ բանակում,
- ունենան առնվազն 7 տարվա աշխատանքային կամ բիզնես փորձառություն,
- արդյունավետության գործակցով անցնեն ամենամյա ատեսացիա (*հաշվի է առնվում՝ բացակայությունների թվաքանակը, ընտրողների հետ հանդիպումների և նրանց բարձրացրած հարցերին ընթացք տալու քանակը, ԱՇԽԱՐԱՀԱԺՈՂՈՎԻ պատզամավորի կողմից կատարված ծրագրային առաջարկությունների քանակը, հանձնաժողովների աշխատանքներում պատզամավորի ներկայությունն ու քննարկումներում նրա աշխատանքի գրաղվածությունը և այլն):*

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 69-րդ

Ա) Ըստովի պաշտոնյաներին ժողովրդական անվտահություն հայտնելու և ժամանակից շուտ հետ կանչելու ինստիտուցիոնալ մեխանիզմների մասին տե՛ս ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ՝ 59, 61, 62, 63:

Բ) Երկրի պետական համակարգում, ԽՈՐՀԴՐԱՄԱՆԻ պատզամավորների կամ իշխանության ամենաբարձր պաշտոնյայի աշխատավարձը պետք է չգերազանցի երկրում ամենացածր աշխատավարձի 8 անգամ<sup>58</sup>:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 70-րդ

**«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը» ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՄԲ պետք է ամրագրվի որպես անկախ մարմին, որի իրավունքներն ու լիազորությունները սահմանվում են ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՄԲ և սահմանադրական օրենքներով: ՀԻՄՆԱԴՐԱՄԸ հաշվետու է երկրի ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ:**


ՀԻՄՆԱԴՐԱՄԸ հիմքով ձևավորված և պետական վերահսկմամբ աշխատող **հանրային-կոպերատիվ, հանրային-մասնավոր** տնտեսական խառն-համադրված ձևաչափերով բաց բաժնետիրական միավորները պետք է հաշվետու լինեն երկրի ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ:

<sup>58</sup> ՀՀ-ում գործող բազային աշխատավարձ՝ մոտ 66 հազար դրամ է, ՀՀ նախազահինը՝ 20 անգամ ավելի է, վարչապետինը՝ 19 անգամ, պատզամավորինը՝ 10-ն անգամ: 1/8 համամասնությունը և ոսկե հարաբերակցությունը՝  $1.618 = \{(a+b)/a = a/b\}$ , մաթեմատիկական յուրահատուկ հարաբերակցություններ են, սովորաբար հանդիպում են բնության մեջ և օգտագործվում են արվեստում: Աշխատավարձների աստիճանական սանդղակում ուսուցչի, գինվորական սպայի, մտավորականի և գիտնականի աշխատավարձները պետք է լինեն առաջնային տեղերում:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 71-րդ

Օրենսդիր մարմնի՝ **ԱՇԽԱՐԱՀԱԺՈՂՈՎԻ** ներքո պետք է գործի **ՍՓՅՈՒՌՈՒ** ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ, որը տարեկան երկու անգամ կարող է հրավիրել համասվյուռյան համագումար, ընդունել ծրագրեր ու ստանձնել պատասխանատվություն դրանք իրագործելու համար և հանդես գալ կատարողականի հաշվետվությամբ:

### ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ



ԳՈՐԾԱԴԻՐ  
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Դոդեկահետրոն ձավալածն ունի հնգանկյուն 12 նիստեր:

Գործադիր իշխանությունը պետք է բաղկացած լինի 12 նախարարություններից:

Ա) Մշակույթի, գաղափարախոսության և հանրային կապերի նախարարություն,

Բ) Գիտության, կրթության և սպորտի նախարարություն,

Գ) Պաշտպանության նախարարություն,

Դ) Արտաքին գործերի նախարարություն,

Ե) Սփյուռքի նախարարություն,

Զ) Էկոնոմիկայի նախարարություն,

Է) Ֆինանսների նախարարություն,

Ը) Բնապահպանության և շրջակա միջավայրի նախարարություն,

Թ) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,

Ժ) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

ԺԱ) Արտակարգ իրավիճակների նախարարություն,

ԺԲ) Առողջապահության նախարարություն:

**Իշխանության թեկրի հակակռության ու զսպումների մեխանիզմների** համաձայն՝ ՕՐԵՆՍԴԻՐ, ԴԱՏԱԿԱՆ իշխանության թեկրը, ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ինչպես նաև ընտրողների ձայների 1/2-ով հետ կանչելու մեխանիզմը հակակռում ու սահմանափակում են ԳՈՐԾԱԴԻՐԻ դեկապարի լիազորությունները:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 72-րդ

Գործադիր իշխանության դեկապարը երկրի ՆԱԽԱԳԱՀՆ է, որը ձևավորում է երկրի ԿԱՌԱՎԱՐՈՒՅՉՈՒՆԸ:

Երկրի նախագահն ընտրվում է 5 տարի ժամկետով, համաժողովրդական ուղիղ առաջնային տեղերում:


ընտրություններով: Երկրի Նախագահի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ ու սահմանադրական օրենքներով:

Երկրի նախագահ ընտրվելու իրավունք ունեն բոլոր այն ՀՀ քաղաքացիները՝

- ովքեր ծնվել են Հայաստանի նրապետությունում,
- առնվազն 40 տարեկան են և ունեն բարձրագույն կրթություն,
- դպրոցը կամ բուհն ավարտել են Հայաստանի Հանրապետությունում, որպեսզի լինեն հայ մշակույթի կրողը,
- ծառայել են բանակում և առնվազն ունեն կրտսեր սպայի աստիճան,

(Մոտ ապագայում այս պահանջը պետք է լինի հետևյալ կերպ՝ ծառայել են Հայաստանի Հանրապետության բանակում),

- ունեն պետական կամ մասնավոր հիմնարկ կառավարելու աշխատանքային առնվազն 10 տարվա փորձառություն:



## ԴԱՏԱԿԱՆ ԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Տետրահետրոն ծավալածն ունի հավասար անկյուններով եռանկյունածն չորս նիստեր:

Դատական համակարգի առաջարկվող տարբերակը քառաշերտ է՝

- 1) Բարձրագույն դատական խորհուրդ (Սահմանադրական),
- 2) Վճռաբեկ, 3) Վերահսկիչ, 4) Առաջին ատյանի դատարան:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 73-րդ

Դատական իշխանությունը պետք է լիարժեք անկախ լինի թե՝ օրենսդիր, թե՝ գործադիր իշխանություններից, որը ենթադրում է ժողովրդական ուղիղ ընտրությունների արդյունքում ժողովրդի վստահության բարձրագույն հանձնագրի (մանդատ) ձեռքբերում:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅԹ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՄԸ՝ թվով 11 բարձրակարգ ատեսավորություն ունեցող դատավորներ, պետք է ընտրվեն ժողովրդական ուղիղ ընտրությունների արդյունքում՝ 7 տարի ժամկետով:

Բարձրագույն Դատական Խորհուրդը Սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է ՀՀ Սահմանադրության գերակայությունը: ԲԱՐՁՐԱԳՈՒՅԹ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՄԸ կարող է ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ ընդունած օրենքները ձանաչել հակասահմանադրական: ԲԱՐՁՐԱԳՈՒՅԹ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՄԸ իրականացնում է սահմանադրական վերահսկողություն, ինչպես նաև քննում և տալիս է եզրակացություն երկրի անունից կնքված մի-


ջազգային պայմանագրերին՝ երկրի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՆՑ համապատասխանելու վերաբերյալ: ԲԱՐՁՐԱԳՈՒՅԹ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՄԸ դատավորները կարող են պաշտոնանկ արվել ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ կողմից՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՆՑ սահմանված դեպքերում և կարգով:

Արդարադատություն իրականացնելիս ԲԱՐՁՐԱԳՈՒՅԹ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՄԸ անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը:

Բարձրագույն Դատական Խորհուրդը նշանակում է դատավորներին՝

- \* Առաջին ատյանի՝ 3 տարի ժամկետով,
- \* Վերաբննիչ ատյանի՝ 4 տարի ժամկետով,
- \* Վճռաբեկ դատարան՝ 5 տարի ժամկետով:

\* Անհրաժեշտ է ստեղծել 12 երդվյալ քաղաքացիական ատենակալների անկողմնակալ դատարան (ինստիտուտ), առավել ծանր հանցագործությունների դատավարությունների համար:



## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆ)

Կենտրոնական բանկի ներկայացված սիմվոլ՝ խարանարդ ծավալածն ունի 6 նիստ:

Կենտրոնական բանկն իրականում հանդիսանում է իշխանության հինգ թևերից մեկը: Անկախ և ինքնիշխան պետության մեջ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ չի կարող լինել պետական վերահսկողությունից դուրս՝ միջազգային կամ տեղական մասնավոր ֆինանսարանների որևէ համակարգին ենթակա կամ հաշվետու:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 74-րդ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ պետք է լինի պետական ու հանդես զա որպես պետության ֆինանսական գործակալ հետևյալ հիմնական 6 ֆունկցիաներով.


- 1) Ապահովել և կանոնակարգել փողի և վարկի մատակարարումը, մատչելիությունը և արժեքը,
- 2) Կառնակարգել և կառավարել երկրի միջազգային պահուստները,
- 3) Լիցենզավորել և վերահսկել մասնավոր բանկերին, կարգավորել տոկոսադրույթները, ինչպես նաև պահպանել առևտրային բանկերի պահուստները:
- 4) Հարկային եկամուտների հավաքագրում,
- 5) Կառավարության միջոցների ապահովում և վարկերի տրամադրում,

- 6) Բանկի մասնաճյուղային ցանցի միջոցով պետական ավանդների փոխանցում և կառավարության հաշիվների վճարում:

Կենտրոնական բանկի վերոնշյալ 6 ֆունկցիաները բացառիկ կարևոր են և հըստակ ցուցում են, որ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՑԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ վեց ուղղություններով աշխատանքը (տես հիմնադրույթներ՝ 43, 44, 45, 46, 47), որը պետք է ապահովի «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի», «Հանրային-Մասնավոր» տիպի ձեռնարկությունների, «Համապետական գյուղկոռապերացիայի», «Համահայկական ազգային բաժնետիրություն» ակցիոներական կառուցի և «Տարածքային զարգացման ներդրումային հիմնադրամի» ֆինանսական կարգավորումներն ու սպասարկումը, հնարավոր չէ, եթե ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ երկրի կառավարման համակարգից լինի դուրս և անկախ:

**Հակակշռության ու զայումների մեխանիզմների** համաձայն ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՆ իր գործողություններում պետք է հաշվետու լինի **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆ:** ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ դեկավարի թեկնածությունն առաջադրում է երկրի **ՆԱԽԱԳԱՀԸ**, իսկ **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** հաստատում է, սակայն միայն **ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** իրավունք ունի անվտահություն հայտնել և պաշտոնանկ անել նրան՝ ձայների 2/3-ով:

## ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ<sup>59</sup>



Օկտահեդրոն ծավալածն ունի հավասար անկյուններով եռանկյունածն ութ նիստեր:

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 75-Րդ

**ՉՈՐՐՈՐԴ իշխանություն՝ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐՃՈՒՐԴԻՆ** անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: **ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐՃՈՒՐԴԸ** ձևավորվում է լրատվական դաշտում գրանցված ԶԼՄ-ների, արհեստակցական մասնագիտական միությունների ներկայացուցիչներից, և եռամյա ընտրություններով ձևավորում է իր վարչության կազմն ու նախագահությունը:

Հայաստանի Հանրապետությունում, հիմնականում, չկա ազատ լրատվություն, քանի որ Հայաստանի փոքրիկ շուկան չի կարող ապահովել ինքնարավ ու անկախ

հեռուստալիքների և թերթերի գոյությունը: Հեռուստատեսային ալիքները, ինչպես նաև թերթերը, հասարակական կարծիք կովելու լծակներ են և հիմնականում ունեն կամ օլիգարխիկ պատկանելություն, կամ սնվում են օտարերկրյա կազմակերպություններից: Եվ ուրեմն՝ ազատ և օբյեկտիվ լրատվության ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ հարգած տակ է դնում ժողովրդավարությունը և ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայունությունը: Անհրաժեշտ է, որ լրատվությունը լինի լիովին անկախ ու քննադատի թե՛ պետությանն ու օրվա իշխանություններին, թե՛ ազատ լրատվությամբ ու մեկնաբանությանբ հասարակությանը ներկայացնի երկրում առկա քաղաքական խընդիրները, բայց Հայաստանի փոքրիկ շուկան չի կարող ապահովել ազատ լրատվական միջոցների ֆինանսական ինքնարավությունն ու ապահովությունը, և մեղիա դաշտն ի վերջո անցնում է խոշոր կապիտալի վերահսկողության ներքո: Այսպիսի երկնտրանքային «գորոյան հանգույցը» լուծելու համար առաջարկում ենք «Հանրային հասանելի հեռուստատեսություն» (Public-access television) ԱՄՆ-ում գործարկվող մեթոդի տեղայնացումը: «Հանրային հասանելի հեռուստատեսությունը» ոչ առևտրային, սակայն զանգվածային լրատվության միջոց է, որտեղ լայն հասարակությունը կարող է ստեղծել բովանդակային հեռուստատեսային հաղորդումներ, որոնք պետք է հեռարձակվեն ամբողջ երկրի տարածքով: Պետությունը պետք է երկու կամ երեք հեռուստատեսային 24-ժամյա ալիքներ, որոնք կտրուիլն մեկ ժամանց տևողությամբ, տրամադրի հանրային հաղորդումների համար: Պետական ռեգիստրում որպես ԶԼՄ գրանցված անհատներն ու ընկերությունները կարող են անվճար գրանցվել ու պայմանագրային հարաբերություններով գրաղեցնել որևէ ժամ՝ իրենց հաղորդումների տեսագրությունները հեռարձակելու համար: Պետությունը պետք է ստեղծի և ապահովի հեռուստատեսային ալիքների տաղավարների տեխնիկական գործիքակազմը և սպասարկող աշխատակազմի ֆինանսավորումը:

Հեռարձակման չափորոշիչները պետք է լինեն՝ հակապետական ու ապազային քարոզների արգելում, ապատեղեկատվության և զրպարտության դեպքում՝ գործուներության արգելում և քրեական պատասխանատվություն:

Թերթերի և ամսագրերի առումով նույնպես անհրաժեշտ է պետական ֆինանսավորմամբ կազմակերպել ազատ լրատվական կառուցյաներ:

Անհրաժեշտ է նաև պետական սատարումով ստեղծել «Հասարակական հեռուստատեսային ալիքներ», որոնք ուղիղ եթերով, օրական 24 ժամ, վերահսկման գործառույթի տրամաբանությամբ, կներկայացնեն օրենսդիր մարմնի, կառավարության, տեղական ինքնակառավարվող մարմինների նիստերը և դատարաններում դատավարության ընթացքները:


<sup>59</sup> Նախօրոք ընդգծենք, որ ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ համակարգային կառուցվածքը հավելյալ և հիմնավոր մշակումների կարիք ունի:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ 76-ՐԾ


ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՅԹԱՄԲ պետք է ամրագրել, որ ընտրությունների համար տարվա քարոզությունը բոլոր թեկնածուների համար պետք է լինի հավասար ժամամիավորներով և նյութական միջոցների ծախսման հավասարությամբ՝ բոլոր հեռուստատեսությունների և ռադիոհաղորդումների ամբողջական տիրույթի հաշվառմամբ՝ ընտրություններին նախորդող 60 օրվա ընթացքում:

## ԳԼՈՒԽ 2

### ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐԻ ՓՈԽՀԱՐՄԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



### ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻԶԱՎԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՅԹ



Դեռևս 1990-ական թվականներից Հայաստանի Հանրապետության իշխանությունները կատարեցին աններելի սխալեր.

- 1) հրաժարվեցին ազգային գաղափարաբանությունը որպես պետական գաղափարախոսություն որդեգրելուց,
- 2) Հայաստանի Հանրապետությունը Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920թթ) իրավահաջորդ հոչակելու փոխարեն (որն իր սահմաններով ճանաչվել էր 1920 թօգոսուսի 10-ին Սևրի պայմանագրով՝ 18 երկրների կողմից<sup>60</sup>), միջազգային նորմերի ուսնահարումով հայտարարեցին, որ Հայաստանի Հանրապետությունը ՀԽՍՀ-ի իրավահաջորդն է այն դեպքում, եթե ՀԽՍՀ-ը միջազգային իրավունքի նորմերով չի եղել միջազգային իրավունքի սուբյեկտ,
- 3) ազտագրված Արցախը չճանաչեցին Հայաստանի Հանրապետության մաս,
- 4) ավելին՝ մինչև 2000 թվականը Հայաստանի իշխանությունները նույնիսկ շըրջանցում էին Թուրքիայի կողմից իրականացրած 1915-1920թթ. հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցը միջազգային ատյաններում պետականություն հետապնդելու հայեցակարգը:

Զարմանալին այն է, որ հայ քաղաքական միտքը և հասարակությունը, հիմնականում, իբր «ըմբռնումով» են վերաբերում իշխանությունների կողմից տարվող քաղաքականությանը: Հարց է առաջանում՝ ո՞րն է խնդիրը. եթե Աղրբեջանը կարող է հոչակվել 1918-1920թթ. Աղրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ, ապա ինչո՞ւ Հայաստանը չէր կարող իրեն հոչակել առաջին հանրապետության իրավահաջորդ: Եթե 2000 թվականներից Հայաստանի Հանրապետությունը պետականորեն որդեգրեց հայոց ցեղասպանության ճանաչման հարցը միջազգային ատյաններում պետականորեն հետապնդելու քաղաքականությունը, ապա ինչո՞ւ դա չէին անում մինչ այդ: Կամ՝ եթե ԽՍՀՄ-ի տարիներին՝ 1989 թվականին, ՀԽՍՀ Գերազույն խորհուրդը և ԼՂ ազգային խորհուրդն իրենց համատեղ նիստում միաձայն ընդունեցին ՀԽՍՀ և ԼՂԻՄ վերամիավորման մասին որոշումը, ապա ինչո՞ւ հետագայում հրաժարվեցին և այլն:

Այս հարցադրումներին Հայաստանի Հանրապետության բոլոր իշխանությունները փորձել են պատասխանել հիմնականում սուբյեկտիվ փաստարկներով՝ իրենց

<sup>60</sup> Լոգանի պայմանագիրը շեղալ չի հայտարարել Սևրի պայմանագիրը: Նաև՝ Լոգանի պայմանագրի 16-րդ հոդվածը հայտարարում է, որ Թուրքիան իրամարդում է բոլոր այն տարածքներից, որոնց վրա Լոգանի պայմանագիրը չի ճանաչել Թուրքիայի իշխանությունը, իսկ Վիլսոնի իրավարար վճռով՝ Հայաստանին հատկացված տարածքների վրա Լոգանի պայմանագիրը չի ճանաչել թուրքական ինքնիշխանությունը, հետևաբար Թուրքիան, ըստ Լոգանի պայմանագրի, հաստատել է վիլսոնյան Հայաստանից իր հրաժարումը:

պատասխանները «հիմնավորելով» ժամանակի կոնկրետ իրադրությամբ ու պայմաններով: Զցանկանալով մեկ առ մեկ անրադառնալ այդ «փաստարկներին», անհրաժեշտ եմ համարում ընդգծել կարևորը՝ որևէ մեկը չի կարող բացառել, որ պատճառների հիմքում առկա է նաև մեր հասարակության հավաքական հոգեբանության մեջ գոյություն ունեցող արտաքին ուժի նկատմամբ իրացիոնալ հոգեբանական բարդույթը (կյանի դա Ռուսաստան թէ Արևմուտք): Այսինքն, մեզանում՝ հայ հասարակության հավաքական հոգեբանության խորքում կա արտաքին ուժի նըկատմամբ հիշանդագին երկու իրացիոնալ ու վտանգավոր մոտեցում՝ «հույս» և «վախ»: Հասարակությունն ու նրա քաղաքական վերնախավը կամ հույսը դնում է, որ արտաքին ուժն իրեն կիրկի և իր փոխարեն ու իր համար պատմական արդարություն կհաստատի, կամ վախենում է իր իրավունքներն ու պատմական արդարությունը հաստատել, քանի որ նախապես վախով մտածում է, որ արտաքին ուժը դրա համար կարող է համաձայնություն («դաբրո») չտալ: Ավելին, նույնիսկ ողջ հասարակության և նրա քաղաքական վերնախավի համար ընդունելի ու ցանկալի հավաքական նպատակներն անհանում են, եթե նախօրոք ոչ թէ մտածում ենք դրանց հասնելու հնարավորությունների, այլ արտաքին ուժի վերաբերմունքի մասին: Եվ Հայաստանի Հանրապետության դեկավանները, լինելով այդ հիվանդագին հոգեբանության առավել ցայտուն կրողները, չեն հասկացել այդ հավաքական հոգեբանության սարսափելի վնասների ու դրանից ձերբագատվելու անհրաժեշտության մասին: Զցանկանալով խորանակ պատմական օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված մեր հավաքական հոգեբանության մեջ առկա դրական ու բացասական կողմերի մանրամասներում՝ անհրաժեշտ է ընդգծել, որ ազգը չի կարող լիարժեք ապրել ու արարել, եթե նա հոգեպես ազատ չէ պետականորեն ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ իր պատմական արդարությունը, նույնիսկ եթե կոնկրետ ժամանակում այն իրականացնելու ռեսուրսներն անբավարար են: Այսօր շատ երկրներ համագործակցելով տնտեսական հարթությունում, չեն վախենում ու չեն զլանում միջազգային ատյաններում իրենց տարածքային վեճերի և անհամաձայնությունների մասին հանդես գալ: Իշխանական կամ քաղաքական վերնախավի հայեցողությամբ ազգին «քաղաքական հարմարվողականություն» պարտադրելը նրա մեջ խորացնում է այդ հոգեբանական բարդույթը: ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ կայացումը պետք է նաև լուծի հասարակության հավաքական հոգեբանության վնասարար բարդույթներից ազատազրվելու խնդիրը:

Հուսանք, որ մոտ ապագայում հայ ժողովուրդը կստեղծի ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ, որը միջազգային ատյաններում կբարձրածայնի իր իրավունքների մասին:

### **ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 77-րդ**

Հայաստանի Հանրապետությունը պետք է ստանձնի կազմակերպել հայ դատի միջազգային դատավարությունը: Հայաստանի Հանրապետությունը, հայ եկեղեցին՝ իր բոլոր թեմերով, և Սփյուռքում գրանցված բոլոր կառույցները միասին, պետք է դիմեն ՄԱԿ-ին առընթեր Արդարադատության միջազգային դատարան՝ *հայոց ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման պահանջատիրությամբ*:

- Միայն դատարանի որոշումն է ճանաչում հանցագործին և նրա նկատմամբ սահմանում պատիժ:

- Փոխհատուցում նշանակում է՝ ցեղասպանության ենթարկված էթնոսի վերակազնվելու համար միջոցների և տնտեսական պայմանների տրամադրում:

### **ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 78-րդ**

Հայաստանի Հանրապետությունը միջազգային ատյաններում Արցախյան խնդիրը պետք է ներկայացնի որպես թուրքալեզու երկու պետությունների (*Թուրքիա, Ադրբեյջան*) կողմից 1915-1920թթ. ցեղասպանության շարունակություն, որի նպատակը թուրքիայի կողմից դեպի արևելք տարածվելու աշխարհաքաղաքական հարյուրամյա ռազմավարությունն է՝ ձևավորել սահմանակից թուրքալեզու պետությունների աշխարհաքաղաքական միավորում:

### **ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 79-րդ**

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ունենալու պարագայում Հայաստանի Հանրապետությունը պետք է հայտարարի Հայաստանի առաջին հանրապետության իրավահայորդը լինելու և «Վիլսոնյան իրավարար վճռի» ճանաչման մասին:

(*2018 թվականին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ոչ թե 27-ամյակի, այլ 100-ամյակի շնորհավորանքը խոսում էր Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդության և Մոսկվայի (16.03.1921թ.) ու Կարսի (13.10.1921թ.) պայմանագրերից ազատվելու անհրաժեշտության մասին*):

### **ՀԻՄԱԴՐՈՒՅԹ 80-րդ**

Անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կողմից Մոսկվայի (16.03.1921թ.) և Կարսի (13.10.1921թ.) պայմանագրերի չեղարկում, հայտարարելով, որ դրանք անօրինական են ու հակաիրավական, քանի որ դրանք հակասել են միջազգային իրավունքի անբեկանելի հիմնադրույթներին:

## **ՀԱՄԱՅՆԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ Չարժման մասին**



## **ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ ԿԱՄ ՎԵՐԶԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՒՆ**

Սույն աշխատությունը երկար տարիների խոկանքի, ուսումնասիրությունների, կեսնափորձի ու վերլուծումների արդյունք է: Դեռևս 2011 թվականին հրապարակած «Արևի լեռան տիեզերական գաղափարաբանությունը» և «Ինչպիսի՞ հայրենիք կունենանք վաղը» աշխատություններում ներկայացվեց մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ ազգի ու ազգային մշակույթի կարևորության ու դերի, ազգային պետության մեջ հասարակության հավաքական գիտակցության ազգակենտրոնության և պետականամետության կարևորության մասին: Այս աշխատությունում ընդհանուր ուրվագծերով ներկայացված է ազգային գաղափարաբանությամբ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ հիմնադրույթները, որոնք ամբողջացան դեռևս 2017 թվականին, սակայն լրացվեցին, մշակվեցին և հիմնավորվեցին հետագա տարիների ընթացքում:

Ազգային գաղափարախոսության մասին նույնիսկ թերթերում կարելի է կարդալ հետևյալ մեջբերման նման ձևակերպումներ. «Ազգային գաղափարախոսությունն ազգի առաջընթացն ու բարգավաճումը երաշխավորող, ազգի ավանդական նկարագրից բխող, նրա վարքը, գործունեությունը, իդեալներն ու նպատակները սահմանող գաղափարների ամբողջությունն է»: Չնակերպումը լիովին ճիշտ է, սակայն որքանո՞վ է այս ձևակերպումն ընդունելի և կիրառելի հայ հասարակության վարքագծում: Նույն հարցադրումը կարող է անել տարբեր կերպ. եթե երկրում առկա է սոցիալական կապիտալի դեֆիցիտ ու **անհավասարաշափ բաշխում** և սոցիալական տարբեր խավերի միջև անտարգոնիզմ, ապա որքանո՞վ է հնարավոր ողջ հասարակության համար ազգային գաղափարախոսության այս ձևակերպումը դարձնել կիրառելի: Կամ՝ արևմտյան սպառողական հասարակության ապազգային և ուլտրալիբերալ գաղափարաբանության տարածականության ու ազդեցության պայմաններում ի՞նչ անել, որ ազգային գաղափարաբանությունը, որն ազգային պետության և մեր պետականության անվտանգության համար առանցքային է, հասարակության համար դառնա ընդհանրական վարքագիծ: Պատասխանը մեկն է՝ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ մեջ ազգային գաղափարախոսությունը պետք է ունենա համապատասխան հենարան՝ **տնտեսական նոր կացութաձև ու դրանից բխող կառավարման նոր համակարգ**:

Հայաստանում շատերը՝ թե՛ անհատներ, թե՛ քաղաքական կառույցներ, «Ալյասկայի քաղաքացիական հիմնադրամի» մոդելը բարձրախոսելով չեն հասկանում, որ Այսակայում գործող այդ մոդելը, որքան էլ այն առաջավոր է, սակայն **տնտեսական նոր կացութաձևի** հետ որևէ առնչություն չունի: Զարմանալին այն էր,

որ «Այսակայի հիմնադրամ» մոդելն ինչ-ինչ փոփոխություններով Հայաստանում ներդնելու ջատագովները նույնիսկ չգիտեն բնավճարի՝ ոոյալտիի տոկոսը, չգիտեն հարեւան հրանում այդ մոդելի տեղայնացված տարբերակի ու Այսակայի մոդելի նկատմամբ դրա առավելությունների մասին, չեն մտածել, թե Հայաստանում ո՞ր պետք է լինի հիմնադրամի **զիհավոր** նպատակը՝ բաշխումն ու փոշիացո՞ւմը, թե՝ երկրում տնտեսական ենթակառույցների ձևավորումը, կամ եթե ՀԻՄՆԱԴՐԱՄԻ միջոցները շրջանառու են ու ներդրվում են տեղական արտադրություններ կազմակերպելու գործում, ապա ինչպես ապահովել շուկայի ընդլայնում, ո՞վ է կազմակերպելու այդ արտադրությունները և ինչպիսի՞ն պետք է լինեն դրանց հակակշիռների ու զափումների մեխանիզմները, որպեսզի ՀԻՄՆԱԴՐԱՄԸ չդառնա կոռուպցիոն մի նոր համակարգ:

Ռուսաստանի Դաշնության Գիտությունների Ակադեմիայի ակադեմիկոս Վլադիկ Ներեսյանցի **«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի»** անվանումը և առաջարկած մոդելն իրոք տնտեսական նոր կացութաձևի մասին է. «Քոլորին քաղաքացիական սեփականությամբ օժուելն արմատապես փոխում է բոլոր գույքային հարաբերությունները և բուն սոցիալական և պետական-իրավական համակարգի տեսակը»<sup>61</sup>, սակայն հարգարժան ակադեմիկոսը բնականաբար լինելով ոչ թե տնտեսագետ, այլ իրավունքի փիլիսոփայության մասնագետ, իր աշխատություններում չի ներկայացրել ՀԻՄՆԱԴՐԱՄԻ կառուցվածքի, հակակշիռների ու զափումների մեխանիզմների ու դրանց օրինաչափությունների, ինչպես նաև գործնականում մասնավոր ու հանրային հատվածների ներդաշնակ հարաբերությունների՝ բիզնես-միավորներում նրանց հնարավոր համագործակցության, քաղաքացիական բաց բաժնետիրության ու դրանց մեխանիզմների մասին և այլն:

Այս աշխատությունում ընդհանուր ուրվագծերով ներկայացված է ազգային գաղափարաբանությամբ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ու դրան համապատասխան տրնտեսական կացութաձևի տարբերակ, որտեղ **«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը»** ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ պետք է ամրագրվի որպես անկախ մարմին, որի իրավունքներն ու լիազորությունները սահմանվում են ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և սահմանադրական օրենքներով: ՀԻՄՆԱԴՐԱՄԸ հաշվետու է երկրի ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ ու համագործակցությամբ պետք է աշխատի պետության հետ՝ պետպատվերով աշխատող «Խառն-համադրված ձևաչափով ձեռնարկությունների» ստեղծման ու գործունեության եզրով, որոնք ներկրումների կըրճատման հաշվին ընդլայված շուկայում ունեն համագործակցելու՝ շահերի հակակշռությամբ հավասարակշռություն ապահովելու մեխանիզմ:

<sup>61</sup> Ներսեսյան Վ. Ը., «Մանիֆեստ օ ցիվիլիզմե». Մ., 2000. Ծ. 22.

Առաջարկվող ազգային գաղափարաբանությամբ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ տընտեսական նոր կացութաձևում, որտեղ «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամն» ունի առանցքային կարևորություն, ազգային սեփականություն պետք է լինեն ոչ միայն երկրի հողը՝ ջո՛ւրը և բնական ռեսուրսները, որի շահագործման դիմաց մասնավոր սեփորը պետք է ժողովրդին՝ իրական տիրոջը, վճարի բնավճար՝ ոռյալտի, այլ նաև ազգային սեփականություն պետք է լինեն ռազմավարական բացառիկ նշանակության տնտեսական միավորներն առնվազն 51%-ով, քանի որ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ չի կարող կայանալ, եթե դրանք լինեն տեղական կամ օտարերկրյա օլիգապոլիաների սեփականություն<sup>62</sup>:

Առաջարկվող ազգային գաղափարաբանությամբ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ տընտեսական նոր կացութաձևում «Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» միջոցների բաշխումը կատարվում է՝ համայնքներին՝ 10%, ազգ-քանակ համակարգին՝ 40% և բնակչությանը՝ 50% - «Բուհական կրթաթոշակ», «Առաջն բնակարանը գնելու» և «կենսաթոշակի հավելում» սոցիալական փաթեթներով:

Անկախությունից ի վեր՝ 30 տարի շարուակ, մենք «կառուցում» ենք պետություն, չունենալով դրա կառուցման հետ առնչվող նախագծեր: Ցավոք Հայաստանում չկան պետության կողմից ֆինանսավորվող ու սատարվող՝ գաղափարաբանական, տնտեսական, քաղաքական, սոցիոլոգիական, դիվանագիտական և այլ տնտեսարանական դպրոցներ ու սերնդե-սերունդ փոխանցման համակարգեր: Հստիս, մեր դժբախտությունների առաջնային պատճառներից է տնտեսաբանական դրայրոցների բացակայությունը: Ես կցանկանայի, որ շատերը, թեկուզ անհատ մասնագետներ, լծված լինեին մեր երկրի գարզացման համար համապարփակ ծրագրեր մշակելու գործին, և թեկուզ իրարամերժ հայեցակարգերով փորձեին լուծումներ առաջարկել ու պատասխանել՝ ինչպիսի՝ պետություն է ցանկանում ունենալ հավաքական հայ ժողովուրդը, ի նշ կլինի ազգի և մեր պետականության հետ աշխարհաքաղաքական մեծ փոփոխությունների դեպքում և ի նշ անել հարցադրումներին:

<sup>62</sup> Դրանք ազգայնացնելու համար կան տարբեր օրինական միջոցներ, որոնք լավագույնս գործում են կենտրոնական Եվրոպայի երկրներում՝ արբիտրաժային և դատական ձևաչափ, պայմանագրերի դրույթների չկատարման համար պայմանագրերի լուծարում, մասնավոր սեփորից տնտեսական միավորի հետզնում և այլն:

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՑՆՈՒԹՅՈՒՆ Չարժման մասին

2017 թվականին ԱՄՆ-ից վերադառնալով և մշտական բնակությամբ հաստատվելով Հայաստանում, ես մտածում էի Հայաստանի քաղաքական դաշտում որպես ընդդիմություն գործող արդեն պատրաստի որևէ քաղաքական կառույցի տրամադրել տեսաբանական այն հիմնադրույթները, որոնք ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կառուցելու համար կարող են լինել ուղեցույցային: Սակայն, ինձ համար պարզ դարձավ, որ նույնիսկ ընդդիմադիրները հիմնականում տառապում են միմիայն իշխանության հասնելու մարմաջով՝ չհասկանալով, որ նույնիսկ իշխանության գալու պարագայում, եթե չունեն հիմնարար հայեցակարգային գաղափարաբանություն, ապա գործող տնտեսաքաղաքական համակարգի մեջ ինտեգրվելով, աստիճանաբար կդառնան ժողովրդի կողմից մերժելի հաջորդ իշխանությունը: 2018 թվականի բեմադրված հեղափոխությունը, ի տարբերություն համաժողովրդական ցնծության, ինձ մոտ տագնապ առաջացրեց: Նույն տագնապը կար իմ ընկերների՝ լեզվաբան Հրաչյանի Հակոբյանի, հուշարձանագետ Սամվել Կարապետյանի<sup>63</sup>, ազատամարտիկ Խաչատուր Խաչատրյանի<sup>64</sup>, պատմաբան Արտակ Մովսիսյանի<sup>65</sup>, շումերագետ Արմեն Դավթյանի և այլոց մոտ. մենք բոլորս ավագ սերնդի ներկայացուցիչներ ենք և հասկանում ենք, թե՝ այդ «հեղափոխության» պատվիրատուների, թե՝ դրա «անհրաժեշտության» նպատակները:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ ձևավորվեց 2018 թվականի ձմռանը, և առաջին նախաձեռնությունը մտավորականների խորհուրդի կազմակերպումն էր: ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՑՆՈՒԹՅՈՒՆ (այսուհետ՝ ՀԱՀ) անունը և խորհրդանշանն ունեն իմաստային նշանակություններ: ԱԶԳԱՅԻՆ բառն օգտագործվեց, քանի որ նպատակը՝ հիմնադրույթների շուրջ ազգային հոգեմտածողություն ունեցող մտավորականների ՀԱՄԱՀԱՅՆԵՑՎԱԾ համախմբումն էր և, քանի որ նախաձեռնությունը նաև պետք է ունենար իր ներկայացուցիչները Սփյուրում, ապա օգտագործվեց նաև ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ բառը: Նախաձեռնության զինանշանի համար ընտրվեց հին հայկական խորհրդանշիշներից իմաստաբանա-

<sup>63</sup> 2020 թ. փետրվարի 27-ին ՀԱՀ-ն անդառնալի կորուստ ունեցավ. մահացավ հուշարձանագետ Սամվել Կարապետյանը:

<sup>64</sup> 2020 թվականի սեպտեմբերի 25-ին ՀԱՀ-ն ունեցավ անդառնալի կորուստ. սրտի կաթվածից մահացավ ազատամարտիկ Խաչատուր Խաչատրյանը:

<sup>65</sup> Մեր լավագույն պատմաբան Արտակ Մովսիսյանը անժամանակ մահացավ 2020 թվականի Հոկտեմբերի 3-ին՝ Կորոնավիրուսից:

կան և գունային տարրեր, և խորհրդանիշը վերջնական տեսքի բերեցին իմ պրոֆեսիոնալ դիզայներ ընկերները: ՀԱՀ-ի համար օրիներգն ընտրվեց Հովհաննես Միրզա-Վանանդեցու և կոմպոզիտոր Գաբրիել Երանյանի «Հայաստան երկիր դրախտա-վայր» հայտնի երգը, իսկ Մելիք Մավիսակալյանի կողմից գործիքավորված ու երգչախմբի համար մշակված փայլուն տարբերակն իմ ընկեր՝ օպերային մեներգիչ Բարսեղ Թումանյանի առաջարկով ու միջնորդությամբ մեզ սիրով տրամադրեց Մելիք Մավիսակալյանը:

ՀԱՀ-ի մտավորականների խորհրդի կազմում հայտնի և իրենց ասպարեզում նշանակալի ավանդ ունեցող մարդկանց համախմբելու գործում բացառիկ ակտիվ էր ազատամարտիկ Խաչատուր Խաչատրյանը: Նրա հետ միասին մենք հանդիպումներ ունեցանք բազմաթիվ մարդկանց հետ:

ՀԱՀ-ի ընտրված մտավորականների խորհուրդը մի քանի քսնարկումներով ընդունեց 64 հիմնադրույթները և, քաղաքական հայտարարություններ և ակիցաներ անելով, սկսեց իր ակտիվ գոճունեությունը 2015 թվականի ՀՀ Սահմանադրությունն անօրինական ու հակասական ձանաշելու, ինչպես նաև նոր իշխանությունների ապօրինի քայլերի դեմ: ՀԱՀ-ում ընդգրկված բոլոր մտավորականները քաղաքականությունից դուրս մարդիկ էին, որոնք երկրի քաղաքական վայրիվերումների և պետականությանը սպառնացող վտանգները տեսելով՝ անհանգստացած մտել էին քաղաքական հարթակ:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՆՈՒԹՅԱՆ մի քանի անդամների կողմից եղավ առաջարկություն՝ հասարակության մեջ տարածել ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ կառուցելու ուղեցուցային հիմնադրույթները և ընդլայնվել՝ ներգրավելով համակիր անհատների, քաղաքական և հասարակական ազգային կառույցների և նախաձեռնությունների: Սակայն հիմնադրույթների ու դրանց հետ առընչվող մասնագիտական ծրագրային ծավալների մեծության, ժամանակի սղության ու քաղաքական և հասարակական կառույցների կողմից դրանք մարսելու բարդությունների պատճառներով որոշվեց միանալու ցանկություն ունեցող քաղաքական և հասարակական կառույցների համար առաջարկել միայն ութ գաղափարական հիմնադրույթներ, որոնք համառոտ ներառում էին թե՛ ազգային արժեհամակարգի ու գաղափարախոսության, թե՛ սեփականության իրավունքի, թե՛ իշխանության թերի և թե՛ Սփյուռքի մասին մոտեցումներ, որոնց հիմքով պետք է ստեղծվեր միավորվելու համաձայնություն:

2019 թվականի Հունիսի 22-ին տեղի ունեցավ ՀԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՆՈՒԹՅԱՆ անդրանիկ համագումարը Երևանում “DoubleTree by Hilton” հյուրանոցի մեջ սրահում:

Միավորման և ընթացիկ աշխատանքներում բացառիկ էր ազատամարտիկ Խա-

չատուր Խաչատրյանի, բանասեր-լեզվաբան Հրաչյակ Հակոբյանյանի, «Նժդեհյան ցեղակրոն» կուսակցության ղեկավար Գևորգ Հովսեփյանի, «Ժողովրդի ձայն» նախաձեռնության ղեկավար, միջազգային սպորտի վարպետ Աշոտ Կոշկակարյանի, Մոսկվայում և Պրագայում մեր ներկայացուցիչներ՝ Հարություն Առաքելյանի և Արայիկ Գրիգորյանի ակտիվությունը, որի շնորհիվ ՀԱՀ-ին միացան բազմաթիվ քաղաքական և հասարակական կառույցներ ու անհատներ, ստեղծվեց ՀԱՀ-ի «Ազգային հայեցակարգ» համացանցային հեռուստահաղորդաշարը և այլն: ՀԱՀ-ն իր ողջ գործունեության ընթացքում գոյատևել է միայն իր անդամների կողմից ներդրած ֆինանսական միջոցների և աշխատանքի շնորհիվ:

**ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՆՈՒԹՅՈՒՆ** իր գործունեության մոտ չորս տարվա ընթացքում կազմակերպել է բազմաթիվ նատացույցեր ու հրապարակային ակցիաներ, կատարել է բազմաթիվ հայտարարություններ, հանդես է եկել հոդվածներով, դասախոսություններով, պատրաստել է ֆիլմեր, ստեղծել է «Ազգային հայեցակարգ» համացանցային հեռուստատեսությունն ու իր հայեցակարգային գաղափարախոսությունը շրջանառության մեջ է դրել հասարակության լայն շրջանակներում:

**ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՆՈՒԹՅՈՒՆ շարժումը** քաղաքական դաշտում առկա ազգային մի շարք կազմակերպությունների և նախաձեռնությունների հետ ստորագրել է համագործակցության հուշագրեր, որոնց թվում առանձնակի պետք է նշել ազգային հայեցակարգ ունեցող ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ հասարակական կազմակերպությանը, ՀԱՅՔ և ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ նախաձեռնություններին:

Այսօր ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՆՈՒԹՅՈՒՆ ունի հետևյալ կառուցվածքն ու կազմը.

### **ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Արթուր Արմին (Քնական գիտությունների Եվրոպական Ակադեմիայի անդամ, հայագետ, տնտեսագետ, «Ալբերտ Շվայցեր» և «Սուրբ Գեորգի խաչ» մրցանակների մրցանակակիր),

Հրաչյակ Հակոբյան (Քանայիրական գիտությունների թեկնածու, դոցենտ),

Արամ Գաբրիելյան (Քնապահպան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու),

Աշոտ Գևորգյան (Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր),

Թարուլ Մանասերյան (Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր),

Հակոբ Հարությունյան (Տեխնիկական գիտությունների դոկտոր).

Դավիթ Ստեփանյան (Ճարտարապետ),  
Հրայր Աղինյան (բիզնես կառավարում)  
Գարիկ Գրիգորյան (պատմաբան),  
Արզամ Անթանյան (տնտեսագետ),  
Հեռակա մտավորական համակիրներ՝  
Գրիգոր Բարսեղյան (ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրո-  
ֆեսոր, Մարիա Կյուրիի մրցանակի մրցանակակիր),  
Լևոն Բեգլարյան (ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆե-  
սոր, Մուկովա):

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«Նժդեհյան ցեղակրոն կուսակցություն», նախագահ՝ Գևորգ Հովսեփյան,  
«Հայք-հայկազունիներ կուսակցություն», նախագահ՝ Արտյոմ Խաչիկյան,  
«Քրիստոնեա ժողովրդական վերածնունդ կուսակցություն», նախագահ՝  
Սոս Գիմիշյան:

### ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԶԵՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«Վահագն ռազմահայրենասիրական» – ՀԿ, նախագահ՝ Կարո Կարապետյան և  
փոխարինող՝ Տարոն Վասիլյան,  
«Ժողովրդի ձայն» - նախաձեռնություն, նախագահ՝ Աշոտ Կոշկակարյան,  
«Քաղաքացիական միավորում» – ՀԿ, նախագահ՝ Աղասի Մանուկյան,  
«Թերապևտների երիտասարդական գիտական միություն» – ՀԿ, նախագահ՝  
Շմավոն Վեզիրյան,  
«Մաշտոց միավորում» – ՀԿ, նախագահ՝ Նուրիսա Բեժանյան,  
«Բասեն հայրենակցական միավորում» - նախաձեռնություն, նախագահ՝  
Ալիկ Հակոբյան,  
«Լեռնաշայաստան» - ՀԿ, նախագահ՝ Սարգս Մելիք-Շահնազարյան,  
«Մոլորակ» - ՀԿ, նախագահ՝ Ալիկ Սուրբիասյան:

### ՍՓՅՈՒԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒԹՅՈՒՆ

Հարություն Առաքելյան – Պրագա, Շեխական Հանրապետություն,  
Արայիկ Գրիգորյան – Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն,  
Թամար Գրիգորյան – Լյու Յորը, ԱՄՆ,  
Արթուր Սահակյան, Լու Անջելես, ԱՄՆ,  
Տաթև Գրիգորյան, Լու Անջելես, ԱՄՆ,  
Հովհաննես Մակարյան – Փարիզ, Ֆրանսիա:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- <sup>1</sup> Cudworth et al., 2007: p. 1. *The concept of statehood and the European Union - GUPEA*.
- <sup>2</sup> Weber Max, *Economy and Society*. 1978, Berkeley.
- <sup>3</sup> Article 1 of the Montevideo Convention. Montevideo convention on the rights and duties of states, <http://www.taiwandomics.org/montevideo01.html>, (23.06.2016).
- <sup>4</sup> Общая теория права и государства: Учебник. Под ред. Лазарева В. В. - М., 1994. С.23.
- <sup>5</sup> Ա. Արմին, «Արևի լեռն տիեզերական զաղափարաբանությունը», Լու Անջելես, 2011թ.:
- <sup>6</sup> Kenneth D. Allan, "Explorations in Classical Sociological Theory: Seeing the Social World", 2005.
- <sup>7</sup> Antonio Gramsci, "Prison Notebooks", Edited by J.A. Buttigieg, V. II. NY, 1992,
- <sup>8</sup> Թորգոն Սարայդարյան, «Հինավորց իմաստության հիմերը», ԱՄՆ, 1994թ.:
- <sup>9</sup> Durkheim, Emile. *The Division of Labour in Society*, translated by G. Simpson. NY, 1993.
- <sup>10</sup> Carroll Quigley, "Tragedy and Hope: A History of the World in Our Time", NY, 1966.
- <sup>11</sup> Թաթուլ Մանասերյան, «Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր», Երևան, 2014թ.:
- <sup>12</sup> P. Marshall, "Demanding the Impossible: A History of Anarchism". London, 1992.
- <sup>13</sup> «Եղիշի Լույս» ամսագիր, ԱՄՆ, 1997թ., #4:
- <sup>14</sup> R. H. Jackson, "Quasi-States. Sovereignty, International Relations and the Third World", Cambridge, 1993.
- <sup>15</sup> Нерсесянц В. С., «Манифест о цивилизме». М., 2000.
- <sup>16</sup> Widerquist, Karl, Michael W. Howard, "Exporting the Alaska Model", NY, 2012.
- <sup>17</sup> Այլակա Նահանգի 27/07/2021թ. որոշումը. Սահմանադրության IX հոդված, XV բաժին:
- <sup>18</sup> Widerquist, Karl, Michael W. Howard, "Exporting the Alaska Model", NY, 2012.
- <sup>19</sup> "Mining Royalties, A Global Study of Their Impact on Investors, Government, and Civil Society", 2006, Washington DC, The International Bank for Reconstruction and Development.
- <sup>20</sup> Կոտլեր Փ., Մարկետինգ մենեջմենտ. — Պիտեր, 2004.
- <sup>21</sup> «Այլընտրանք» գիտական հանդես, Թ. Մանասերյան, «Մթերումների համակարգի ձևավորման իրամայականը», 2016թ., Դեկտեմբեր:
- <sup>22</sup> «Բանբեր» #1, (25), 2018թ., Երևան, Թ. Մանասերյան, «Զարգացման բանկերի և համահայկական փոխառու միջոցների դերը տնտեսական առաջնորդացի ապահովման գործում»:
- <sup>23</sup> Դավիդ Բեն-Գուրիոն և история становления государства Израиль, <https://jewish.ru/ru/stories/chronicles/4928/>, հասանելի՝ 25.11.2018:
- <sup>24</sup> Արմեն Այվազյան, «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի», Երևան, 2004, 2-րդ հրատարակություն:
- <sup>25</sup> Émile Durkheim, *The Division of Labour in Society*, translated by G. Simpson, NY, 1993.
- <sup>26</sup> Արթուր Արմին, «Հալդիի դարպասներ», Երևան, 2020 թ.:
- <sup>27</sup> John J Macionis; Linda M Gerber, "Sociology", Toronto, 2011.
- <sup>28</sup> Արտակ Մովսիսյան, «Աշխարհամոլով. Հին Հայաստանի բարձրագույն խորհրդատվական ժողովը՝ երկրի դասային համերաշխության երաշխավոր», 21 ԴԱՐ, թիվ 3(13), 2006 թ.:
- <sup>29</sup> John F. Nash, Jr., *Equilibrium Points in N-Person Games*, Nobel Seminar, 1994.

## **Արթուր Արմին (Արթուր Լևոնի Բաբայան)**

Ծնվել է 1958 թվականին, Երևանում: Ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը 1975թ.-ին: Բարձրագույն կրթությունը՝ ԵՊՀ - Տնտեսագիտական ֆակուլտետ, ԵԺՏԻ՝ Ճյուղային Էկոնոմիկաներ ֆակուլտետ՝ 1975-1980թք:

1991թվականին տեղափոխվել է բնակության ԱՄՆ: 2017 թվականից վերադարձել ու ապրում է Երևանում:

### **Հրատարակված գործերը՝**

- «Նամակներ մենության հեռուներից» - 1989թ., Երևան,
- «Փոքր Սիեր» - 1996, ԱՄՆ,
- «Բնազանցություն» (մետաֆիզիկա) – 2003թ., ԱՄՆ,
- «Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ Սասնա Ծոեր Էպոսը» - (*հայագիտություն, 2007թ., ԱՄՆ*),
- «Սիերի դուռ հնագույն թվային համակարգը որպես տիեզերքի կառուցք» (*հայագիտություն, 2008թ., ԱՄՆ*),
- Noumenon – The Alternative Reality (2009թ., ԱՄՆ),
- «Արևի լեռան տիեզերական գաղափարաբանությունը» - (*տեսաբանություն, 2011թ., ԱՄՆ*),
- «Ինչպիսի հայրենիք կունենանք վաղը» - (*տեսաբանություն, 2012թ., ԱՄՆ*),
- «Հալոփի դարպասներ. հնագույն դիցարանի աստղային և թվային կառուցք» (*հայագիտություն, 2020թ., Երևան*),
- «Ազգային պետություն. հիմնադրությներ» - (*տեսաբանություն, 2021թ., Երևան*):

### **Գործունեություն.**

- 1996-1998թթ., «Եղիցի Լույս» մշակության ամսագրի հիմնադիր-խմբագիր:
- 1998-2000թթ. «Լույս» հեռուստաժամ», «Լույս» շաբաթաթերթ, հիմնադիր-խմբագիր:
- 1999-2017թթ. «Spurk-Diaspora Organization», նախագահ, ԱՄՆ:
- 2003-2004թթ. “Right to Exit”, ամերիկյան CBS հեռուստատեսության պատվերով, վավերագրական ֆիլմի սցենարի հեղինակ և համապրոդյուսեր:
- 2009թ. «Հայոց պատմության և մշակույթի կեղծարարների դեմ շարժում», հիմնադիր-համակարգող:
- 2018թ. «Համահայկական Ազգային Համաձայնություն» (ՀԱՀ) շարժում, հիմնադիր-համակարգող:

### **Մրցանակներ՝**

- Jeanie Emerald Star Angel Award - 1998, (“Southern California Motion Picture Council”, Los Angeles),
- Bronze Halo Award – 2000, for outstanding contribution to the entertainment industry and journalism (“Southern California Motion Picture Council”, Los Angeles),
- “Cross of Saint George” (European Academy of Natural Sciences, 2007, Hannover),
- “Albert Schweitzer-Medaille” (European Academy of Natural Sciences, 2012, Hannover).